

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Ռազմավարությունը Հայաստանում

հաստատված Տնօրենների խորհրդի կողմից փետրվարի 2-ին, 2006թ.

Բովանդակություն

Բովանդակություն	Error! Bookmark not defined.
Նախագահի հանձնարարականները	4
Հապավումների ցանկ	8
Ռազմավարությունը երկրում	10
1 ԲԱՆԿԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԸ	10
1.1 Բանկի իրականացրած գործունեության նկարագիր	10
1.2 Ծրագրերի պորտֆելը	12
1.3 2003թ. երկրի ռազմավարության իրականացումը	12
1.4 Ծրագրերի պորտֆելի արդյունավետությունը	14
1.5 Ծրագրերի պորտֆելի կառուցվածքը ըստ մասնավոր և հանրային հատվածներում ներդրումների	14
1.6 Բանկի գործունեության ազդեցությունը անցումային գործընթացի վրա և քաղված դասերը	14
2 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	16
2.1 Բարեփոխումների ընդհանուր միջավայրը	16
2.2 Անցումային գործընթացի առաջընթացը և տնտեսության արձագանքը	20
2.3 Կապիտալի մատչելիությունը (հասանելիությունը)	29
3 ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	31
3.1 Ռազմավարության ժամանակաշրջանում բանկի գերակայությունները	31
3.2 Ճյուղային մարտահրավերները և բանկի նպատակները	31
3.3 Շրջակա միջավայրի պաշտպանություն	36
4 ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ԴՈՆՈՐՆԵՐ	37
4.1 Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ)	37
4.2 Համաշխարհային բանկ	38
4.3 Եվրոպական միություն (ԵՄ)	38
4.4 Առևտրի զարգացման սևծովյան բանկ (ԱԶՍԾԲ)	39
4.5 Զարգացման ասիական բանկ (ԶԱԲ)	40
4.6 Հիմնական երկկողմ ծրագրերը	40
Հավելվածներ	43
Հավելված 1: Բանկի հաստատված գործարքներ և ծրագրերի պորտֆել	44
Հավելված 2: Քաղաքական գնահատում	49
Հավելված 3: Անցումային շրջանի մարտահրավերների գնահատական	57
Հավելված 4: Շրջակա միջավայրի պաշտպանության հարցեր	60

Հավելված 5: Իրավական համակարգի անցումային գործընթաց	62
Հավելված 6: Որոշ տնտեսական ցուցանիշներ	76
Հավելված 7: Տեխնիկական համագործակցության ծրագրեր	78
Հավելված 8: Հայաստանի քարտեզը	82

ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԸ

Հայաստանը հայտարարել է իր հանձնառությունը բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքների նկատմամբ՝ համաձայն Բանկի հիմնադրման համաձայնագրի 1-րդ հոդվածի պայմաններին, չնայած այս սկզբունքների կիրառումը նախորդ ռազմավարական ժամանակաշրջանում այնքան էլ հավասարաչափ չէր: 2003թ. վերջին ընտրություններից ի վեր քաղաքականության մեջ գերակշռող դեր է խաղացել հզոր գործադիր ճյուղը և Ազգային ժողովի՝ նախագահին հարող մեծամասնությունը: Որոշ առաջընթաց է գրանցվել ընտրական օրենսգրքի ժողովրդավարացման, զանգվածային տեղեկատվության միջոցների և տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության բարեփոխման և պետական կառավարման հզորացման ուղղությամբ: Համազգային հանրաքվեի միջոցով ընդունվեցին սահմանադրական բարեփոխումները, որոնք հնարավորություն կտան կիրառել քաղաքական համակարգում զսպումների և հակակշիռների սկզբունքը: Սակայն այս հանձնառությունների իրականացման համար անհրաժեշտ քաղաքական կամքի առկայությունը մնում է բաց հարց: Լեռնային Ղարաբաղի երկարատև հակամարտության լուծման հարցում առաջընթացը դանդաղում է, որը բերում է նրան, որ Հայաստանը մասնակիորեն մեկուսացվում է տարածաշրջանում, որը խոչընդոտում է երկրի տնտեսական աճը և թողնում է երկիրը տարածաշրջանային ծրագրերից ու նախաձեռնություններից դուրս:

Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները բարենպաստ են եղել վերջին տարիներին: Իրական տնտեսական աճը միջինում կազմել է 12.4 տոկոս վերջին երեք տարիների ընթացքում, որի հիմնական շարժիչ ուժը հանդիսացել են շինարարության և ծառայությունների ճյուղերը: Սպառողական ծախսումները զգալիորեն աճել են, որին նպաստել են բարձր եկամուտները և աճող փոխանցումները: Իրականացվել է կոշտ դրամավարկային քաղաքականություն՝ տարեկան սղաճը պահելով միանիշ մակարդակի վրա՝ 1997թ. ի վեր: Հարկաբյուջետային ոլորտը բարելավվել է՝ հարկային եկամուտների աճի և նպատակային ծախսումների բարելավված կառավարման շնորհիվ: Ընթացիկ հաշվի պակասուրդը նվազել է մինչև ՀՆԱ-ի 4.6 տոկոս 2004թ. մասնակիորեն աճող փոխանցումների շնորհիվ: Արտաքին պարտքի իրավիճակը շարունակում է բարելավվել, պարտքի մեծ մասը արտոնյալ պայմաններով է: Սակայն ինչպես հանձնարարվել է ԱՄՀ-ի կողմից, պետական պարտքի շրջահայաց կառավարումը պետք է մնա կառավարման առաջնահերթություններից մեկը, և իշխանությունները պետք է շարունակեն ձեռնպահ մնալ ոչ արտոնյալ պայմաններով փոխառությունների ներգրավումից:

Աղքատության նվազեցումը շարունակում է մնալ երկրի համար գերակայություն: Չնայած կառավարությունը բավական առաջընթաց է արձանագրել Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի իրագործման ոլորտում, և ընդհանուր աղքատության ցուցանիշները նվազել են, այնուամենայնիվ աղքատությունը մնում

է կրիտիկական հարց, հատկապես գյուղական շրջաններում և սոցիալապես խոցելի խմբերում:

Հայաստանը սրընթաց առաջընթաց է արձանագրել մի շարք կառուցվածքային բարեփոխումների ոլորտում՝ ներառյալ գների ու առևտրի ազատականացումը, ինչպես նաև սեփականաշնորհումը: Երկիրը 2003թ. միացել է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և պահպանում է լողացող փոխարժեքի ռեժիմ՝ արժույթի լրիվ փոխարկելիությամբ: Հայաստանում սեփականաշնորհման գործընթացը մոտենում է ավարտին, սակայն հետսեփականաշնորհման ռեստրուկտուրիզացիան և կորպորատիվ կառավարման բարելավումը, *մասնավորապես* հաշվապահական չափորոշիչների բարելավումը և փոքրամասնական բաժնետերերի պաշտպանությունը, դեռևս մնում են կարևոր գերակայություններ: Չնայած կառավարությունը որոշակի առաջընթաց է ապահովել ֆինանսական ոլորտի բարեփոխումների ասպարեզում՝ այն դեռևս համեմատաբար ցածր զարգացման աստիճանի վրա է գտնվում: Բանկային միջնորդավորումը ցածր է համեմատած ԱՊՀ չափանիշների հետ, և կապիտալի շուկայի ծավալը չնչին է: ԱՌԲՆ-ները աճել են 2004-05թթ. մասնավորապես աշխուժանալով Հայաստանում գործարար ծրագրեր իրականացնելու՝ հայկական սփյուռքի հետաքրքրության աճի հաշվին, սակայն այլ ԱՌԲՆ-ները շարունակում են մնալ ցածր մակարդակի վրա: Հիմնական պատճառներից են ներքին շուկայի փոքր ծավալները, բնակչության ցածր գնողունակությունը և տարածաշրջանում երկրի մասնակի մեկուսացումը:

Այս համատեքստում, Հայաստանի անցումային շրջանի հիմնական մարտահրավերներն են. (ա) բարելավել գործարար միջավայրը, այլոց թվում կրճատելով կաշառակերությունն ու կամայականությունը և շեշտադրելով օրենքի գերակայությունը; (բ) շարունակել ֆինանսական հատվածի զարգացման սատարումը՝ բարձրացնելով ֆինանսական միջնորդավորման մակարդակը ինստիտուցիոնալ զարգացման և մրցակցության ուժեղացման, արժեթղթերի շուկայի աշխուժացման համար մեխանիզմների մշակման և ոչ բանկային միջնորդների ու առաջնային հիպոթեկային շուկայի զարգացման համար կարգավորման դաշտում նախադրյալների ստեղծման միջոցով; (գ) արագացնել հետսեփականաշնորհման ռեստրուկտուրիզացիան և բարելավել ձեռնարկությունների հատվածում թափանցիկությունը և կորպորատիվ կառավարումը; (դ) խթանել հանրային ենթակառուցվածքների և ծառայությունների կոմերցիալիզացիան՝ հատուկ շեշտադրելով թափանցիկությունը և կառավարումը, (ե) ապահովել շուկայում մրցակցություն, և (զ) բարելավել հարկային և մաքսային վարչարարությունն ու ապահովել պետական պարտքի կայուն և կենսունակ կառավարում:

2005թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՎՋԵԲ-ը ուներ համեստ պորտֆել՝ 39.3 միլիոն եվրո ընդհանուր ծավալով, 24 ծրագրերով, որոնցից մեծ մասը (60 տոկոս) մասնավոր հատվածում: Նախորդ ռազմավարական ժամանակաշրջանի ընթացքում ՎՋԵԲ-ի գործունեությունը հաստատուն աճ է արձանագրել: Բանկը կայացրել է որոշումներ տրամադրել 10.4 միլիոն եվրո 9 մասնավոր հատվածի

ծրագրերի գծով, և տրամադրել է 340 հազար եվրո տեխնիկական օժանդակության գծով:

Իրագել և ուշադիր լինելով տեղական գործարար միջավայրի խնդիրների նկատմամբ՝ Բանկը պատրաստ է աջակցել Հայաստանում անցումային գործընթացին և կշարունակի խորացնել ու ընդլայնել երկրում իր գործունեության շրջանակները: Հայաստանի մասնակցությունը (ներառումը) Վաղ անցումային երկրների նախաձեռնությանը (ՎԱԵՆ) հանգուցային է Հայաստանում Բանկի ռազմավարության համար, և արդեն որոշ կոնկրետ արդյունքներ են երևան եկել: Բանկը նպատակ կունենա սատարել հիմնականում տեղական մասնավոր հատվածի զարգացումը, այսինքն փոքր և միջին ձեռնարկությունները (ՄՓՁ-ներ և ՓՄՁ-ներ) և բանկային հատվածը:

Հիմնական գործառնական նպատակները կլինեն.

- **Ձեռնարկությունների հատված** – ՎՁԵԲ-ը կշարունակի կենտրոնանալ ՓՄՁ-ների և միկրոձեռնարկությունների ֆինանսավորման ընդլայնման վրա՝ հիմնականում տեղական գործընկեր բանկերի համար վարկային գծերի բացման միջոցով, նաև ուղղակիորեն՝ Բանկի Ուղղակի վարկավորման ծրագրի (ՈՒՎԾ) և Ուղղակի ներդրումների ծրագրի (ՈՒՆԾ) միջոցով, ինչպես նաև Բանկի Միջնաձավալ համաֆինանսավորման ծրագրի (ՄՀՖԾ) շրջանակներում տեղական բանկերի հետ համաֆինանսավորման և և ռիսկերի բաժանման միջոցով: Բանկը կծգտի ընդլայնել միկրովարկավորումը միկրոֆինանսավորում տրամադրող ոչ բանկային միջնորդների հետ համագործակցությամբ, երբ դրանք սկսեն կարգավորվել Կենտրոնական բանկի կողմից: Բանկը կշարունակի ուշադրություն հատկացվել Բանկի ԿԽԾ/ԳԽԾ խորհրդատվական ծրագրերի ընդլայնմանը:
- **Ֆինանսական հատված** - Բանկը կշարունակի սատարել Հայաստանում ֆինանսական միջնորդավորման զարգացմանը և հզորացմանը հայաստանյան ֆինանսական հաստատություններին պարտքային և բաժնեմասնակցային ֆինանսավորման տրամադրման միջոցով: Բանկը կմեծացնի իր աջակցությունը տեղական բանկերի կողմից ՓՄՁ-ների վարկավորման և առևտրի ֆինանսավորման գործունեությանը և կհետապնդի նպատակ ընդլայնելու հայաստանյան բանկերի հետ իր համագործակցության շրջանակը ՄՀՖԾ շրջանակներում համաֆինանսավորման և ռիսկերի բաժանման միջոցով, ինչպես նաև նոր ծառայությունների, ինչպիսիք են՝ հիպոթեքային վարկավորումը, աջակցության միջոցով: Մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորման աճող պահանջների բավարարման տեղական բանկերի կարողությունների հզորացման և անցումային շրջանը արագացնելու նպատակով Բանկը կծգտի իրականացնել բաժնեմասնակցային և քվազի-բաժնեմասնակցային ներդրումներ Հայաստանի լավագույն բանկերում: Այդ նպատակով Բանկը կընդլայնի Հայաստանի Բանկերի ֆինանսավորման ծրագրի (ԲՖԾ) մասշտաբը և ընդգրկումը՝ ներառելու բաժնետոմսեր (բաժնեմասնակցություն) և ստորադաս փոխատվություններ, ինչպես նաև

հիպոթեքային վարկավորում, որը կմեծացնի հաճախորդ բանկերի պահանջներին և կարիքներին արձագանքելու Բանկի կարողությունը: Բանկը նաև կձգտի զարգացնել Հայաստանի ֆինանսական հատվածում իր ներգրավվածությունը ապահովագրական, լիզինգային և միկրովարկավորում տրամադրող կարգավորվող ընկերություններին պարտքային և բաժնեմասնակցային ֆինանսավորման տրամադրման միջոցով:

- **Ենթակառուցվածքներ** – ՎՋԵԲ-ը կօժանդակի վերականգնվող էներգետիկայի և էներգետիկ արդյունավետության վարկունակ ծրագրերին և կդիտարկի տրանսպորտի ոլորտի մասնավոր օպերատորների, ինչպես նաև հանրային կոմունալ ծառայությունների օպերատորների ու կոնցեսիոն կառավարիչ ընկերությունների և տրանսպորտային ենթակառուցվածքների ընկերությունների առանց պետական երաշխիքի առևտրային հիմունքներով ֆինանսավորումը: Միայն բացառիկ դեպքերում ՎՋԵԲ-ը, հնարավոր է, ձգտի ֆինանսավորել պետական երաշխիքով ապահովված ծրագրեր, բայց միայն դրամաշնորհային համաֆինանսավորման նշանակալի բաղադրիչով:

Բանկը կշարունակի ապահովել Շրջակա միջավայրի պաշտպանության Բանկի ընթացակարգերի պահանջներին Հայաստանում ՎՋԵԲ բոլոր գործառնությունների համապատասխանությունը՝ մասնավորապես ապահովելով Շրջակա միջավայրի պաշտպանության Գործողությունների ծրագրերի ներառումը դրանցում, երբ դա հնարավոր է և տեղին: Բանկը կհամագործակցի այլ ՄՖՀ-ների հետ, մասնավորաբար ԱՀՌԾ իրականացման համատեքստում, և համաֆինանսավորման, փոխլրացնող ծրագրերի ու քաղաքական երկխոսության միջոցով: Բանկը կձգտի ներգրավել ավելի մեծ դոնորային դրամաշնորհային ֆինանսավորում Վաղ անցումային երկրների հիմնադրամից, նաև այլ բազմակողմ և երկկողմ դոնորներից՝ որոշ կոնկրետ ներդրումային ծրագրերի մշակման, իրագործման և դրամաշնորհային համաֆինանսավորման օժանդակության նպատակով:

Ես առաջարկում եմ, որը Խորհուրդը հաստատի առաջարկվող Ռազմավարությունը:

Ժան Լեմիեր

Հապավումների ցանկ

ԶԱԲ AMD	Զարգացման ասիական բանկ Հայկական դրամ (Հայաստանի ազգային արժույթ)
ՄՔՀՀԽ ԱՍԳ ԳԽԾ ՀՀ ԿԲ ԱՊՀ ՄՁԴ ՈՒՆԾ ՈՒՎԾ ՎՋԵԲ ԵՀ ԶՄՕԵՀ	Միջազգային քաղաքական հետազոտությունների հայկական խումբ Անցումային շրջանի մարտահրավերների գնահատում Գործարար խորհրդատվության ծրագիր ՀՀ կենտրոնական բանկ Անկախ պետությունների համագործակցություն Միջազգային զարգացման դեպարտամենտ Ուղղակի ներդրումների ծրագիր Ուղղակի վարկավորման ծրագիր Վերակառուցման և զարգացման եվրոպական Եվրոպական հանձնաժողով Զարգացման և մարդասիրական օգնության եվրոպական հանձնաժողով
ԵՀՔ ՎԱԵՆ ԵՄ EUR ԱՈՒՆ ՖՀ ՀՆԱ ՄԻԱՎ/ԶԻԱՀ	Եվրոպական հարևանության քաղաքականություն Վաղ անցումային երկրների նախաձեռնություն Եվրոպական միություն Եվրո Արտասահմանյան ուղղակի ներդրումներ Ֆինանսական հաստատություններ Համախառն ներքին արդյունք Մարդու իմունային անբավարարության վիրուս / Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄՀՀ ՄՁԸ ՄՖԿ ՄՖՀ ԱՄԿ ԱՄՀ ԻՆՈԳԵՅԹ ՄՄԿ ՄՀՃԲ KfW ԱԻԲԹ ԲՖԾ ՀՄՀ ՄՀՖԾ ՄԱԷԿ ՄՖՀ ՄՓԶ ՇՄՊԳԱԾ	Միջազգային հաշվապահական ստանդարտներ Միջազգային զարգացման ընկերակցություն Միջազգային ֆինանսական կորպորացիա Միջազգային ֆինանսական հաստատություն Աշխատանքի միջազգային կազմակերպություն Արժույթի միջազգային հիմնադրամ Նավթի և բնական գազի միջպետական փոխադրում Եվրոպա Միգրացիայի միջազգային կազմակերպություն Միջազգային համագործակցության ճապոնական բանկ Kreditanstalt für Wiederaufban Անցումային իրավական բարեփոխումների թիմ Բանկերի ֆինանսավորման ծրագիր Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ Միջնաժամպալ համաֆինանսավորման ծրագիր Մեծամորի ատոմային էլեկտրակայան Միկրոֆինանսավորում տրամադրող հաստատություն Միկրո և փոքր ձեռնարկություններ Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների ազգային ծրագիր
ԸԿԿ ԶՊԱ ԵԱՀԿ	Ոչ կառավարական կազմակերպություն Զարգացման պաշտոնական աջակցություն Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԱՀԱԾ	Աղքատության հաղթահարման և աճի ծրագիր
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱԱՀ	Ածխածնի առաջնատիպային հիմնադրամ
ՈԱՕ ՄԷՀ	Միացյալ էներգահամակարգեր (ռուսաստանյան էներգետիկ ընկերություն)
Ն	Ներկայացուցչություն
ՀԱԵԿ	Հարավարևելյան Եվրոպա և Կովկաս
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություն
ՏԱՍԻՍ	Տեխնիկական աջակցություն Անկախ պետությունների համագործակցության երկրներին
ԿԽԾ	Կառավարման խորհրդատվության ծրագիր
ԿՀ	Տեխնիկական համագործակցություն
ԱԱԾ	Առևտրի աջակցության ծրագիր
ՏՐԱՍԵԿԱ	Տրանսպորտային միջանցք Եվրոպա-Կովկաս-Ասիա
ՄԱԿԶԾ	ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիր
ՍՏԾ	ԱՄՆ դուլար
ՄՆՄԶԳ	Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ԱպՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ

1 ԲԱՆԿԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԸ

1.1 Բանկի իրականացրած գործունեության նկարագիր

Չնայած ծավալի իմաստով բանկի պորտֆելի գերակշռող մասը (58 տոկոս) կազմում են երեք համեմատաբար մեծ ծրագրերը (Երկուսը՝ պետական երաշխիքով), որոնք ստորագրվել են 1993-2000թթ. ընթացքում (Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ բլոկ, Զվարթնոցի օդանավակայանի բեռնային համալիր և Երևանի կոնյակի գործարան), հետագա տարիների գործունեության մեծ մասը կարելի է վերագրել մի շարք ավելի փոքր գործարքների քանակի աճին, որոնցից շատերը իրականացվել են ՎԱԵՆ և հաստատված ծրագրային համատեքստերի շրջանակներում և հիմնականում նպատակաուղղված էին ՓՄՁ-ներին և ՄՓՁ-ներին: 2005թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 24 գործարքներով պորտֆելի ընդհանուր արժեքը կազմել է 39.3 միլիոն եվրո, որի մեծ մասը (60 տոկոս) իրականացվել է մասնավոր հատվածում, իսկ 40 տոկոսը՝ հանրային հատվածում՝ այսպիսով շրջելով նախորդ տարիների միտումը: Երեք մեծ վարկերը մարվում են՝ այսպիսով ֆինանսավորելով պորտֆելի ավելացումները, որոնք կատարվում են զգալիորեն ավելի փոքր ծրագրերի ձևով: Ներկայումս չհատկացված գումարների մասնաբաժինը կազմում է 15 տոկոս:


Աղյուսակ 1. Հաստատված ծրագրեր և պորտֆել առ սեպտեմբերի 30, 2005թ. (միլիոն եվրո)

Հատված	Ֆինանսավորվող ծրագրեր					Պորտֆելի զուտ արժեք (մնացորդ)			
	Ծրագրերի թիվը	Ծրագրերի ընդհ. արժեքը (գումարը)	ՎՋԵԲ ֆինանսավորում	Տես. կշիռը ՎՋԵԲ ընդհ. ֆին. մեջ, %	Տրամադրված	Պորտֆել	Տես. կշիռը ընդհ. պորտֆելի մեջ, %	Չհատկացված գումարներ	Աշխատող (եկամտաբեր) ակտիվներ
Ֆինանսական հաստատություններ	16	16.7	16.7	16%	11.9	13.9	36%	4.0	9.8
Ենթակառուցվածքներ	3	97.4	66.8	62%	66.1	15.8	40%	0.7	15.1
Էներգետիկա	2	75.5	49.0	46%	48.3	13.2	33%	0.7	12.5
Տրանսպորտ	1	21.9	17.8	16%	17.8	2.6	7%	0.0	2.6
Ձեռնարկությունների աջակցություն	5	55.0	24.0	22%	19.4	9.6	24%	3.3	6.2


Ազդրբիզնես	2	44.1	17.2	16%	17.2	3.7	9%	0.0	3.7
Արդյունաբերություն	3	10.9	6.8	6%	2.2	5.9	15%	3.3	2.5
Ընդհանուր՝ երկրի համար	24	169.1	107.5	100%	97.4	39.3	100%	8.0	31.1

Պորտֆելի զուտ մնացորդի բաշխումը (կառուցվածքը) ըստ ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

Գծանկար 1. Հայաստան. Պորտֆելի բաշխումը (կառուցվածքը) ըստ ճյուղերի



Պորտֆելը մնում է որոշակիորեն շեղված 1990-ականներին ստորագրված հանրային հատվածի երկու վարկերի համեմատաբար մեծ չմարված մնացորդի պատճառով: Նախորդ ռազմավարության ժամանակաշրջանում մասնավոր հատվածում գործունեության ծավալները կտրուկ աճել են 2004թ. կնքված հինգ նոր գործարքների շնորհիվ (տես ստորև ներկայացված գծանկարը):



Կնքված ծրագրերի թվի աճի դրական միտումը շարունակվել է 2005թ. առաջին ինն ամիսների ընթացքում, երբ Բանկը ստորագրեց ինը նոր ծրագրեր (1.1 միլիոն եվրո միջին գումարով), որը նույնպես մատնանշում է Հայաստանում Բանկի գործունեության առաջընթացի արագացումը: Մինչ Հայաստանի տնտեսության զարգացումը առաջ է բերում ֆինանսական միջոցների պահանջարկ, 2004-2005թթ. Բանկի գործունեության կտրուկ աճը Հայաստանում, ներառյալ առողջ ծրագրային փաթեթը, վերագրվում է նաև ՎԱԵ նախաձեռնության ազդեցությանը:

1.2 Ծրագրերի Պորտֆելը

2005թ. Պորտֆելի նախատեսվող փաթեթը զգալիորեն ավելի դիվերսիֆիկացված և բազմազան է տարբեր ճյուղերով, քան ներկա պորտֆելը, և արտացոլում է ՎԱԵ նախաձեռնության կողմից ընձեռված լրացուցիչ հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի արագ աճող տնտեսությունը: Ի լրումն ֆինանսական հատվածում աճող գործունեությանը՝ ներկայացված են նաև ագրոբիզնեսը, բնական ռեսուրսները, արդյունաբերությունը, էներգետիկան և ենթակառուցվածքները:

1.3 2003թ. երկրի ռազմավարության իրականացումը

Երկրի նախորդ ռազմավարության իրականացումը (2003թ. վերջից մինչ օրս) օգտվել է ՎԱԵ նախաձեռնության հնարավորություններից, մասնավորապես ավելի ուշ շրջանում (2005թ.), քանի որ նոր ՎԱԵՆ գործիքները (ՈԻՆԾ, ՈԻՎԾ, ՄՀՖԾ) Բանկին հնարավորություն են տալիս սկսելու Հայաստանի մասնավոր հատվածի ուղղակի ֆինանսավորում, ինչպես նաև ընդլայնել համագործակցությունը Հայաստանի ֆինանսական հատվածի հետ հետևյալ կերպ.

- **Ձեռնարկությունների հատված.** Ինչպես նախատեսված է Ռազմավարությունում, ՎՋԵԲ նոր հանձնառությունները գլխավորապես ուղղորդվել են դեպի ձեռնարկությունների հատված տեղական բանկերի միջոցով, որոնք գործել են որպես ՓՄՁ-երին ուղղվող Բանկի միջոցների առաջնային խողովակ: Միջոցները հիմնականում տրամադրվել են Հայաստանյան Բանկերի ֆինանսավորման ծրագրի (ԲՖԾ) շրջանակներում՝ ՓՄՁ-ների հետագա վարկավորման նպատակով: Գործընկեր բանկերի գործունեության արդյունավետությունը գերազանց էր՝ չաշխատող վարկերի փոքր բաժնեմասով: Երկու ձեռնարկություններ ուղղակիորեն ֆինանսավորվել են ՈՒՆԾ և ՈՒՎԾ միջոցով: Բանկի ԳԽԾ և ԿԽԾ ծրագրերը խորհրդատվություն են տրամադրել 7 ծրագրերի ԿԽԾ շրջանակներում և 43 ծրագրերի ԳԽԾ շրջանակներում, ներառյալ 15-ը՝ շրջաններում, արդյունաբերության տարբեր ճյուղերից:
- **Ֆինանսական հատված.** Ռազմավարության ժամանակաշրջանի ընթացքում չորս բանկերի համար բացվել են վարկային գծեր ԲՖԾ շրջանակներում, և ևս երեք բանկեր աջակցություն են ստացել Առևտրի ֆինանսավորման տարածաշրջանային ծրագրի (ԱՖԾ) շրջանակներում: Բանկը ձեռք է բերել Հայէկոնոմբանկի՝ Հայաստանի հինգերորդ խոշոր առևտրային բանկի բաժնետոմսերի 25 տոկոսը 2004թ.: Հակառակ սպասումների՝ նվազագույն կապիտալի պահանջների բարձրացումը դեռևս չի առաջացրել միավորումների (միաձուլումների) և կլանումների ալիք բանկային հատվածում, մինչդեռ հիպոթեքային վարկավորման ինստիտուցիոնալ համատեքստը դեռևս զարգացման փուլում է: Ռիսկի բաժանման հնարավորությունները վեր են հանվել, և ՄՀՖԾ ծրագիր է ստորագրվել ՀԳՓԲ-ի հետ, իսկ դրա ստորագրումը Հայէկոնոմբանկի հետ ընթացքի մեջ է:
- **Էներգետիկա.** Բանկը շարունակել է զարգացնել իր մոտեցումները Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ֆինանսավորման նկատմամբ: Նման մի ծրագիր՝ փոքր, անկախ հիդրոէլեկտրակայանի ՈՒՎԾ-ով ֆինանսավորում 1.5 միլիոն եվրո ծավալով, հաստատվել է 2005թ.:

Ենթակառուցվածքների հատվածում ռազմավարության ժամանակահատվածում ոչ մի նոր գործարք չի կնքվել ոչ տրանսպորտի, ոչ էլ քաղաքային ու շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների ոլորտում: Ենթակառուցվածքային ծրագրերի համար չեն տրվել պետական երաշխիքներ: Բանկը ուսումնասիրել է որոշակի հնարավորություններ հանրային ծառայությունների առանց պետական երաշխիքների, առևտրային ֆինանսավորման ուղղությամբ, ներառյալ հնարավոր մասնակցությունը Ջվարթնոց միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի ֆինանսավորմանը: ՎՋԵԲ-ը նաև նախնական բանակցություններ է տարել Երևանի քաղաքապետարանի հետ հանրային տրանսպորտի ոլորտում հնարավոր ծրագրի վերաբերյալ:

1.4 Ծրագրերի պորտֆելի արդյունավետությունը

Հայաստանում ՎՋԵԲ-ի ներկայիս պորտֆելը ունի միջին կշռված ծրագրային ռիսկի ցուցանիշի 6.30 արժեք՝ համեմատած ամբողջ Բանկի համար այդ ցուցանիշի 5.48 արժեքի հետ: Բացառությամբ պետական երաշխիքով երկու ենթակառուցվածքային վարկերի (Զվարթնոց օդանավակայանի բեռնահամալիր և Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ բլոկ), որոնք դժվարություններ են ունեցել, պորտֆելի արդյունավետությունը բավարար է եղել: Բեռնահամալիրի շահագործման մակարդակը մնում է նախատեսվածից զգալիորեն ցածր, սակայն օդանավակայանի նոր մասնավոր օպերատորը դե ֆակտո իր վրա է վերցրել վարկի սպասարկումն ու մարումը և աշխատելու է համալիրի շահագործման մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ բլոկը մնում է անավարտ, և ռուսաստանյան ՌԱՕ ՄԷՀ-ին կամ իրանական ընկերությանը վաճառքը քննարկվում է կառավարությունում:

1.5 Ծրագրերի պորտֆելի կառուցվածքը ըստ մասնավոր և հանրային հատվածներում ներդրումների

Մասնավոր հատվածում ներդրումները կազմում են Հայաստանում բանկի պորտֆելի 60 տոկոսը: Հանրային հատվածի ծրագրերի բաժինը հավանաբար ավելի կնվազի ներկայիս 40 տոկոսից, քանի որ պետական երաշխիքով ապահովված Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ բլոկի և Բեռնահամալիրի ծրագրերը շարունակում են մարվել:

1.6 Բանկի գործունեության ազդեցությունը անցումային գործընթացի վրա և քաղված դասերը

Անցումային գործընթաց

Բանկի՝ անցումային գործընթացի վրա ազդեցությունը նախորդ ռազմավարության ժամանակաշրջանում ավելի բարձր էր, քան նախկինում՝ մասնավորապես ՓՄՁ-ների նկատմամբ աճած հետաքրքրության շնորհիվ, որոնք հանդիսանում են Հայաստանի տնտեսության շարժիչ ուժը: ՎՋԵԲ-ի գործառնությունները ֆինանսական հատվածում օժանդակել են տեղական բանկերի ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների զարգացմանը, մինչ ՓՄՁ-ների համար նեժացել է աճող գործարարության համար անհրաժեշտ միջնաժամկետ միջոցների մատչելիությունը: Հայէկոնոմբանկում Բանկի բաժնեմասնակցությունը ընդլայնել է այդ բանկի հնարավորությունը՝ մատուցելու ծառայություններ հայկական ընկերություններին ու սպառողներին՝ ամրապնդված կորպորատիվ կառավարման պայմաններում:

Ֆինանսական հատվածից դուրս Բանկի բաժնեմասնակցային ներդրումը Շեն կոնցեռնում բարելավել է այդ ընկերության կորպորատիվ կառավարումը՝

ամրապնդելով նրա մրցակցային դիրքը, ներառյալ շուկայավարմանն ու ֆինանսական կառավարմանն ուղղված աճած ուշադրության միջոցով: Բազենք ընկերությանը (փոքր հիդրոէլեկտրակայան) վերջերս հաստատված վարկը վերականգնվող էներգետիկայի ոլորտի անկախ ընկերության տրամադրված առաջին վարկն է:

Նախորդ ռազմավարական ժամանակաշրջանի ընթացքում Բանկը շարունակել է կառավարության հետ քաղաքականության շուրջ տարվող երկխոսությունը, որն ուղղված էր Հայաստանի գործարար միջավայրի բարելավմանը մասնավոր հատվածի համար, ներառյալ անդրադարձն այնպիսի հիմնախնդիրների, ինչպիսիք են ԱԱՀ վերադարձը, ինչպես նաև կորպորատիվ կառավարման ամրապնդումը, մասնավորապես ֆինանսական հատվածում: Բանկը համակարգել է իր երկխոսությունը այլ ՄՖՀ-ների հետ՝ ըստ նպատակահարմարության:

Քաղած դասեր

Չնայած նախորդ ռազմավարական շրջանում ստորագրված ոչ մի ծրագիր չի անցել ԾԳԲ (Ծրագրերի գնահատման բաժին) ուսումնասիրություններ, կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակացությունները.

- **Հստակ նպատակադրմամբ մոտեցում:** Կարևոր է հասկանալ, որ չնայած Բանկի ծրագրերը Հայաստանում ծածկում են մի շարք ճյուղեր, այս փոքր երկիրը ի վիճակի չէ առաջարկել պատրաստի հնարավորություններ այն բոլոր ճյուղերում, որոնցում Բանկը գործում է: Այնպիսի ճյուղերի շեշտադրումը, որտեղ արդյունքների կարելի է հասնել կարճաժամկետ կամ միջնաժամկետ կտրվածքով, կլինի ամենաարդյունավետ տարբերակը՝ միևնույն ժամանակ մյուս ճյուղերի նկատմամբ պահպանելով երկարաժամկետ մոտեցումներ, որոնք կարտահայտվեն հետևողական քաղաքական երկխոսությունում:
- **Ապավինում ուժեղ տեղական գործընկերներին:** Լայնամասշտաբ ԱՌԽ հոսքերի անհապաղ ակնկալիքները համեստ են, որը Բանկին սահմանափակ հնարավորություն է տալիս աշխատելու առաջնակարգ և վարկարժան ռազմավարական ներդրողների հետ: Ուժեղ տեղական գործընկերներին վերհանելու ունակությունը, ինչպես նաև միջազգային մակարդակի գործարարների հետ աշխատանքն ու տեղական բանկերի հետ սերտ համագործակցությունը կարևորագույն դեր են խաղացել Հայաստանում Բանկի հիմնական գործունեության մեջ:
- **Տեղական և միջազգային գործընկերների ճիշտ ընտրություն:** Հայաստանի մասնավոր հատվածում, մասնավորապես ՓՄՁ-ներում, Բանկի աճող մասնակցությունը վերջինիս դարձնում է ենթակա ունիվերսալ ռիսկերի, որոնք կապված են մասնավոր ընկերություններին ու ձեռնարկատերերին տրամադրվող վարկերի հետ, ընդ որում այդ ռիսկերի մի մասը դժվար է հաղթահարել Հայաստանում: Այդ պատճառով պետք է շարունակել խիստ

ուշադրություն դարձնել գործարար բարելավումները և ազնվությանը, կառավարման կարողություններին, անհատներին և կառավարման փոխանցմանը մեծ ձեռնարկություններում:

- **Պարզության պահպանում:** Չնայած հայաստանյան ռիսկային շուկայում կարևոր է զգոն վարկավորման սկզբունքների պահպանումը, չափից ավելի բարդ կառույցները և ընթացակարգերը երբեմն շփոթեցնում են հաճախորդին, ուշացնում գործարքների կնքումը ու արդյունքում բերում հաճախորդների կողմից հետաքրքրության կորստի, մինչդեռ այս ամենը ոչ միշտ է բերում Բանկի համար լրացուցիչ պաշտպանվածության:

2 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ

2.1 Բարեփոխումների ընդհանուր միջավայրը

2.1.1 Քաղաքական զարգացումներ

2003թ. նախագահական ընտրությունների անցկացումը, որում ներկա նախագահ Ռոբերտ Քոչարյանը եկավ իշխանության երկրորդ և վերջին ժամկետով, խիստ քննադատության էր ենթարկվել Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից: Ընտրությունները լարվածություն առաջացրին իշխանությունների և ընդդիմության, ինչպես նաև պետության և հասարակության միջև, որը շարունակվում է վերջին երկուսուկես տարվա ընթացքում: Ընդդիմադիր կուսակցությունները շարունակում են իրենց բողոքները ընտրությունների իրականացման և արդյունքների վերաբերյալ, մասնավորապես լայնամասշտաբ ցույցերի միջոցով, որոնք անցակցվել են Երևանում 2004թ. մարտից հունիսը: Ապրիլին կայացած մի ցույցի ժամանակ բռնություններ տեղ գտան, երբ զինված ոստիկանության ջոկատներն ուժ գործադրեցին նախագահական նստավայրի մոտ հավաքված ցուցարարների դեմ: Տասնյակ մարդիկ ստացան մարմնական վնասվածքներ և մոտ 250 ցուցարարներ ձերբակալվեցին՝ ըստ ընդդիմության ակտիվիստների տվյալների: Խորհրդարանի չորս ընդդիմադիր անդամներ կալանավորվեցին, սակայն հետագայում ազատ արձակվեցին: Եվրոպայի Խորհուրդը և ԵԱՀԿ-ը քննադատեցին իշխանությանը ընդդիմության, ՋԼՄ-ների և մարդու իրավունքների պաշտպանների դեմ ուժի և ահաբեկման կիրառման համար:

2004թ. ապրիլյան իրադարձություններից ի վեր քաղաքական իրավիճակը բարելավվել է, չնայած ընդդիմությունը շարունակում է խորհրդարանում բոյկոտը և պահանջում նախագահի հրաժարականը: Իշխանությունը շարունակում է կառավարել առանց ընդդիմադիր պատգամավորների մասնակցության, չնայած այն քաղաքական գործընթացները զրկել է անհրաժեշտ բանավեճից ու կենսունակությունից: Ավելին, իշխանությունների և ընդդիմության միջև երկարատև հակամարտությունը կենդանի է պահել 2003թ. ընտրությունների արդյունքների

լեգիտիմության հարցը, որը թուլացնում է հասարակության վստահությունը և աջակցությունը քաղաքական առաջնորդներին և հաստատություններին:

Կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել քաղաքական ու հանրային ինստիտուտների բարեփոխման ուղղությամբ և ամրագրել է 2005թ. բարեփոխումների ծրագիրը, որը ներառում է օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորման դաշտի հետագա բարեփոխումներ, ինչպես նաև կորպորատիվ կառավարման ամրապնդում: Կոալիցիոն կառավարություն և խորհրդարանական մեծամասնություն կազմող՝ նախագահին հարող կուսակցությունների միջև համաձայնության ապահովման դժվարությունները հանդիսացել են բարեփոխումների արագացման հիմնական խոչընդոտ: Բարեփոխումներն արդյունավետ կերպով իրականացնելու քաղաքական կամքը նույնպես պակաս է եղել որոշ ոլորտներում:

Ավելի մանրամասն քաղաքական գնահատման համար տես Հավելված 2:

2.1.2 Իրավական բարեփոխումներ

Հայաստանը վերջերս է արագացրել օրենսդրական բարեփոխումների ուղղությամբ գործադրվող ջանքերը, սակայն շարունակում է զգալի դժվարություններ ունենալ այնպիսի իրավական նորմերի, հաստատությունների ու մշակույթի ապահովման գործում, որից կախված է լինելու նրա հաջող անցումը շուկայական տնտեսության: Ավելին, օրենքների կիրառումը շարունակում է հետ մնալ օրենսդրական բարեփոխումներից՝ դրանով խոչընդոտելով նման նոր օրենսդրության ազդեցության տարածմանը:

Չնայած առևտրային գործունեության վերաբերյալ օրենսդրությունը բարելավվել է՝ և առանձին օրենքների որակը, և դրանց կիրարկումը ցածր են միջազգայնորեն ընդունված չափանիշներից: Այս գնահատականը ճիշտ է բոլոր հիմնական օրենքների վերաբերյալ, որոնց նպատակն է սատարել ներդրումները՝ լինեն դրանք արտաքին թե տեղական, ուղղակի թե անուղղակի, չնայած անհրաժեշտ բարեփոխումները տարբեր են այս տեսակների համար:

Կարևոր է նշել, որ Հայաստանում ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովման վրա ուղղակիորեն ազդեցություն ունեցող առևտրային գործունեությունը կարգավորող հիմնական օրենքների (օրինակ՝ կորպորատիվ կառավարմանը վերաբերող օրենսդրությունը) վերլուծությունը ցույց է տալիս, որ նույնիսկ համեմատաբար լավ օրենքները երբեմն չեն կիրառվում: ՎՋԵԲ կողմից իրականացված ուսումնասիրությունները հաստատում են, որ առևտրային գործունեությանը վերաբերող օրենքները բավարար չափով մատչելի չեն հասարակության համար կամ չեն ստանում բավարար վարչական և դատաիրավական աջակցություն: Կիրառման այս ձեղքվածքը բերում է կոնկրետ օրենքների կիրառման հնարավորությունների թուլացմանը և նվազեցնում հայ և արտերկրի ներդրողների ու գործարարների վստահությունը ամբողջ իրավական

համակարգի նկատմամբ և մասնավորապես պայմանագրով սահմանված իրենց իրավունքները պաշտպանելու դրա հնարավորությունների նկատմամբ:

Այնուամենայնիվ, վերջին մի քանի տարիների ընթացքում որոշակի առաջընթաց է գրանցվել օրենսդրական և կարգավորման դաշտի բարեփոխումների ասպարեզում, մասնավորապես ֆինանսական հատվածում: Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը փոփոխվել է 2004թ., մասնավորապես նվազեցնելով ինսայդերական գործունեությունը (առևտուրը), ակտիվների մասնատումը և ընդհանրապես ամրապնդելով փոքր բաժնետերերի իրավունքները: 2004թ. ապրիլին հաստատվեց Աուդիտի մասին նոր օրենքը, 2004թ. ապրիլին փոփոխվեց Սնանկացման մասին օրենքը, 2004թ. հունիսին փոփոխվեց Ապահովագրության մասին օրենքը, 2004թ. հոկտեմբերին վերանայվեց Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին օրենքը, 2005թ. հունվարին ընդունվեց Փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենքը, 2005 հուլիսին սկսվեց կիրառվել ավանդների ապահովագրման սխեման: Առևտրային բանկերի համար նվազագույն կապիտալի պահանջները բարձրացվեցին՝ փորձելով արագացնել և աջակցել այս հատվածում կոնսոլիդացիան (համախմբումը): Շարունակվում են փորձերը պարզեցնելու հարկային համակարգը, արտահանողներին ԱԱՀ վերադարձման վարչարարությունը բարելավվել է: Հայաստանը միացավ ԱՀԿ-ին, իսկ վերջերս ստեղծված Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը աշխատում է դինամիկ և արդյունավետ:

Ավելի մանրամասն օրենսդրական բարեփոխումների գնահատման համար տես Հավելված 5.

2.1.3 Սոցիալական և աշխատանքային հարցերին առնչվող հիմնախնդիրներ

Հայաստանը ազգային իմաստով միատարր 3.1 միլիոն բնակչություն ունի, որը տարեկան 0.4 տոկոսի¹ նվազում է արձանագրում, հիմնականում արտագաղթի արդյունքում, որը մասնակիորեն նվազեցրել է երկրի մարդկային կապիտալը: 1990թ. ի վեր բնակչության ընդհանուր նվազումը գնահատված է 21 տոկոս, որի մեծ մասը վերագրվում է աշխատանքային տարիքի անձանց արտագաղթին:

Աղքատության հաղթահարան ռազմավարական ծրագրի տվյալները (2002թ.) ցույց են տալիս, որ աղքատության ցուցանիշը 1998թ. 55 տոկոսից հասել է 51 տոկոսի՝ 2002թ. (գնահատված է, որ 2005թ. այն ավելի կնվազի ու կհասնի 43 տոկոսի), իսկ ծայրահեղ աղքատության ցուցանիշը 27 տոկոսից իջել է 21 տոկոս: Սակայն այս բարելավումների մեծ մասը տեղի է ունեցել քաղաքային բնակչության շրջանում, իսկ գյուղական բնակչության շրջանում աղքատությունը (բնակչության 36 տոկոս) մնացել է բարձր: Հայաստանը հավանաբար կհասնի Հազարամյակի զարգացման միայն մեկ նպատակի, այն է՝ մայրական մահացության ցուցանիշի իջեցմանը, իսկ դպրոցներում երեխաների ներգրավվածության, մանկական մահացության և

¹ Համաշխարհային բանկ. Երկրին տրամադրվող օժանդակության գնահատում. Հայաստան, հունիսի 15, 2004թ.: Հաշվետվություն թիվ 29335:

ՄԻԱԿ/ՁԻԱՀ ու տուբերկուլյոզի տարածվածության ցուցանիշների իջեցման նպատակներին հասնելու հավանականությունը բավականին ցածր է²:

Եկամուտների անհավասարությունը նվազել է՝ հասնելով Ջինի 0.52 գործակցին 2001թ. և ըստ Ազգային վիճակագրական ծառայության գնահատականների՝ նվազել է նաև 2004-2005թթ.՝ հասնելով 0.387, սակայն Հայաստանում եկամուտների անհավասարությունը ամենաբարձրն է եվրոպական ու Կենտրոնական Ասիայի երկրների շրջանում³:

Չնայած հայկական օրենսդրությունը կանանց ու տղամարդկանց հավասար կարգավիճակ է շնորհում, ներառյալ նույնանման աշխատանքի համար հավասար աշխատավարձը, սեռային խտրականությունը շարունակում է մնալ կարևոր հիմնախնդիր հասարակական ու մասնավոր հատվածում: Երևանում վերջերս անցկացված մի ուսումնասիրություն ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ կանայք վաստակել են տղամարդկանց վաստակածի 40 տոկոսի չափ եկամուտ⁴:

Հայաստանը Աշխատանքի միջազգային կազմակերպության անդամ երկիր է, սակայն չի վավերացրել բոլոր հիմնական հռչակագրերը, ներառյալ մանկական աշխատանքին ու հարկադրական աշխատանքին առնչվողները: Համաձայն օրենքի՝ աշխատանքային նվազագույն տարիքը 16 տարեկանն է: Որոշ դեպքերում, սակայն, երեխայի ծնողների ու արհմիության համաձայնությամբ՝ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից՝ անվտանգ աշխատանքային պայմաններում: Օրենքը անհավասարաչափ է կիրառվել տեղական ինքնակառավարման մարմինների, զբաղվածության համար պատասխանատու մարմինների և դատարանների կողմից: Արգելվում է 18 տարեկանից ցածր երեխաներին աշխատեցնել արտաժամյա աշխատանքում, վտանգավոր կամ վնասակար պայմաններում, գիշերը կամ տոն օրերին: Գոյություն ունեն իրավական ու սահմանադրական դրույթներ, որոնք արգելում են հարկադրված աշխատանքը, հայտնի չեն դրա մասին տեղեկություններ, բացի մարմնավաճառության նպատակով թրաֆիքինգի դեպքերից:

Օրենքն արգելում է մարդկանց թրաֆիքինգը, և «շահադիտական (շահագործման) նպատակներով» իրականացված օրինախախտումները հանդիսանում են քրեական հանցագործություններ՝ համաձայն օրենքի, որն ուժի մեջ է 2003թ. օգոստոսից: Սակայն մարդկանց թրաֆիքինգը՝ Հայաստանից, դրա տարածքով և դեպի Հայաստան, մնում է կարևոր հիմնախնդիր: Իշխանությունները հայտնում են, որ երկիրը հանդիսանում է աղբյուր և տարանցիկ կետ կանանց թրաֆիքինգի համար՝ հիմնականում արտասահմանում սեռական շահագործման ենթարկելու նպատակով: Հայտնի են տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ Հայաստանը նաև

² Հազարամյակի զարգացման նպատակներ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջան, Համաշխարհային բանկ, սեպտեմբեր, 2003թ., էջ 7:

³ Համաշխարհային բանկ, ԱՀՌԾ, հոկտեմբերի 2003թ.:

⁴ ԱՄՆ պետքարտուղարություն: Երկրներում Մարդու իրավունքների պրակտիկայի վերաբերյալ հաշվետվություններ – 2004թ., Հայաստան:

հանդիսանում է ԱՊՀ այլ երկրներից բերվող, թրաֆիքինգի ենթարկված կանանց համար որպես ընդունող երկիր:

2.2 Անցումային գործընթացի առաջընթացը և տնտեսության արձագանքը

2.2.1 Բանկի գործունեության մակրոտնտեսական պայմանները

Տնտեսությունը նախորդ ռազմավարական ժամանակաշրջանում զգալի առաջընթաց է գրանցել: Իրական աճի ցուցանիշը վերջին երեք տարիների ընթացքում միջինում կազմել է 12.4 տոկոս, և երկիրը հասել է 1989թ. ՀՆԱ-ի մակարդակին: Վերջին տարիների աճը հիմնականում տեղի է ունեցել շինարարության և ծառայությունների հատվածի աճի շնորհիվ, իսկ սպառողական ծախսումների աճի հիմնական պատճառն է հանդիսացել աճող եկամուտները և փոխանցումները: Արտաքին ուղղակի ներդրումները, որոնք զգալիորեն ավելացել են վերջին տարիներին, նույնպես նպաստել են արտադրողականության աճին: Գյուղատնտեսությունը 2004թ. վերականգնվել է՝ արձանագրելով 14.5 տոկոս իրական աճ, և աճի տեմպերը շարունակվել են 2005թ. ընթացքում (10.2 տոկոս աճ առաջին ինն ամիսների ընթացքում): Սակայն ադամանդի վերամշակման երբեմնի ծաղկող հատվածի աճը նվազել է՝ հիմնականում 2004թ. ի վեր Ռուսաստանից ադամանդի էժանագին հումքի մատակարարման հետ կապված դժվարությունների պատճառով և դեռևս լրիվ չի վերականգնվել: Իրական ՀՆԱ-ը աճել է 12.2 տոկոսով 2005թ. առաջին տասն ամիսների ընթացքում՝ ցույց տալով, որ այս տարվա աճի տեմպերը պահպանել են անցյալ տարիների միտումները:

Վերջին երկու տարիների ընթացքում դրամավարկային քաղաքականության միջավայրը անբարենպաստ է եղել, մասնավորապես սննդի և նավթի գների անկայունության, շարունակվող մասնավոր տրանսֆերտների հոսքի և արժույթի արժևորման պատճառով: Նման հանգամանքներում ՀՀ Կենտրոնական բանկը (ԿԲ) իրականացրել է զգոն դրամավարկային քաղաքականություն՝ կենտրոնանալով գների կայունության վրա: Սղաճի ցուցանիշը 2003թ. վերջի 8.6 տոկոսից նվազել է 0.5 տոկոս 2005թ. սեպտեմբերի դրությամբ: ՀՀ ԿԲ-ը նաև ջանքեր է գործադրել ընդլայնելու իր քաղաքականության գործիքները, օրինակ, թողարկելով սեփական պարտատոմսեր ներքին շուկայում տեղաբաշխման և շրջանառության համար: ՀՀ ԿԲ-ը վերջերս հայտարարել է, որ լիակատար անցում կկատարի սղաճի՝ որպես նպատակի սահմանմանը և կառավարմանը 2006-07թթ. ընթացքում՝ սղաճի 3 տոկոս առավելագույն նշանակետային սահմանաչափով:

Հարկաբյուջետային քաղաքականությունը շարունակում է մնալ կայուն: Ծախսումները կառավարվել են կոշտ ձևով՝ սոցիալական հատվածի ծախսումների և աշխատավարձերի սահմանափակ աճով: 2005թ. զգալիորեն աճել են հարկային եկամուտները: Հարկային մուտքերը ավելացել են 21 տոկոսով ԱԱՀ-ի գծով, 28 տոկոսով եկամտահարկի գծով և 40 տոկոսով մաքսատուրքերի գծով հունվար-մայիս ամիսների ընթացքում՝ համեմատած անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի հետ: Շրջանառությունից գանձվող նոր մեկ տոկոս դրույքաչափով հարկը, որը ներուծվել էր 2004թ., փորձելով պայքարել ստվերային

տնտեսության և հարկերից խուսափման դեմ, նույնպես բերել է հարկային եկամուտների աճի: Իշխանությունները սկսել են հրապարակել 300 ամենամեծ հարկատուների անունները՝ փորձելով ավելացնել հարկային համակարգի թափանցիկությունը: Արտացուցիկ այս փոփոխությունները, բյուջեի պակասուրդը նվազելով հասել է ՀՆԱ-ի 1.7 տոկոսին 2004թ., և մինչև 2005թ. օգոստոսը գրանցվել է բյուջեի ավելցուկ: Հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը մնում է ցածր՝ մոտավորապես 15 տոկոս, որը, սակայն, մասնակի արդյունք էր հանդիսանում այն բանի, որ արդյունաբերության աճող ձյուղերը, ինչպես օրինակ, արտասահմանից ֆինանսավորվող շինարարությունը և արտաքին ներդրումները, չեն հարկվում: Ավելին, հարկային և մաքսային վարչարարությունը մնում է թույլ, մասնավորապես կան մտահոգություններ հարկային աուդիտի բացակայության, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակի, իշխանությունների միջև տեղեկատվության փոխանցման, եկամուտների հայտարարագրման գործընթացի բացակայության և կաշառակերության վերաբերյալ: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ կառավարությունը փորձում է անցկացնել հարկային և մաքսային վարչարարության տեխնիկական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

Վերջին երկու տարիների ընթացքում հայկական դրամը զգալիորեն արժևորվել է՝ շնորհիվ փոխանցումների մեծ ծավալների և ազգային արժույթի նկատմամբ աճող վստահության: Չնայած շարունակական արժևորմանը՝ արտահանումը շարունակում է աճել արագ տեմպերով (բացառությամբ ադամանդների արտահանման): Ներմուծումը նույնպես աճել է 11.8 տոկոսով (բացառությամբ ադամանդի հումքի) 2004թ. ընթացքում, հիմնականում արտասահմանյան սպառողական ապրանքների և շինարարության համար նյութերի ու սարքավորումների ձեռքբերման գծով ավելացած ծախսերի շնորհիվ: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը շարունակում է մնալ մեծ (ՀՆԱ-ի 13 տոկոս 2004թ.), սակայն շարունակում է փոխհատուցվել տրանսֆերտների զգալի ծավալներով: Արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը շարունակում է մնալ միջին մակարդակի վրա՝ ՀՆԱ-ի 4.6 տոկոս: Ըստ ՀՀ ԿԲ-ի՝ մասնավոր տրանսֆերտները, ներառյալ ոչ ֆորմալ ձանապարհով տրանսֆերտները, աճել են ավելի քան 50 տոկոսով 2004թ.՝ հասնելով 740 միլիոն ԱՄՆ դոլարի (հիմնականում Ռուսաստանից):⁵

Հայաստանի արտաքին պարտքի ընդհանուր մեծությունը ներկայումս կազմում է 1.2 միլիարդ ԱՄՆ դոլար կամ 2005թ. ՀՆԱ-ի 26 տոկոս, որը ցածր է այլ ՎԱԵ-ների մակարդակից՝ Ադրբեջանի հնարավոր բացառությամբ: Պարտքը արտոնյալ պայմաններով է, իսկ պարտքի սպասարկումը կազմում է բյուջեի ծախսերի ընդամենը 9 տոկոս, որը ԱՄՀ-ը գնահատել է որպես կայուն մակարդակ: Այնուամենայնիվ, պարտքի մակարդակը շարունակում է մնալ համեմատաբար

⁵ Վճարային հաշվեկշռի վիճակագրությունը (269 միլիոն ԱՄՆ դոլար 2004թ. ընթացքում) արտացուցում է միայն բանկային համակարգով կատարված փոխանցումները և չի արտացուցում արտերկրում աշխատողների կողմից բերված կանխիկ դրամը և այլ ոչ ֆորմալ ձանապարհներով դրամի փոխանցումները: ՀՀ ԿԲ-ը նույնպես սպասում է 2005թ. փոխանցումների ծավալի աճ՝ նախնական գնահատականներով հասնելով մոտ 1 միլիարդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի մոտ 21 տոկոս):

բարձր բյուջեի եկամուտների նկատմամբ (բյուջեի եկամտային մասի 15 տոկոսից ավելի), և այս պատճառով անհրաժեշտ է պահպանել նոր պարտքի ձևավորման խիստ կանոններ: Իշխանությունները շարունակում են ձեռնպահ մնալ նոր ոչ արտոնյալ պայմաններով պարտքերի ներգրավումից, սակայն հնարավոր է, որ նորից սկսվի ոչ արտոնյալ պայմաններով պետական երաշխիքով վարկավորում այս ռազմավարական ժամանակաշրջանի ընթացքում:

2.2.2. Անցման գործընթացի առաջընթացը և խնդիրները

Հայաստանը համեմատաբար լավ առաջընթաց է ապրել ազատականացման և կառուցվածքային բարեփոխումների ոլորտում՝ համեմատած ԱՊՀ այլ անցումային երկրների հետ: Սա արտացոլված է Բանկի կողմից մշակված և տարեկան Անցումային շրջանի մասին հաշվետվության մեջ հրապարակված անցումային շրջանին վերաբերող ցուցանիշներում (տես Աղյուսակ 2-1): Ամենամեծ առաջընթացը գրանցվել է սեփականաշնորհման և շուկաների ազատականացման ոլորտներում: Այլ ուղղություններով անցումային շրջանի ձեռքբերումները ֆինանսական հաստատությունների և այլ ենթակառուցվածքային ոլորտներում դեռևս չեն համապատասխանում ՎՋԵԲ միջին ցուցանիշներին, այնուամենայնիվ բարձր են ԱՊՀ միջին ցուցանիշից:

Աղյուսակ 2.1 ԱՊՀ երկրների անցումային ցուցանիշները, 2005թ.

Երկրներ	Չեռնարկություններ			Շուկաներ և առևտուր			Ֆինանսական հաստատություններ		Ենթակառուցվածքների բարեփոխումներ
	Մեծ ձեռնարկությունների սեփականաշնորհում	Փոքր ձեռնարկությունների սեփականաշնորհում	Կառավարում և ձեռնարկությունների ռեստրուկտուրիզացիա	Գների ազատականացում	Առևտուր և արժույթային կարգավորում	Մրցակցության խթանման քաղաքականություն	Բանկային ոլորտի բարեփոխումներ և տոկոսադրույքի ազատականացում	Արժեթղթերի շուկաներ և ոչ բանկային ֆինանսական հաստատություններ	
Հայաստան	4-	4	2+	4+	4+	2+	3-	2	2+
Ադրբեջան	2	4-	2+	4	4	2	2+	2-	2
Բելառուս	1	2+	1	3-	2+	2	2-	2	1+
Վրաստան	4-	4	2+	4+	4+	2	3-	2-	2+
Ղազախստան	3	4	2	4	3+	2	3	2+	2+
Ղրղզստան	4-	4	2	4+	4+	2	2+	2	2-
Սոլովովա	3	3+	2	4-	4+	2	3-	2	2+
Ռուսաստան	3	4	2+	4	3+	2+	2	3-	3-
Տաջիկստան	2+	4	2-	4-	3+	2-	2	1	1+
Թուրքմենստան	1	2	1	3-	1	1	1	1	1
Ուկրաինա	3	4	2	4	3+	2+	3-	2+	2
Ուզբեկստան	3-	3	2-	3-	3-	2-	2-	2	2-
ԱՊՀ միջին	3-	3+	2-	4-	3+	2	2+	2-	2
ՎՋԵԲ միջին	3	4-	2+	4	4-	2+	3	2+	2+

Ծանոթություն. Ինդեքսը փոխվում է 1-ից, որը նշանակում է աննշան կամ ոչ մի առաջընթաց, մինչև 4+, որը ցույց է տալիս զարգացած տնտեսությունների ստանդարտներին համահունչ ստանդարտներ: Տես Անցումային շրջանի հաշվետվություն 2005թ. ավելի մանրամասն սահմանումների համար:

Աղբյուր. Անցումային շրջանի ՎՋԵԲ հաշվետվություն 2005թ.:

Համաձայն Անցումային շրջանի մարտահրավերների գնահատման (ԱՄԳ), որը մշակվել է Բանկի կողմից (տես Հավելված)⁶, անցումային շրջանի շեղումները

⁶ Վերլուծությունները ուրվագծում են անցումային շրջանը նկարագրող ցուցանիշների շրջանակներում կոնկրետ մարտահրավերները և խնդիրները. (ա) Շուկաների կառուցվածքը և

(այսինքն՝ անցումային շրջանի նպատակների ու ներկայիս իրավիճակի միջև շեղումը) Հայաստանում ավելի է մեծ է այնպիսի հատվածներում, ինչպիսիք են արդյունաբերությունը, ոչ բանկային ֆինանսական հաստատությունները, անշարժ գույքի շուկան և զբոսաշրջությունը, հեռահաղորդակցությունը, տրանսպորտը և քաղաքային ծառայություններն ու սպասարկումը: Մյուս կողմից, անցումային շեղումները պակաս նշանակալի են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, բնական ռեսուրսները և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Ազատականացում, շուկաներ և առևտուր

Հայաստանը զգալի առաջընթաց է ունեցել առևտրի և արտարժույթի ազատականացման ոլորտում: Առևտրի ֆորմալ սահմանափակումները քիչ են, և չկան արտահանման քվոտաներ: Երկիրը պահպանում է լողացող փոխարժեքի ռեժիմ՝ Կենտրոնական բանկի սահմանափակ միջամտություններով և արժույթի լրիվ փոխարկելիությամբ: Հայաստանի առևտրային ռեժիմը ԱՊՀ-ում ամենաբաց ռեժիմներից է, Հայաստանը միացել է ԱՀԿ-ին 2003թ. փետրվարին: Եվ արտահանումը, և ներմուծումը աճել են զգալիորեն, մասնավորապես ոչ ԱՊՀ երկրների հետ՝ կազմելով ընդհանուր առևտրի ավելի քան 70 տոկոսը: Ազատական առևտրային ռեժիմի առավելությունները մասամբ չեզոքացվում են Հայաստանի տեղադրությամբ (չունի մուտք դեպի ծով և հեռու է հիմնական շուկաներից), բարձր գործառնական ծախսերով՝ պայմանավորված անբավարար տրասպորտային ենթակառուցվածքներով, և մաքսային ընթացակարգերի թերություններով: Ոչ ֆորմալ առևտրային արգելքները շարունակում են մնալ զգալի և հանդիսանում են կարևոր մարտահրավեր: Ներքին շուկայում գները լրիվ ազատակացվել էին սկզբնական փուլում, մինչդեռ ենթակառուցվածքային և կոմունալ ծառայությունների գները կարգավորվում են կարգավորող գործակալությունների և նախարարությունների կողմից: Մրցակցության պաշտպանության մարմնի գործունեության արդյունավետությունը բարելավվել է, սակայն ինստիտուցիոնալ կարողությունները պետք է ավելի ամրապնդվեն:

Մասնավոր հատվածի զարգացում

Սեփականաշնորհումը համեմատաբար արագ ընթացավ Հայաստանում: 1994թ. ի վեր կառավարությունը սեփականաշնորհել է մոտավորապես 7 300 փոքր և 2 000 միջին և մեծ ձեռնարկություններ: Սեփականաշնորհման գործընթացը ավարտելու համար կառավարությունն այժմ նախապատրաստում է նոր օրենք 2005–07թթ. ընթացքում պետական գույքի օտարման մասին: Օրենքը նախատեսում է, որ մնացած 120 պետական ձեռնարկությունները (ներառյալ այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մշակույթը և զվարճանքների կազմակերպումը) սեփականաշնորհված կլինեն 2007թ. դրությամբ: Ենթակառուցվածքային ձեռնարկությունների մեծ մասը, ներառյալ հեռահաղորդակցությունը,

զարգացման աստիճանը (օրինակ, մրցակցության մակարդակը); (բ) Շուկայական հաստատությունները և քաղաքականությունը (օրինակ, կարգավորման դաշտը), և (գ) Շուկայական հմտությունները, պրակտիկան և նորարարությունները (օրինակ, կորպորատիվ կառավարման բարելավման ուղղությունները):

էլեկտրաէներգիայի բաշխումն ու արտադրությունը և գլխավոր օդանավակայանը, հանդիսանում են մասնավոր սեփականություն, սակայն այս սեփականաշնորհումների զգալի մասը հակասական բնույթ են կրել: 2004թ. կառավարությունը ավարտեց Ջանգեգուրի պղնձամոլիբդենային գործարանի սեփականաշնորհումը, որը հանդիսանում է Հայաստանի պատմության մեջ երկրորդ ամենամեծ սեփականաշնորհման գործարքը: Կառավարությունը լուծարել է նաև մի շարք միջին և մեծ ձեռնարկություններ, որոնք ֆինանսապես կենսունակ չէին: ՀՆԱ-ում մասնավոր հատվածի բաժինը աճել է մինչև 75 տոկոս 2004թ., որը ամենաբարձր ցուցանիշներից մեկն է ԱՊՀ տարածաշրջանում: Սակայն սեփականաշնորհման գործընթացը միշտ չէ բերել խորը վերակառուցման կամ բարելավումների կորպորատիվ կառավարման մեջ, քանի որ շատ ակտիվներ վաճառվել են (տարածաշրջանային) ներդրողների, որոնք չունեն համապատասխան փորձ, կամ ինսայդերների:

Գործարար միջավայր

Նախորդ տարվա ընթացքում գործարար միջավայրը որոշակիորեն բարելավվել է: Օրինակ՝ հարկային համակարգը պարզեցվել է, և արտահանողներին ԱԱՀ վերադարձի վարչարարությունը բարելավվել է: Տեղական և արտերկրի ընկերությունների մասնակցությամբ Գործարարության խորհուրդ է գործում՝ գործարար համայնքի և իշխանությունների միջև ծագող խնդիրները լուծելու և ընդհանրապես գործարար միջավայրը բարելավելու նպատակով: Կառավարությունը սկսել է նաև իրականացնել հակակոռուպցիոն ռազմավարություն՝ դրամաշորթության և կաշառակերության դեմ պայքարելու նպատակով, սակայն ոլորտում դեռևս շատ անելիքներ կան: Մասամբ այս զարգացումների շնորհիվ արտաքին ուղղակի ներդրումները (ԱՌՆ) աճել են՝ հասնելով 217 միլիոն ԱՄՆ դոլար 2004թ.: Ներդրումների մեծ մասը կատարվել է այնպիսի հատվածներում, ինչպիսիք են՝ մետալուրգիա, սննդի արդյունաբերություն, հեռահաղորդակցություն, էներգետիկա, ավիացիա, զբոսաշրջություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ: Գլխավոր ներդրողները ներկայացնում են Ռուսաստանը, Հունաստանը, Արգենտինան, Ֆրանսիան, Գերմանիան և ԱՄՆ-ը:

Աղյուսակ 2.2. Հայաստանում բիզնեսով զբաղվելու վերաբերյալ որոշ ցուցանիշներ

	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
Բիզնես սկսելու համար պահանջվող ժամանակ (օրեր)	25	21	115
Բիզնես սկսելու ծախսեր (մեկ շնչին ընկնող եկամտի տոկոս)	6.1	13.7	12.5
Ջբաղվածության կոշտությունը (ինդեքս; 0=նվազ կոշտ, 100=ամենակոշտ)	49	43	38
Անշարժ գույք գրանցելու ժամանակը (օրեր)	6	9	61
Թափանցիկության ինդեքս (7=ամենաթափանցիկ)	3 (2005)	4	0
Պայմանագիրը կիրարկելու համար պահանջվող ժամանակ (օրեր)	185	375	267
Պայմանագրի կիրարկման ծախսեր (պարտքի արժեքի տոկոս)	17.8	31.7	19.8
Անվճարունակության գործընթացի ընդհանուր տևողություն (տարիներ)	1.9	3.3	2.7

Աղբյուր. «Բիզնեսով զբաղվել» 2006թ., Համաշխարհային բանկ

Համաձայն 2005թ. ՀԲ «Բիզնեսով զբաղվել» ուսումնասիրության (տես Աղյուսակ 2.2.)՝ մուտքի կարգավորման, զբաղվածության կարգավորման, գույքի գրանցման և սննկացման ցուցանիշները բարձր են տարածաշրջանի միջինից, մինչդեռ իրավունքների, կորպորատիվ կառավարման և որոշ չափով պայմանագրերի կիրարկման ցուցանիշները հետ են մնում տարածաշրջանային և զարգացած տնտեսությունների ցուցանիշներից:

Համաձայն 2005թ. ՎՋԵԲ/ՀԲ Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության ուսումնասիրության (ԳՄՁԳՈՒ)՝ հայկական ձեռնարկությունների 52 տոկոսը դիտարկում են ֆինանսավորման մատչելիությունը որպես իրենց ընկերության գործունեության և աճի համար միջին կամ խոշոր խոչընդոտ: Ընկերությունները նաև բողոքում են կարգավորման համակարգի թափանցիկության բացակայությունից, բարդ վարչարարությունից և ընթացակարգերից, հարկային վարչարարությունից և ենթակառուցվածքային ծառայությունների ցածր որակից: Կաշառակերությունը մնում է լուրջ խնդիր: Թրենսփերենսի Ինթերնեշնլ կազմակերպության կողմից մշակված Կոռուպցիայի ընկալման ինդեքսի մեծությունը Հայաստանի համար 2005թ. մի փոքր նվազել է՝ 2004թ. 3.1-ից մինչև 2005թ. 2.9 (1-10 սանդղակով, որտեղ 10 արժեքը համապատասխանում է ամենացածր կոռուպցիոն մակարդակին):

Ֆինանսական հատված

Բանկային հատվածի կապիտալը զգալիորեն աճել է նախորդ տարիներին: Սրա պատճառներից մեկն է հանդիսացել նվազագույն կապիտալի պահանջի բարձրացումը մինչև 2 միլիոն ԱՄՆ դոլար 2003թ. հուլիսից և մինչև 5 միլիոն ԱՄՆ դոլար 2005թ. հուլիսից (բոլոր բանկերը ներկայումս բավարարում են այս պահանջին):⁷ Ներկայումս 21 բանկ է գործում, և բոլորը հանդիսանում են մասնավոր սեփականություն: Մինչև վերջերս արտասահմանյան մասնակցությունը սահմանափակված էր երկու բանկերով, որոնցից մեկի (Էյջ-Էս-Բի-Սի Հայաստան) ակտիվները կազմում են ընդհանուր բանկային ակտիվների 16 տոկոսը: Սակայն 2005թ. սկզբին ՀՀ Կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) տրամադրեց թույլտվություն մի նոր արտասահմանյան բանկի՝ Արմ Սուիս Բանկ: Նաև 2005թ. երկու բանկային ձեռքբերումներ են տեղի ունեցել արտերկրյա ներդրողների կողմից: Կասկադ Կապիտալ Հոլդինգը (ԱՄՆ) գնեց Էմպորիկի բանկը, իսկ Թուրան Ալեմ Բանկը (Ղազախստան) այլ ղազախստանյան ներդրողների հետ ձեռք բերեց ԲՏԱ Ինվեստբանկը: Ներկայումս արտասահմանյան սեփականությունը կազմում է ընդհանուր բանկային կապիտալի համարյա կեսը: Ավանդների ապահովման համակարգը սկսեց գործել 2005թ. հուլիսից՝ տրամադրելով 100 տոկոս երաշխիքներ մինչև 1.5 միլիոն դրամ (մոտավորապես 3 000 ԱՄՆ դոլար) արժեքով ավանդների համար: Նաև ընդունվեց Փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենք 2004թ. դեկտեմբերին: Այս միջոցառումներով ՀՀ ԿԲ-ը նպատակ ունի բարելավել հասարակության

⁷ Մոտ 11 միլիոն ԱՄՆ դոլար է պահանջվում նոր սուբյեկտի մուտքի համար:

վատահուրությունը բանկային համակարգի նկատմամբ: Չնայած բանկային ակտիվները աճեցին 2003թ. ՀՆԱ-ի 18.1 տոկոսից մինչև 2005թ. 22 տոկոս (ակտիվների որակի, իրացվելիության և շահութաբերության բարելավմամբ), ֆինանսական միջնորդավորման մակարդակը ցածր է մնում ԱՊՀ չափանիշներով: Չաշխատող վարկերը կազմում են ընդհանուր վարկերի մոտավորապես 2.1 տոկոսը:

Բանկային ավանդները չեն աճում զգալիորեն ՀՆԱ-ի նկատմամբ (2003թ. 12.0 տոկոսից մինչև 2005թ. 12.4 տոկոս), և ՀՆԱ-ի նկատմամբ ներքին վարկավորման հարաբերակցությունը մնում է տարածաշրջանում ամենացածրերից մեկը (7.4 տոկոս 2005թ.): Տոկոսադրույքի սպրեդները բարձր են մնում⁸, իսկ վարկերի ժամկետայնությունը՝ համեմատաբար փոքր: Ֆինանսական զարգացման ցածր տեմպերի պատճառներից մեկը առևտրային բանկերի միջև մրցակցության թուլությունն է:⁹ Տեղական բանկերը հենվում են նեղ մասնագիտացված շուկաների և ակտիվներում պետական պարտատոմսերով ներդրումների վրա, իսկ բանկային ոլորտում կորպորատիվ կառավարումը մնում է թույլ: ԱՄՀ-ը նպատակ ունի առևտրային բանկերի կորպորատիվ կառավարումը բարելավել ընթացիկ ԱՀԱԾ շրջանակներում, ներառյալ բաժնետերերի ընդհանուր ժողովների արդյունավետության, տնօրենների խորհրդի կառավարման, սեփականության և կառավարման տարանջատման և բանկի սեփականության վերաբերյալ տեղեկատվության բացահայտման բարելավման միջոցով:

Կապիտալի շուկան թերզարգացած է: Չնայած 191 ընկերություն է անցել լիստինգ հայկական արժեթղթերի բորսայում (ArmEx), շուկայի կապիտալիզացիան կազմում է ընդամենը 18 միլիոն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 0.5 տոկոս), իսկ առևտրի ծավալները մնում են աննշան: ¹⁰ Իրականացվում է պետական կարճաժամկետ արժեթղթերի որոշ առևտուր:¹¹ Այս արժեթղթերը ուղղակիորեն վաճառվում են դիլերներին ՀՀ ԿԲ կողմից պարբերաբար կազմակերպվող աճուրդների ժամանակ, իսկ երկրորդային շուկան համեմատաբար պասիվ է մնում:

Ենթակառուցվածքներ

Մի շարք սեփականաշնորհումների և մասնավոր հատվածի մասնակցության այլ ձևերով գործարքներից հետո ենթակառուցվածքների մեծ մասը ներկայումս կառավարվում է մասնավոր հատվածի կողմից: Օրինակ՝ հեռահաղորդակցության ընկերությունը՝ Արմենթելը, սեփականաշնորհվել է 1997թ., իսկ 2002թ. Հայկական միջազգային օդանավակայաններ ընկերությունը ստացել է 30 տարվա մասնավոր

⁸ 2005թ. կեսին ավանդային և վարկային տոկոսադրույքների միջև սպրեդները կազմում էր 12.6 տոկոս ազգային արժույթի համար և 14.4 տոկոս արտարժույթների համար: Այս սպրեդները հիմնականում անփոփոխ են մնացել 2001թ. ի վեր:

⁹ Մեկ օրինակ է այն, որ առևտրային բանկերը երբեք չեն հանրայնորեն գովազդում իրենց տոկոսադրույքները:

¹⁰ Համեմատության համար՝ շուկայի կապիտալիզացիայի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմում է 134 տոկոս Մեծ Բրիտանիայի համար և 130 տոկոս ԱՄՆ համար: Անցումային տնտեսություններում ամենաբարձրը Էստոնիայի ցուցանիշն է (51 տոկոս):

¹¹ Այն կազմում է ՀՆԱ-ի մոտ 3 տոկոսը, սակայն պետական արժեթղթերի շուկան փոքր է և նվազ իրացվելի:

կոնցեսիա՝ շահագործելու Ջվարթնոց օդանավակայանը: Երևանի ջրնուղ-կոյուղի ընկերությունը ստացավ շահագործման և կառավարման պայմանագիր 2000թ՝ միջազգային բաց մրցույթի արդյունքում: Սա զգալիորեն բարելավեց գործառնական արդյունավետությունը և հավաքագրման ցուցանիշները՝ բերելով պետական սուբսիդիաների զգալի կրճատման: Հայկական երկաթուղու սեփականաշնորհումը և ռեստրուկտուրիզացիան սպասվածից անհամաչափ ու դանդաղ է ընթացել (Համաշխարհային բանկի ուսումնասիրությունը ընթացքի մեջ է, առաջարկները ակնկալվում են 2006թ.): Մասնավոր հատվածում մասնակցության տրամաբանությամբ տարիքները աճել են՝ հասնելով ծախսածածկման մակարդակների, և հավաքագրման ցուցանիշները զգալիորեն բարելավվել են: Կարգավորող մարմիններ են հիմնվել նաև բնական մենաշնորհների այս հատվածների համար:¹²

Սեփականաշնորհման գործարքների մի մասը, սակայն, հակասական բնույթ են կրել այնպիսի չափանիշների իմաստով, ինչպիսիք են արդարությունը և թափանցիկությունը: Օրինակ՝ հեռահաղորդակցության ընկերությունը սեփականաշնորհվել է հունական հեռահաղորդակցության OTE ընկերությանը՝ բացառիկ իրավունքների երկար ժամկետով (ֆիքսված ցանցերի համար 15 տարի և հինգ տարի շարժական կապի և տվյալների փոխանցման ծառայությունների համար): Ի պատասխան հեռահաղորդակցության ցանցի որակի վերաբերյալ գործարար շրջանակների հետևողական բողոքներին՝ կառավարությունը մասնակիորեն ազատականացրել է շարժական կապի շուկան՝ 2005թ. տրամադրելով երկրորդ լիցենզիան Ղ-Տելեկոմին, որը հանդիսանում է Ղարաբաղ Տելեկոմի դուստր ձեռնարկություն:

Էլեկտրական բաշխիչ ցանցերը նույնպես սեփականաշնորհվել են Միդլենդ Ռեսորսիզ ընկերությանը 2003թ., որը սկզբնական շրջանում համարվում էր առանց համապատասխան փորձառության ներդրող: Ընկերությունը սկսեց գործունեությունը բավարար արդյունքներով, սակայն վերջերս վաճառեց ցանցերը Ինտերէներգո ընկերությանը, որը հանդիսանում է ռուսական ՌԱՕ ՄԷՀ ընկերության դուստր ձեռնարկությունը: Գործարքը հենց սկզբից կնքվել էր անբավարար թափանցիկության պայմաններում, և ձեռքբերման գործընթացը վիճարկվել էր միջազգային հանրության, մասնավորապես Համաշխարհային բանկի կողմից: Ավելին, այս գործարքը հավանաբար լրացուցիչ մարտահրավերներ կստեղծի կարգավորիչի համար, քանի որ ՌԱՕ ՄԷՀ-ը արդեն հանդիսանում է Հրազդանի ՊՇԵԿ-ի սեփականատեր և նաև իրականացնում է Մեծամորի ատոմակայանի ֆինանսական հոսքերի կառավարումը:

2.2.3. Անցումային շրջանի մարտահրավերներ և հիմնախնդիրներ

¹² Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովը (ՀԾԿՀ) սկզբնապես հիմնադրվել էր որպես էներգետիկայի ոլորտի կարգավորիչ 1997թ., սակայն ավելի ուշ դրա գործառնությունները ընդլայնվել են՝ ներառելով հեռահաղորդակցությունը և ջրամատակարարման ոլորտը:

Հետևյալ վեց ոլորտները առանձնանում են որպես ռազմավարության ժամանակաշրջանում Հայաստանի համար անցումային շրջանի հիմնական մարտահրավերներ.

➤ **Գործարար միջավայրի բարելավում**

Վերջին տարիներին նկատվել է որոշ բարելավում, սակայն գործարար հանրությունը շարունակում է բողոքել գործարարության խոչընդոտների մասին: Հետագա բարելավում է հատկապես անհրաժեշտ կանոնների և կանոնակարգերի թափանցիկության բարձրացման, օրենսդրական և կարգավորման դաշտի ու կառավարման բարելավման և վարչական արգելքների ու կոռուպցիայի կրճատման ոլորտներում: Ֆինանսների մատչելիությունը կարևոր է:

➤ **Ֆինանսական միջնորդավորման խորացում**

Ֆինանսական միջնորդավորումը կարիք ունի հետագա խորացման՝ ապահովելով տեղական ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ընդլայնման հնարավորություններ, մասնավորապես միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորում ձեռնարկատերերի և միկրո ու փոքր ձեռնարկությունների համար: Սրան հասնելու համար բանկային ոլորտում ուժեղ մրցակցությունը և կորպորատիվ կառավարման կատարելագործումը հանդիսանում են անհրաժեշտ պայմաններ: Այլ պահանջները ներառում են ամրապնդված դատական և ֆինանսական թափանցիկություն վարկառուների գործունեության մասին:

➤ **Հանրային ենթակառուցվածքների կոմերցիալիզացիայի խթանում**

Անհրաժեշտ են շարունակական ջանքեր՝ մնացած պետական ձեռնարկությունների, ինչպես նաև սեփականաշնորհված ենթակառուցվածքային ձեռնարկությունների կոմերցիալիզացիայի և ռեստրուկտուրիզացիայի համար: Տարիֆների մակարդակները կարիք ունեն ճշգրտման՝ ծախսածածկման նպատակներով, մինչդեռ հավաքագրման տեմպերը մնում են համեմատաբար ցածր: Արդեն սեփականաշնորհված ծառայությունների (այսինքն՝ էլեկտրաէներգիայի բաշխում և հեռահաղորդակցություն) գործառնական արդյունավետությունը և ծառայությունների որակը պետք է բարելավվեն:

➤ **Հետսեփականաշնորհման ռեստրուկտուրիզացիայի արագացում և ձեռնարկությունների հատվածում թափանցիկության և կորպորատիվ կառավարման բարելավում**

Չնայած սեփականաշնորհման արագ առաջընթացին՝ սեփականաշնորհված ձեռնարկություններից շատերը ունեցել են գործառնական և ֆինանսական դժվարություններ հետսեփականաշնորհման շրջանում: Դրանցից շատերը դեռևս կարիք ունեն զգալի ռեստրուկտուրիզացիայի: Պետության սեփականություն հանդիսացող մնացած կազմակերպությունների համար իշխանությունները պլանավորում են ավարտել սեփականաշնորհման ծրագիրը 2007թ. դրությամբ՝ համաձայն նոր օրենսդրության:

- **Շուկայում մրցակցության ամրապնդում**
 Իշխանությունների համար կարևոր խնդիրներից է հզորացնել մրցակցությունը շուկաներում՝ ձեռնարկությունների համար շուկայի մուտքի դյուրացման և հակամենաշնորհային մարմնի արդյունավետության բարձրացման միջոցով:
- **Հարկային և մաքսային վարչարարության բարելավում և պետական պարտքի կենսունակ կառավարման ապահովում**
 Պետական ֆինանսների կենսունակ կառավարման նպատակով հարկային և մաքսային համակարգերը կարիք ունեն գգալի ամրապնդման: Հիմնական մտահոգության ոլորտներն են. (ա) հանրային հատվածում կառավարումը, (բ) տեղեկատվական տեխնոլոգիաների անբավարար կիրառում և պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման անբավարար մակարդակ, որը խոչընդոտում է հարկային և մաքսային հավաքագրումների արդյունավետության բարձրացմանը, և (գ) հարկային և մաքսային խտրական գործունեություն, ներառյալ կոռուպցիա:

2.3. Կապիտալի մատչելիություն (հասանելիություն)

Հայաստանը դեռևս ունի ներդրումների կարիք՝ և պետական, և մասնավոր հատվածներում: Պետական հատվածի ներդրումային ֆինանսական միջոցները հիմնականում կախված են մնում պաշտոնական ֆինանսական աղբյուրներից, որոնք են երկկողմ դոնորները, ՄՖՀ-երը և սփյուռքը: Տարեկան Հայաստանը ստանում էր 200-300 միլիոն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի մոտ 7 տոկոսի չափով ԶՊԱ վերջին տարիներին: ԱՄՆ-ը ամենամեծ երկկողմ դոնորն է, որին հետևում են Գերմանիան և Ճապոնիան: 2004թ. Հայաստանը ներառվեց այն երկրների խմբում, որոնք կարող են ստանալ ԱՄՆ Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի (ՀՄԾ) ֆինանսական աջակցություն, և իշխանությունները սպասում են մոտ 175 միլիոն ԱՄՆ դոլար 2006-09թթ. ընթացքում՝ գլխավորապես գյուղական համայնքներում ենթակառուցվածքների և ոռոգման համակարգերի զարգացման համար: Ավելին, Լինսի հիմնադրամը (ԱՄՆ հիմնադրամ), որը 170 միլիոն ԱՄՆ դոլար էր տրամադրել 2001-03թթ., վերջերս որոշել է տրամադրել մեկ այլ դրամաշնորհ 60 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով՝ դպրոցների և տրանսպորտային ենթակառուցվածքների վերանորոգման և վերականգնման համար:

Հայաստանը լավ հարաբերություններ ունի բոլոր ՄՖՀ-երի հետ: ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի ծրագրերը հաջող են ընթանում: Երկիրը միացել է նաև Զարգացման ասիական բանկին 2005թ. սեպտեմբերին: Փոխառությունները սահմանափակվում են արտոնյալ վարկերով: Կառավարությունը մուտք չունի միջազգային կապիտալի շուկաներ, քանի որ Հայաստանը դեռևս չի ներառված միջազգայնորեն ճանաչված վարկային գործակալությունների ռեյտինգային համակարգերում: Սակայն կառավարությունը կարող է թողարկել պետական պարտատոմսեր ներքին շուկայի համար, որոնք ներգրավել են տեղական ներդրողների (հիմնականում առևտրային բանկեր):

Մասնավոր հատվածում ֆինանսական միջոցների մատչելիությունը ընդհանուր առմամբ սահմանափակ է: Հայկական մասնավոր ընկերությունները չեն թողարկել միջազգային բաժնետոմսեր կամ պարտատոմսեր: Խոշոր միջազգային բանկերից վարկերը նույնպես փոքրաթիվ են: Այսպիսով, մասնավոր ֆինանսավորման հիմնական մասը գալիս է արտաքին ուղղակի ներդրումների տեսքով կամ կապակցված վարկավորմամբ: Արտաքին ուղղակի ներդրումները զգալիորեն աճել են վերջին տարիներին, և արտերկրի հիմնական ներդրողները ներկայացնում են Ռուսաստանը, Հունաստանը, Արգենտինան, Ֆրանսիան, Գերմանիան և ԱՄՆ: Ներքին շուկայում միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման մատչելիությունը մասնավոր հատվածի համար սահմանափակ է: Տեղական վարկերը մասնավոր հատվածին մնում են ցածր մակարդակի վրա՝ ՀՆԱ 7 տոկոսի մակարդակի վրա (2004թ.): Առևտրային բանկերը շարունակում են տրամադրել վարկեր այնպիսի ժամկետներով, որոնք բավականին կարճ են՝ մասնավոր հատվածի աճը ապահովելու համար (որպես կանոն մեկ տարի), իսկ տոկոսադրույքները նվազել են մինչև մոտավորապես տարեկան 16 տոկոս: ՓՄՁ-ների և ՄՓՁ-ների համար բանկային ֆինանսավորման մատչելիությունը մնում է սահմանափակ, մանավանդ շրջաններում: Սփյուռքի հիմնադրամների ներգրավվածությունը ունեցել է իր դրական և բացասական կողմերը: Մինչ որոշ հիմնադրամներ ներգրավվել են բանկային և ոչ բանկային վարկային հաստատությունների հիմնադրման մեջ՝ նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի ֆինանսական շուկան առևտրային հիմունքներով, այլոք ընտրել են մասնավոր հատվածի փաստացի սուբսիդավորման ճանապարհը՝ տրամադրելով վարկեր շուկայականից զգալիորեն ցածր տոկոսադրույքներով, այսպիսով աղավաղելով շուկան և խաթարելով տեղական բանկերի գործունեությունը:

3 ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ոազմավարության ժամանակաշրջանում բանկի գերակայությունները

Համաձայն իր մանդատին՝ նոր ռազմավարական ժամանակաշրջանի ընթացքում Բանկը կշարունակի հիմնականում սատարել մասնավոր հատվածի, մասնավորապես ՓՄՁ-ների զարգացմանը՝ ապահովելու ՀՆԱ աճ ու աշխատատեղերի ստեղծում, և այդպիսով աղքատության հաղթահարմանը: Բանկի շարունակական աջակցությունը մասնավոր հատվածին լրիվ համահունչ է ԱՀՌԾ-ին, որը մատնանշում է բարձր տնտեսական աճի ապահովումը՝ հատուկ շեշտադրելով փոքր և միջին ձեռնարկությունները՝ որպես իր քաղաքականության հինգ կարևորագույն նպատակներից առաջինը:

Բանկի նոր ներդրումների հնարավորությունները մեծապես կախված կլինեն ներդրումային մթնոլորտից: Այդ հմաստով, ի լրումն ծրագրերի հետ կապված քաղաքական երկխոսությանը, Բանկը կվարի քաղաքական երկկոխություններ՝ նպատակ ունենալով զարգացնել մասնավոր ներդրումների համար ընդհանուր բարենպաստ մթնոլորտ: Բանկը կշարունակի համագործակցել այլ ՄՖՀ-ների հետ այս ուղղությամբ:

Ելնելով Հայաստանի պետական պարտքի դրությունից, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ երկրում Բանկի դերի վերաբերյալ դիրքորոշումից՝ Բանկը ակտիվորեն չի իրականացնի պետական երաշխիքով ապահովված ենթակառուցվածքային ծրագրեր Հայաստանում: Այնուամենայնիվ, եթե նոր ռազմավարական ժամանակաշրջանի ընթացքում պետական երաշխիքով վարկավորման հնարավորություններ ի հայտ գան, հաշվի առնելով Հայաստանում պետական երաշխիքով ապահովված մեծ ծրագրերի իրականացման նախկին փորձը և դասերը, Բանկը ընտրողաբար հետամուտ կլինի կենսունակ չափերով, տնտեսագիտական և տեխնիկական հիմնավորվածությամբ վարկավորման ենթակա ծրագրերի իրականացմանը՝ այսպիսով նվազեցնելով պետական երաշխիքի իրացման հավանականությունը:

Այս ռազմավարությունը չի վերաբերում Լեռնային Ղարաբաղի վիճարկվող տարածքին:

3.2 Ճյուղային մարտահրավերները և բանկի նպատակները

3.2.1 Ձեռնարկությունների հատված

Ձեռնարկությունների հատվածում Բանկի գործունեության կորիզը կկազմի տեղական գործընկեր բանկերի հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը՝ շեշտադրելով ՓՄՁ-ները և միկրոֆինանսավորումը: Արդարացված

լինելու դեպքում գործընկեր բանկերի համար բացվող վարկային գծերը, որոնք այնուհետև տրամադրվելու են ՓՄՁ-ներին, կավելացվեն՝ բարձրացնելով ՓՄՁ-ներին վարկավորման սահմանաչափերը, մինչդեռ բանկերի հետ համագործակցությունը կընդլայնվի՝ ռիսկերի բաշխման և համաֆինանսավորման միջոցով՝ Բանկի Միջնաձավալ համաֆինանսավորման ծրագրի շրջանակներում (ՄՀՖԾ): Բացի ՄՀՖԾ-ի բաղադրիչի, որը չի ենթադրում հաճախորդ բանկի կողմից ռիսկի ստանձնում, հայկական մասնավոր ձեռնարկությունների ուղղակի պարտքային ֆինանսավորումը կիրականացվի Բանկի Ուղղակի վարկավորման ծրագրի (ՌԿԾ) շրջանակներում: Բանկը կշարունակի զարգացնել բաժնեմասնակցային ներդրումների իրականացումը Բանկի Ուղղակի ներդրումների ծրագրի (ՌԻՆԾ) շրջանակներում: Բանկը կփորձի ընդլայնել միկրովարկավորումը ոչ բանկային միկրոֆինանսավորում տրամադրող միջնորդների հետ համագործակցության միջոցով, երբ նրանց գործունեությունը կարգավորվի և կանոնակարգվի ԿԲ կողմից:

Հատուկ կշեշտադրվի Բանկի ԳԽԾ/ԿԽԾ խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը, ինչպես նաև նրանց՝ Բանկին թիմերի և Բանկի ներկայացուցչության հետ կապերի ամրապնդումը:

Հետևյալ ոլորտները ներկայացնում են պոտենցիալ մասնավոր հատվածում ներդրումների համար.

Ագրոբիզնես – Բանկը կաջակցի այս հատվածին, որն ունի հատուկ կարևորություն Հայաստանի տնտեսության համար: Բանկը կփնտրի վարկավորման ենթակա հնարավորություններ փաթեթավորման, շալցման, խմիչքների, սառեցված մրգի և չրերի, կաթնամթերքի և հացաբուլկեղենի արտադրություններում, ինչպես նաև սննդի մանրածախ առևտրի ոլորտում:

Տեքստիլ և հագուստ – հայկական տեքստիլ և հագուստի արտադրողները բավականին լավ դիրքեր ունեն Ռուսաստանի և ԱՊՀ-ի շուկաներում աճող պահանջարկից օգտվելու համար, ինչպես նաև Արևմուտքի նեղ մասնագիտացված շուկաներում, որը կպահանջի ներդրումներ ապրանքատեսակների թարմացման, փաթեթավորման, շուկայավարման և բաշխման ոլորտներում: Բանկը կձգտի սատարել այս հատվածը՝ սարքավորումների և շրջանառու կապիտալի ֆինանսավորման միջոցով:

Մետալուրգիա – Հատվածը դրսևորել է կայուն աճի միտում և հանդիսանում է Հայաստանի տնտեսության հիմնական արտահանող ճյուղերից մեկը: Բանկը կփորձի ընդլայնել համագործակցությունը գոյություն ունեցող հաճախորդների հետ, ինչպես նաև հիմնել նոր հարաբերություններ վարկունակ և ազնիվ ընկերությունների հետ:

Շինարարություն – Հատվածը դրսևորել է զգալի և կայուն աճ: Բանկը կփնտրի լրացուցիչ հնարավորություններ շինարարական նյութերի վարկունակ արտադրողների հետ համագործակցության համար:

Բարձր տեխնոլոգիաներ – Հայաստանը որոշ պոտենցիալ ունի բարձր տեխնոլոգիաների վստահելի ճյուղ զարգացնելու համար, մասնավորապես օգտագործելով ԽՍՀՄ-ից ժառանգած հետազոտությունների ու մշակումների կարողությունները: Բանկը կաջակցի ընտրյալ ծրագրերի, որոնք կունենան հաջողությամբ հաստատված տեխնոլոգիաներ և հզոր աջակիցներ:

3.2.2 Ֆինանսական հատված

Հայաստանի ֆինանսական հատվածի սատարումը Բանկի գլխավոր գերակայությունն է, և Բանկը մի քանի մակարդակներով կաջակցի երկրում ֆինանսական միջնորդավորման ամրապնդմանը: Սա կներառի պարտքային ֆինանսավորում և, ընտրողաբար, բաժնեմասնակցային ֆինանսավորում երկրի ամենալավ բանկային և ոչ բանկային ֆինանսական միջնորդներին, որը կուղեկցվի Տեխնիկական օժանդակությամբ, ինչպես նաև կառավարության ու Կենտրոնական բանկի հետ քաղաքական երկխոսության զարգացումը՝ շեշտադրելով կորպորատիվ կառավարումը, մրցակցության խթանումը, շուկայի նոր մասնակիցների ներգրավումը (ներառյալ արտերկրի բանկեր) և համախմբումը: Կենտրոնական բանկի հետ համագործակցության մյուս ոլորտները կարող են ներառել վերջինիս աջակցումը Հայաստանում վարկային ռեյտինգավորման համակարգի ստեղծման մեջ (օրինակ՝ միջազգային առևտրային բանկերի հետ վարկերի սինդիկացմամբ հնարավորության սահմաններում):

Բանկը կամրապնդի և կընդլայնի տեղական բանկերի կողմից ՓՄՁ-ներին վարկավորման և առևտրի ֆինանսավորման աջակցությունը և կընդլայնի բանկերի հետ իր համագործակցության շրջանակները՝ ՄՀՖԾ-ի շրջանակներում համաֆինանսավորման և ռիսկերի բաշխման միջոցով: ՄՀՖԾ-ը Հայաստանում ներդրվել է նախորդ ռազմավարական ժամանակաշրջանի վերջին և նպատակ ունի վերաճել Հայաստանում մասնավոր հատվածի ֆինանսավորման հիմնական գործիքներից մեկի: Այս նպատակով Բանկը կաշխատի ներգրավել հնարավորին չափ շատ հայկական բանկեր ՄՀՖԾ ծրագրում:

Բանկը ակնկալում է, որ հիպոթեքին առնչվող ինստիտուցիոնալ դաշտը հիմնականում կայացած կլինի նոր ռազմավարական ժամանակաշրջանի ընթացքում՝ թույլ տալով Բանկին կիրառել հիպոթեքային վարկավորման ծրագրեր: Այս նպատակով Բանկը կշարունակի համագործակցությունը այլ ՄՖՀ-ների և դոնորների հետ՝ աջակցելու բնակարանների ֆինանսավորման ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի և կարգավորման դաշտի շարունակական զարգացմանը, մասնավորապես կառավարության հետ քաղաքական երկխոսության և անհրաժեշտության դեպքում իրավական աջակցության տրամադրման միջոցով:

Բանկը կփնտրի Հայաստանի լավագույն ֆինանսական հաստատություններում բաժնեմասնակցության հնարավորություններ, որը կմեծացնի նպատակային բանկերի կապիտալը, երբ Հայաստանում կբարձրացվեն նվազագույն կապիտալի

պահանջները, շուկայում կիսաունանանա համախմբման անհրաժեշտությունը, և հաճախորդների ֆինանսավորման պահանջները կաճեն երկրի բարելավվող տնտեսության շնորհիվ: Տեղական բանկերի մրցակցային առավելությունների և զարգացող շուկայի կողմից առաջարկվող հնարավորությունների օգտագործման կարողության ամրապնդմանը զուգընթաց՝ այդ բաժնեմասնակցությունը Բանկին ավելի մեծ հնարավորություն կտա երկրի անցումային շրջանը արագացնելու, ներառյալ կատարելագործված կորպորատիվ կառավարման միջոցով:

Մինչ տեղական բանկերի հետ համագործակցության հնարավորությունները աճում են, Բանկը կշարունակի ամրապնդել իր հաճախորդներին ծառայությունների արդյունավետ մատուցման կարողության ամրապնդումը: Այդ նպատակով Բանկը կընդլայնի Հայաստանի Բանկերի ֆինանսավորման ծրագրի ընդգրկումը և զգալիորեն կմեծացնի ծավալը՝ ներառելու բաժնեմասնակցային ֆինանսավորումը և ստորադաս փոխատվությունները, ինչպես նաև հիպոթեքային վարկավորումը, ի հավելումն ՓՄՁ ֆինանսավորմանը:

Բանկը նաև կծգոտի ընդլայնել ֆինանսական հատվածում իր ներգրավվածությունը այնպիսի ոչ բանկային միջնորդների ներգրավմամբ, ինչպիսիք են ապահովագրական, ոչ բանկային վարկային, լիզինգային և միկրովարկավորում տրամադրող կարգավորվող ընկերությունները՝ բաժնեմասնակցային և պարտքային ֆինանսավորման տրամադրման միջոցով, ինչպես նաև հնարավոր համաֆինանսավորմամբ:

Բանկը կզարգացնի իր քաղաքական երկխոսությունները Կենտրոնական բանկի հետ և կաջակցի Կենտրոնական բանկին՝ բանկային համակարգում կորպորատիվ կառավարման և կազմակերպչական կառուցվածքի բարելավման նրա ջանքերում՝ համապատասխան օրենսդրության մշակմանը հնավոր օժանդակության միջոցով, ինչպես նաև տեղական բանկերի վրա իր ազդեցության օգտագործման միջոցով, մասնավորապես այն բանկերի, որոնցում Բանկը ունի բաժնեմասնակցություն: Հնարավորության դեպքում Բանկը կաշխատի օժանդակել Կենտրոնական բանկի և բանկային համակարգի միջև երկխոսությանը՝ գիտելիքների փոխանակման, ներառյալ Բանկի գործունեության այլ երկրների փորձի փոխանակման միջոցով:

3.2.3 Ենթակառուցվածքներ

Էներգետիկա

Հայաստանի էլեկտրական բաշխիչ ցանցերը ձեռք են բերվել Ռուսաստանի ՌԱՕ ՄԷՀ-ի կողմից դրա սեփականատիրոջ՝ Միդլենդ Ռեսորսիզ ընկերության կողմից ՌԱՕ ՄԷՀ-ի դուստր ձեռնարկությանը դրա վաճառքի արդյունքում: Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ էներգաբլոկը նույնպես կարող է փոխանցվել ՌԱՕ ՄԷՀ-ին որպես Հայաստանի և Ռուսաստանի միջև պարտքի մարման մաս (պաշտոնական որոշումը ակնկալվում է 2005թ. վերջին): Մնացած երկու էլեկտրակայանները (մեկ հիդրոէլեկտրակայան և մեկ ջերմաէլեկտրակայան) գտնվում են պետության

ծեռքուն և նրանցից մեկը ՄՀՃԲ կողմից ֆինանսավորման հավանական թեկնածու է:

Չնայած բանկը շարունակում է հակված լինել արձագանքելու մեծ էլեկտրակայանների մասնավորեցման հետ կապված ֆինանսավորման հնարավորություններին, երբ դրանք առաջանում են, հիմնական գործառնական ուղղությունը կլինի ակտիվորեն փորձել իրականացնել վերականգնվող էներգետիկայի ծրագրեր: Այդ նպատակով Բանկը կշարունակի սատարել Հայաստանի վերականգնվող էներգիայի ծրագրին, որն իրականացվում է Կասկադ Կրեդիտ ընկերության հետ համատեղ, որը հանդիսանում է ԱՄՆ-ում գտնվող Քաֆեսջյան ընտանիքի հիմնադրամի կողմից հիմնադրված և պատկանող ընկերություն: Շարունակվելու է նաև վերականգնվող էներգետիկայի առանձին անկախ մեծ ծրագրերի նկատմամբ հետաքրքրությունը, ինչպիսիք են քամու և հիդրոէներգետիկ ծրագրերը: Այս իմաստով, Բանկը կփորձի իրականացնել նաև Բանկի կողմից վարկավորման ենթակա ծրագրեր արդյունաբերական էներգետիկ արդյունավետության ոլորտում: Սակայն, կարևոր է նշել, որ այդպիսի ծրագրերը հավանաբար կպահանջեն Տեխնիկական աջակցության զգալի ռեսուրսներ դրանց մշակման և իրագործման աջակցման համար:

Տրանսպորտ

Բանկը ակտիվորեն չի ձգտի իրականացնել ծրագրեր այս հատվածում, որոնք կպահանջեն պետական երաշխիքով ապահովում, սակայն կնախատեսի պետական սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքների (օրինակ՝ Զվարթնոց միջազգային օդանավակայան) ընկերությունների մասնավոր օպերատորներին առևտրային ֆինանսավորման տրամադրում պայմանով, որ կոնցեսիոն պայմանագրի տրամադրման գործընթացը Բանկի համար բավարար լինի: Բանկը կշարունակի երկաթուղու ռեստրուկտուրիզացիայի գործընթացի մոնիտորինգը՝ արդյունքում ստեղծվող երկաթուղու ընկերության հետ շարժակազմի վերանորոգմանը և համալրմանը օժանդակելու նպատակով առևտրային հիմունքներով համագործակցության համար:

Քաղաքային և շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքներ

Պետական երաշխիքների շարունակվող բացակայության և Հայաստանում վարկունակ քաղաքային իշխանությունների սակավաթվության լույսի ներքո Բանկը կձգտի բացահայտել վարկավորման ենթակա հնարավորություններ մասնավոր օպերատորների հետ, ինչպիսիք են քաղաքային տրանսպորտի վարկունակ մասնավոր ընկերությունները, որոնք հավանաբար բավականին փոքր կլինեն: Բանկը կհետևի Երևանի քաղաքային բյուջեի դրությանը՝ նպատակ ունենալով մշակել քաղաքային տրանսպորտի ծրագիր, երբ քաղաքը ստանա սեփական բյուջե և այն տնօրինելու լիազորություն: Բանկը նաև կգնահատի ջրամատակարարման (խմելու ջուր և կոյուղի), ինչպես նաև աղբահանման ոլորտում Հայաստանի ընտրված վարկունակ քաղաքային իշխանությունների և Երևանի առանձին համայնքների հետ (որոնք ունեն սեփական բյուջեներ)

քաղաքային ծառայությունների՝ առանց պետական երաշխիքով ապահովման ծրագրերի մշակման տնտեսական հիմնավորվածությունը: Այս նպատակով Հայաստանում պոտենցիալ վարկունակ քաղաքային իշխանությունների ընտրությունը կլինի հիմնական սկզբնական ռազմավարական գերակայությունը:

Հեռահաղորդակցություն

Բանկի գործունեությունը այս հատվածում խոչընդոտվել է մրցակցային միջավայրի ստեղծման առաջընթացի շարունակական բացակայությամբ: Արմենթելի փաստացի մենաշնորհը ոլորտում շարունակվում է: Շուկայի ազատականացումը, ներառյալ շարժական հեռախոսակապի մրցակցային դաշտի ապահովումը այսպիսով հանդիսանում է կարևոր նախապայման հատվածում Բանկի ներգրավման համար:

3.2.4 Բնական ռեսուրսներ

Այս հատվածը կարող է զգալիորեն խթանել ներդրումները, եթե գունավոր մետաղների հիմնական հանքավայրերի սեփականաշնորհումը կամ վաճառքը լինի արդար ու թափանցիկ և գրավի վարկունակ ռազմավարական ներդրողների:

3.3 Շրջակա միջավայրի պաշտպանություն

Բանկը կշարունակի ապահովել, որ շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները բավարարվեն գոյություն ունեցող ծրագրերի կողմից: Բանկը կկիրառի Շրջակա միջավայրի պաշտպանության իր քաղաքականությունը և ընթակարգերը՝ իրականացնելով շրջակա միջավայրի պաշտպանության ուսումնասիրություն Հայաստանում սկսվող բոլոր նոր ծրագրերի շրջանակներում շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահական և անվտանգության հիմնահարցերի վերաբերյալ, եթե անհարժեշտության լինի: Հաշվի առնելով, որ Հայաստանը դեռևս չունի շրջակա միջավայրի պաշտպանության բավարար կարողություններ, երկիրը պետք է ստանա արտաքին տեխնիկական օժանդակություն: Այդ նպատակով Բանկը կտրամադրի հետագա աջակցություն շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող ռիսկերի կառավարման տեղական բանկերի կարողությունների ամրապնդման համար (օրինակ՝ երկրում կազմակերպելով գործընկեր բանկերի համար ուսուցողական սեմինար շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ՝ Վաղ անցումային երկրների նախաձեռնության (ՎԱԵՆ) ֆինանսավորմամբ): Շրջակա միջավայրի պաշտպանության ուժեղ բաղադրիչով Բանկի ծրագրերը մեկը Հայաստանում հանդիսանում է Հայաստանի պղնձի ծրագրի ծուլարանը Ալավերդում: Ծրագրի Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների պլանը կանդրադառնա գերակայություն ունեցող հիմնահարցերին, ինչպիսիք են փոշու արտանետումը և արտանետումների պատշաճ վերահսկողությունը: Բանկը կշարունակի աջակցել Հայաստանին՝ բազմազանեցնելու էներգիայի աղբյուրները՝ աջակցելով վարկավորման ենթակա վերականգնվող էներգետիկայի ծրագրերի, ինչպիսիք են քամու և հիդրոէլեկտրակայանները Հայաստանի վերականգնվող էներգետիկայի

ծրագրի շրջանակներում, որը նաև կվերաբերի երկրի` Ջերմոցային գազերի նվազեցման նպատակին:

4 ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ԴՈՆՈՐՆԵՐ

Բանկը կշարունակի համագործակցել ՄՖՀ-ների և երկկողմ դոնորների հետ համաֆինանսավորման, փոխլրացնող ծրագրերի և քաղաքական երկխոսության համակարգման միջոցով: Սերտ համագործակցություն կպահպանվի դոնորների համակարգման ամսական հանդիպումների միջոցով, որոնց կմասնակցեն Երևանում Բանկի գրասենյակի ներկայացուցիչները, ինչպես նաև կանոնավոր շփումներով աշխատանքային մակարդակում` երկկողմն և բազմակողմ կարգով: Բանկը կփորձի մոբիլիզացնել դոնորների կողմից դրամաշնորհային համաֆինանսավորման ավելացումը` ընտրովի ներդրումային ծրագրերի համար:

Բանկը սերտորեն կհամագործակցի Համաշխարհային բանկի հետ իրենց գործունեությունների համակարգման ուղղությամբ: Խորհրդակցություններ կվարվեն, և քաղաքական երկխոսություն կհամակարգվի ԱՄՀ-ի հետ: ԵՀ հետ համագործակցությունը կշարունակվի գործարար խորհրդատվական ծառայությունների ոլորտում և քաղաքական երկխոսություններ կտարվեն Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում: Բանկը պատրաստ է շարունակելու իր համագործակցությունը ԵՀ և դոնորների հետ` ատոմակայանի փակման համար հատուկ ֆոնդերի ստեղծման վերաբերյալ ԵՀ առաջարկի իրականացման ուղղությամբ: Բանկը սերտորեն կհամագործակցի ԱՄՆ ՄԶԳ հետ ՓՄՁ հատվածի զարգացման ուղղությամբ: KfW բանկի հետ սերտ համագործակցությունը ֆինանսական հատվածում կարգավորման դաշտի զարգացման ուղղությամբ, մասնավորապես հիպոթեքային վարկերի համար, կշարունակվի: Բանկը կհամագործակցի Առևտրի զարգացման սևծվյան բանկի հետ մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ և պատրաստ է համագործակցել Ջարգացման ասիական բանկի հետ, երբ այն սկսի իր գործունեությունը Հայաստանում: Այլ դոնորների, ինչպես նաև սփյուռքի մասնավոր հիմնադրամների հետ համագործակցությունը կիրականացվի յուրաքանչյուրի հետ անհատական հիմունքներով, հենց որ բացահայտվեն տվյալ համագործակցության պահանջները և մոտեցումների համապատասխանությունը:

Այլ ՄՖՀ-ների և հիմնական երկկողմ դոնորների ծրագրերը ներկայացվում են ստորև.

4.1 Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ)

Հայաստանը ԱՄՀ-ի անդամ է դարձել 1992թ.: Այդ ժամանակից ի վեր ԱՄՀ-ը իրականացրել է չորս ծրագրեր` աջակցելու Հայաստանում մակրոտնտեսական կայունության ապահովմանը և կառուցվածքային բարեփոխումներին, ներառյալ

Աղքատության հաղթահարման և աճի ծրագիրը (ԱՀԱԾ): Հայաստանի հարաբերությունները ԱՄՀ-ի հետ հիմնականում լավ են եղել: Հարկային համակարգի բարեփոխումների վերաբերյալ կառավարության հետ քննարկումների հաջող ավարտից հետո 34 միլիոն ԱՄՆ դոլար բյուջեով նոր ծրագիր է հաստատվել ԱՄՀ Տնօրենների խորհրդի կողմից ԱՀԱԾ շրջանակներում 2005թ. հունիսին:

4.2 Համաշխարհային բանկ

Համաշխարհային բանկը (ՀԲ) Հայաստանում ամենամեծ բազմակողմ դոնորն է (բնական ռեսուրսների կառավարում և աղքատության հաղթահարում, արտասահմանյան ներդրումների և արտահանման խթանում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ենթակառուցվածքային, կրթական, առողջապահական, սոցիալական ոլորտներ, գյուղատնտեսական բարեփոխումներ, քաղաքների զարգացում, տրանսպորտ և դատական բարեփոխումներ): Հայաստանը ՀԲ-ին միացել է 1992թ., իսկ Միջազգային զարգացման ընկերակցությանը (ՄՁԸ)՝ 1993թ.: ՄՁԸ-ի կողմից վարկավորումը օգնել է ֆինանսական ենթակառուցվածքների վերականգնմանը, ներառյալ աջակցել է երկրաշարժից հետո աղետի գոտու վերականգնմանը, ոռոգման, էներգետիկայի, ճանապարհների վերանորոգմանը և քաղաքային ջրամատակարարման համակարգերի վերականգնմանը: ՄՁԸ-ի վարկերը, որոնք սատարել են սոցիալական ապահովության համակարգին և ծառայությունների մատչելիության բարելավմանը, ներառել են ծրագրեր առողջապահության, կրթության ոլորտներում և սոցիալական ներդրումների հիմնադրամը՝ նպատակ ունենալով կատարելագործել հիմնական սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքները: Այսօր ՀԲ-ի ծրագրերը Հայաստանում կազմում են 896 միլիոն ԱՄՆ դոլար և բաղկացած են 40 ծրագրերից: Հայաստանը անդամակցել է Միջազգային ֆինանսական կորպորացիային (ՄՖԿ) 1995թ.: ՄՖԿ-ը առաջին ներդրումը կատարել է 2000թ.՝ 3.6 միլիոն ԱՄՆ դոլարի բաժնեմասնակցային ֆինանսավորում տրամադրելով Արմենիա հյուրանոցին: ՄՖԿ-ը նաև տրամադրում է դոնորների կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցություն՝ բարելավելու ներդրումային միջավայրը՝ խթանելով կորպորատիվ կառավարման ժամանակակից պրակտիկայի, ներառյալ օրենսդրական բարեփոխումների ներդրումը: ՄՖԿ-ը վերջերս կատարել է երկու ներդրումներ՝ աջակցելով Հայաստանի ՓՄՁ հիմնադրամի ստեղծմանը (մասնավոր բաժնետիրական հիմնադրամ), որը հայկական սփյուռքից մասնավոր ներդրումները ուղղելու է տեղական ընկերություններում բաժնեմասնակցային ներդրումների, և մասնավոր լիզինգային ընկերության հիմնմանը:

4.3 Եվրամիություն (ԵՄ)

ԵՄ և Հայաստանի միջև համագործակցությունը կենտրոնանում է քաղաքական հաստատությունների զարգացման, օրենքի գերակայության և մարդու իրավունքների ապահովման, տարածաշրջանային կայունության, տնտեսական և սոցիալական բարեփոխումների վրա, ներառյալ Հայաստանի աստիճանական մասնակցությունը ԵՄ շուկայում: 1991-2003թթ. ԵՄ-ը Հայաստանին տրամադրել է 331.9 միլիոն եվրո օժանդակություն (չհաշված անդամ պետությունների երկկողմ

ծրագրերը), հիմնականում ԹԱՍԻՍ, Պարենային ապահովության ծրագրի և ՋՍՕԵՀ-ի միջոցով: 2004-2006թթ. ԵՄ օժանդակությունը Հայաստանին գնահատվում է 55 միլիոն եվրո: ԵՄ և Հայաստանի միջև համագործակցությունը ավելի կգարգանա Հայաստանի՝ Եվրոպական հարևանության ծրագրում (ԵՀԾ) ներառվելուն զուգընթաց:

Հայաստանը օգտվել է այնպիսի տարածաշրջանային ծրագրերից, ինչպիսիք են ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՈԳԵՅԹ: ԵՀ օժանդակության ներկա համատեքստը 2002-2006թթ. Երկրում ռազմավարության ծրագիրն (ԵՌԾ) է, որը հիմնվում է 1996թ. ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի նպատակների վրա և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վրա, որը վերջերս է հաստատվել Հայաստանի կառավարության կողմից: Տարեկան մոտավորապես 10 միլիոն եվրոյի աջակցությունը, որը տրամադրվում է ԵՀ Պարենային ապահովության ծրագրի կողմից, կարևոր ներդրում է գյուղատնտեսության և սոցիալական ոլորտներում կարևոր կառուցվածքային բարեփոխումների, ինչպես նաև պետական մի շարք ծրագրերի իրագործման մեջ՝ համաձայն ԱՀՌԾ գերակայությունների: ԵՌԾ շրջանակներում ԹԱՍԻՍ 2004-2006թթ. ծրագիրը ընդունվեց Եվրոպական Հանձնաժողովի կողմից 2003թ. սեպտեմբերին: Ծրագրի հենասյուներն են. (ա) ինստիտուցիոնալ, օրենսդրական և վարչական բարեփոխումների սատարումը (ներառյալ իրավական խորհրդատվություն, մաքսային և վիճակագրական մարմիններին օժանդակություն, քաղաքական մշակման և իրագործման իմաստով բարեփոխումներ էներգետիկայի ոլորտում, տեղական կառավարման ապակենտրոնացում/բարեփոխում և շրջանների զարգացում, քաղաքացիական հասարակության կառուցում և ամրապնդում) և (բ) միջոցառումներ, որոնք նպատակ ունեն անդրադառնալ անցումային շրջանի սոցիալական հետևանքներին (աղքատության հաղթահարում գյուղատնտեսական և սոցիալական պաշտպանության քաղաքականության միջոցով, կրթություն, մասնագիտական և տեխնիկական ուսուցում): ԵՀ-ի բյուջեն Հայաստանի համար 2004-2006թթ. կազմում է 20 միլիոն եվրո: ԵՄ-ը և Հայաստանը ընդլայնում են քննարկումները Մեծամորի ատոմակայանի (ՄԱ) փակման վերաբերյալ: Այս իմաստով ԵՄ-ը պատրաստ է Հայաստանին օգնել՝ գտնելու այլընտրանքային էներգիայի աղբյուրներ և քննարկումներ է ունենում այլ դոնորների հետ՝ նպատակ ունենալով ստեղծել հիմադրամ, որը կօգնի ֆինանսավորել էներգիայի նման փոխարինող հզորությունները: Սակայն, ԵՀ-ը շեշտել է, որ ԵՄ կողմից 100 միլիոն եվրո հնարավոր ներդրումը այդ հիմնադրամում կախված է Մեծամորի ատոմակայանի վաղ փակման վերաբերյալ Հայաստանի համաձայնությունից:

4.4 Առևտրի զարգացման սևծովյան բանկ (ԱԶՍԾԲ)

ԱԶՍԾԲ-ը իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2003թ. փետրվարին՝ սկսելով ՓՄՁ ֆինանսավորման ծրագիր Իզմիրյան հիմնադրամի հետ համատեղ (շվեյցարա-հայկական ներդրումային և բարեգործական կազմակերպություն): Ծրագիրը ՓՄՁ-ներին տրամադրում է մինչև 5 տարի ժամկետով վարկեր մինչև 500 000 ԱՄՆ դոլար գումարով՝ հիմնական միջոցների և շրջանառու կապիտալի

Ֆինանսավորման նպատակով: 2004թ. վերջի դրությամբ կազմակերպության պորտֆելը փոքր էր մնում: 2005թ. հունիսին Հայաստանում կայացավ ԱԶՍԾԲ Բաժնետերերի տարեկան ժողովը, որում որոշում կայացվեց ընդլայնել Բանկի գործունեությունը Հայաստանում: Բանկի համար գլխավոր գերակայությունները Հայաստանում առաջիկա տարիներին լինելու են ՓՄՁ ֆինանսավորումը՝ շեշտադրելով տրանսպորտը, սննդի վերամշակումը, արդյունաբերությունը:

4.5 Զարգացման ասիական բանկ (ԶԱԲ)

Հայաստանը ԶԱԲ-ի անդամ է դարձել 2005թ., սակայն այդ հաստատությունը դեռևս չի սկսել իր գործունեությունը երկրում:

4.6 Հիմնական երկկողմ ծրագրերը

Ամերիկայի միացյալ Նահանգներ

Ամերիկայի Միացյալ Նահանգները, որը գլխավորապես գործում է ԱՄՆ ՄՁԳ միջոցով, ամենամեծ երկկողմ դոնորն է Հայաստանում: Այն ավելի քան 1 միլիարդ ԱՄՆ դոլար օգնություն է տրամադրել 1991-2003թ.թ.՝ ի հավելումն հումանիտար օգնության: ԱՄՆ ՄՁԳ-ը տրամադրել է ամենամյա ավելի քան 50 միլիոն ԱՄՆ դոլար օժանդակություն, և 2004-2005թ.թ. համար 100 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով նրա ծրագիրը Հայաստանում ունի յոթ ռազմավարական նպատակներ, որոնք հիմնականում կենտրոնանում են հետևյալ ոլորտներում՝ աջակցություն ՓՄՁ-ներին, հանրային ներդրումների քարոզարշավ, հանրային կառավարման բարելավում և թափանցիկության ապահովում: Շարունակվող ծրագրերը ներառում են տնտեսության ռեստրուկտուրիզացիա, էներգետիկայի հատվածի բարեփոխումներ, առողջապահություն, ժողովրդավարություն ու կառավարում և գյուղատնտեսության աջակցություն, ներառյալ «Գյուղացին գյուղացուն» ծրագիրը:

2004թ. Հայաստանը ընտրվեց այն 16 երկրներից մեկը, որոնք իրավունք ունեն դիմելու ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավերներ ծրագրին (ՀՄԾ): Հայաստանը դիմել է Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիային 175 միլիոն ԱՄՆ դոլարի օժանդակության համար՝ գյուղական ենթակառուցվածքների զարգացմանն աջակցելու նպատակով (Ճանապարհներ և ոռոգում):

Գերմանիա

Գերմանիան երկրորդ ամենամեծ դոնորն է Հայաստանում: Հայաստանին Գերմանիայի կողմից տրամադրված օժանդակության հիմնական ուղղությունները այն ծրագրերն են, որոնք իրականացվում են Տեխնիկական համագործակցության գերմանական ընկերության (որը հայտնի է գերմաներեն հապավումով՝ GTZ) և KfW բանկի կողմից, որի գրասենյակը Հայաստանում բացվեց 1998թ.: GTZ-ի հիմնական շեշտադրումը տեխնիկական համագործակցության վրա է, ներառյալ տեղական զարգացումը, օրենքի գերակայությունը և ՓՄՁ գործունեության

գարգացումը: GTZ-ի շարունակվող ծրագրերը Հայաստանում ունեն 14.3 միլիոն եվրո ընդհանուր բյուջե: KfW-ն աջակցություն է տրամադրել ՓՄՁ-ներին տեղական բանկերի միջոցով՝ Գերմանա-հայկական հիմնադրամի խողովակով (19 միլիոն եվրո): Այլ ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմել է 38 միլիոն եվրո և ներառում է ընտրված շրջաններում ջրմուղ-կոյուղու համակարգի վերականգնում (14.5 միլիոն եվրո), էլեկտրափոխանցման համակարգերի վերականգնում (8.9 միլիոն եվրո) և վարկային երաշխիքների հիմնադրամ (6.8 միլիոն եվրո):

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայի կառավարության օժանդակության հիմնական իրականացնող կազմակերպությունը Միջազգային գարգացման դեպարտամենտն է (ՄՁԴ): ՄՁԴ-ի ուղղակի օժանդակության ծրագիրը հիմնականում ներկայացնում է հանրային հատվածի բարեփոխումների և սոցիալական նախաձեռնությունների աջակցումը: ՄՁԴ-ի ներկայիս ծրագրերը Հայաստանում ունեն 11 միլիոն ֆունտ ստերլինգ ընդհանուր բյուջե:

Ճապոնիա

Ճապոնիան իր երկկողմ օժանդակությունը (ՋՊԱ) Հայաստանին սկսել է 1991թ.: Ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար է տրամադրվել 2003թ. վերջի դրությամբ: Ճապոնական օժանդակության գերակա ոլորտներն են. (ա) տնտեսության կառուցվածքային համախմբումը, (բ) էներգետիկայի ոլորտը, (գ) տրանսպորտային ենթակառուցվածքները, (դ) ոռոգման և ջրամատակարարման համակարգերի բարելավումը և (ե) սոցիալական հատվածը (առողջապահությունը ու բժշկական խնամքը, կրթությունը և գործազուրկների ու ցածր եկամուտներով բնակչության առջև ծառայած խնդիրների լուծումը):

Էլեկտրահաղորդման և բաշխիչ ցանցի ծրագրի համար 5.4 միլիարդ Ճապոնական յեն ընդհանուր գումարով վարկի իրականացումը սկսվեց 2001թ.: 15.92 միլիարդ Ճապոնական յենի վարկ տրամադրվեց 2005թ.՝ ֆինանսավորելու Երևանի կոմբինացված ցիկլով էլեկտրակայանի ծրագիրը:

Նիդերլանդներ

Նիդերլանդները կարևոր դեր են խաղում այն երկրների թվում, որոնք երկկողմ ծրագրեր ունեն Հայաստանում: Ելնելով Համաշխարհային բանկում և ԱՄՀ-ում Նիդերլանդների և Հայաստանի միջև համագործակցային հարաբերություններից, երկկողմ օժանդակության գերակայությունները հիմնականում կենտրոնանում են հանրային հատվածի բարենորոգումների ամրապնդման և տնտեսապես խելամիտ կառավարման վրա: 2005թ. հոլանդական կառավարությունը համաֆինանսավորել է Համաշխարհային բանկի ԱՀՌԾ ծրագրերը 4.7 միլիոն եվրոյի չափով: Լրացուցիչ միջոցներ են տրամադրվել ՄՁԴ-ին (լռելայն համագործակցություն՝ ի օժանդակություն Միջնաժամկետ ծախսումների ծրագրին), ՄԱԿ ԶԾ-ին, ՄՄԿ և միջազգային ՀԿ-ներին: Նիդերլանդների՝

Ֆինանսական հատվածի զարգացման քաղաքականության ծրագիրը (NFX, հոլանդական կառավարության և մասնավոր ֆինանսական հատվածի միջև համագործակցություն) ներգրավված է Հայաստանում բանկային, ապահովագրական և կենսաթոշակային հատվածներին քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման մեջ: NFX-ը հաստատել է համագործակցություն ՀՀ ԿԲ-ի և ՄԲՀՀԽ հետ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- 1 Բանկի հաստատված գործարքներ և ծրագրերի պորտֆել
- 2 Քաղաքական գնահատում
- 3 Անցումային շրջանի մարտահրավերների գնահատում (ԱՄԳ)
- 4 Շրջակա միջավայրի պաշտպանության հարցեր
- 5 Իրավական համակարգի անցումային գործընթաց
- 6 Որոշ տնտեսական ցուցանիշներ
- 7 Տեխնիկական համագործակցության ծրագրեր
- 8 Հայաստանի քարտեզ

Հավելված 1. Բանկի հաստատված գործարքներ և ծրագրերի պորտֆել

(առ 2005թ. սեպտեմբերի 30, միլիոն եվրո)

ըստ հատվածների

Հատված	Ֆինանսավորվող ծրագրեր					Պորտֆելի զուտ արժեք (մնացորդ)			
	Ծրագրերի թիվը	Ծրագրերի ընդհ. արժեքը (գումարը)	ՎՋԵԲ ֆինանսավորում	Կես. կշիռը ՎՋԵԲ ընդհ. ֆին. մեջ, %	Տրամադրված	Պորտֆել	Տես. կշիռը ընդհ. պորտֆելի մեջ, %	Չհատկացված գումարներ	Աշխատող (եկամտաբեր) ակտիվներ
Ֆինանսական հաստատություններ	16	16.7	16.7	16%	11.9	13.9	36%	4.0	9.8
Ենթակառուցվածքներ	3	97.4	66.8	62%	66.1	15.8	40%	0.7	15.1
<i>Էներգետիկա</i>	<i>2</i>	<i>75.5</i>	<i>49.0</i>	<i>46%</i>	<i>48.3</i>	<i>13.2</i>	<i>33%</i>	<i>0.7</i>	<i>12.5</i>
<i>Տրանսպորտ</i>	<i>1</i>	<i>21.9</i>	<i>17.8</i>	<i>16%</i>	<i>17.8</i>	<i>2.6</i>	<i>7%</i>	<i>0.0</i>	<i>2.6</i>
Ձեռնարկությունների աջակցություն	5	55.0	24.0	22%	19.4	9.6	24%	3.3	6.2
<i>Ագրոբիզնես</i>	<i>2</i>	<i>44.1</i>	<i>17.2</i>	<i>16%</i>	<i>17.2</i>	<i>3.7</i>	<i>9%</i>	<i>0.0</i>	<i>3.7</i>
<i>Արդյունաբերություն</i>	<i>3</i>	<i>10.9</i>	<i>6.8</i>	<i>6%</i>	<i>2.2</i>	<i>5.9</i>	<i>15%</i>	<i>3.3</i>	<i>2.5</i>
Ընդհանուր՝ երկրի համար	24	169.1	107.5	100%	97.4	39.3	100%	8.0	31.1

ըստ պորտֆելի դասի և ներդրման տեսակի

	Ֆինանսավորվող ծրագրեր					Պորտֆելի զուտ արժեք (մնացորդ)			
	Ծրագրերի թիվը	Ծրագրերի ընդհ. արժեքը (գումարը)	ՎՋԵԲ ֆինանսավորում	Տես. կշիռը ՎՋԵԲ ընդհ. ֆին. մեջ, %	Տրամադրված	Պորտֆել	Տես. կշիռը ընդհ. պորտֆելի մեջ, %	Չհատկացված գումարներ	Աշխատող (եկամտաբեր) ակտիվներ
Մասնավոր	21	70.2	41.2	38%	31.1	24.6	62%	8.0	16.4
Պետական	3	98.9	66.3	62%	66.3	14.7	38%	0.0	14.7
Ընդամենը/ընդհանուր՝ երկրի համար	24	169.1	107.5	100%	97.4	39.3	100%	8.0	31.1
Առանց պետական երաշխիքի	21	70.2	41.2	38%	31.1	24.2	62%	8.0	16.4
Պետական երաշխիքով	3	98.9	66.3	62%	66.3	15.1	38%	0.0	14.7
Ընդամենը/ընդհանուր՝	24	169.1	107.5	100%	97.4	39.3	100%	8.0	31.1

Երկրի համար									
Պարտք	14	160.7	100.9	94%	94.1	34.5	88%	5.4	28.9
Բաժնեմասնակցություն	4	4.2	4.2	4%	3.3	2.4	6%	0.2	2.2
Երաշխիքներ	5	1.4	1.4	1%	0	1.4	4%	1.4	0.0
Պարտք և բաժնեմասնակցություն	1	2.8	1.0	1%	0	1.0	2%	1.0	0.0
Ընդամենը/ընդհանուր՝ Երկրի համար	24	169.1	107.5	100%	97.4	39.3	100%	8.0	31.1

Բանկի հաստատված գործարքներ և ծրագրերի պորտֆել (շարունակություն)

(առ 2005թ. սեպտեմբերի 30, միլիոն եվրո)

Գործարք	Ֆինանսավորվող ծրագրեր						Պորտֆելի զուտ արժեք (մնացորդ)			Պետական / Մասնավոր	Ստորագրման / կնքման տարին
	Ընդհանուր ծրագրի արժեք	Պարտք	Բաժն.	Երաշխիքներ	Ընդամենը ՎԶԵԲ ֆինանսավորում	Հատկացվել է	Պորտֆել	Չհատկացված գումար	Աշխատող (եկամտաբեր) ակտիվներ		
Ֆինանսական հաստատություններ											
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – Անելիք բանկ	0.8	0.8			0.8	0.8	0.6	0.0	0.6	Մաս.	2002
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – Հայէկոնոմբանկ	0.8	0.8			0.8	0.8	0.0	0.0	0.0	Մաս.	2000
Հունաստանի առևտրային բանկի (ՀԱԲ) ծրագիր Հայաստանում (ՀԱԲ հայեցակարգի ենթածրագիր) (բաժնեմասնակցություն)	1.1		1.1		1.1	1.1	0.0	0.0	0.0	Մաս.	1999
Տարածաշրջանային ԱԱԾ. Հայէկոնոմբանկ	1.0			1.0	1.0	0.0	1.0	1.0	0.0	Մաս.	2002
Տարածաշրջանային ԱԱԾ. Հայներարտբանկ	0.0			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	Մաս.	2001
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – ՀԳՓԲ	2.5	2.5			2.5	2.5	2.5	0.0	2.5	Մաս.	2003
Տարածաշրջանային ԱԱԾ. Անելիք բանկ	0.3			0.3	0.3	0.0	0.3	0.3	0.0	Մաս.	2003
Տարածաշրջանային ԱԱԾ. ՀԳՓԲ	0.1			0.1	0.1	0.0	0.1	0.1	0.0	Մաս.	2004
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – Անելիք բանկ	2.1	2.1			2.1	2.1	2.1	0.0	2.1	Մաս.	2004
Հայէկոնոմբանկ, բաժնեմասնակցություն	1.4		1.4		1.4	0.9	0.9	0.0	0.9	Մաս.	2004
Տարածաշրջանային ԱԱԾ. Ինեկո բանկ	0.0			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	Մաս.	2005
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – ՀԳՓԲ	2.5	2.5			2.5	2.5	2.5	0.0	2.5	Մաս.	2005
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – Ինեկո բանկ	0.8	0.8			0.8	0.4	0.8	0.4	0.4	Մաս.	2005
ՄՀՖԾ – ՀԳՓԲ (ռիսկի լրիվ ստանձնումով)	1.2	1.2			1.2	0.0	1.2	1.2	0.0	Մաս.	2005
ՈՒՆԾ. Կասկադ ինչուրդնս էնդ ժեինչուրդնս	0.4		0.4		0.4	0.0	0.2	0.2	0.0	Մաս.	2005
Հայաստանյան բանկերի ֆինանսավորման ծրագիր – Հայէկոնոմբանկ	1.7	1.7			1.7	0.8	1.7	0.8	0.8	Մաս.	2005
Ընդամենը	16.7	12.4	2.9	1.4	16.7	11.9	13.9	4.0	9.8		
Ենթակառուցվածքներ											
<i>Էներգետիկա</i>											

ՈՒՎԾ. Բազենց ՓԲԸ	1.1	1.1			1.1	0.4	1.1	0.7	0.4	Մաս.	2005
Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկ, Հայաստանի Հանրապետություն	74.4	47.9			47.9	47.9	12.1	0.0	12.1	Պետ.	1993
Տրանսպորտ											
Երևանի Զվարթնոց օդանավակայանի բեռնահամալիր	21.9	17.8			17.8	17.8	2.6	0.0	2.6	Պետ.	1994
Ընդամենը	97.4	66.8			66.8	66.1	15.8	0.7	15.1		
Ձեռնարկությունների աջակցություն											
Ազդրբիզնես											
Գյուղատնտեսական մեծածախ շուկայի ծրագիր	2.6	0.6			0.6	0.6	0.0	0.0	0.0	Պետ.	1995
Երևանի կոնյակի գործարան	41.5	16.6			16.6	16.6	3.7	0.0	3.7	Մաս.	2000
Արդյունաբերություն											
Հայաստանի պղնձի ծրագիր	6.8	4.5			4.5	0.9	3.6	2.3	1.2	Մաս.	2002
ՈՒՆԾ. Շեն կոնցերն ՓԲԸ	1.3		1.3		1.3	1.3	1.3	0.0	1.3	Մաս.	2004
ՈՒՆԾ. Լիքվոր ՓԲԸ	2.8	0.6	0.4		1.0	0.0	1.0	1.0	0.0	Մաս.	2005
Ընդամենը	55.0	22.3	1.7		24.0	19.4	9.6	3.3	6.2		
Ընդամենը/ընդհանուր՝ երկրի համար	169.1	101.5	4.6	1.4	107.5	97.4	39.3	8.0	31.1		
Ընդամենը ծրագրեր					24		19		13		

**Բանկի հաստատված գործարքներ և ծրագրերի պորտֆել (շարունակություն)
Ծրագրերի փաթեթ ¹³**

(առ 2005թ. սեպտեմբերի 30)

Հատված	<i>Միլիոն եվրո</i>	Տոկոս	Գործար- նություն- ների թիվ	Տոկոս
Ֆինանսական հաստատություններ, ներառյալ.	1.2	3%	1	12%
Վարկային գծեր (ՄՀՖԾ)	1.2	3%	1	12%
ԱԱԾ	0	0%	0	0%
Բաժնեմասնակցություն	0	0%	0	0%
Մասնավոր ձեռնարկություններ, ներառյալ.	37.6	97%	7	88%
ՈԻՆԾ, բաժնեմասնակցություն	5.7	15%	3	38%
ՈԻՎԾ	3.7	9%	1	12%
Կորպորատիվ վարկեր	28.2	73%	3	38%
Ընդամենը	38.8	100%	8	100%
Որից.				
Մասնավոր	38.8	100%	8	
Պետական	0	0%	0	

¹³ Ծրագրերը, որոնք անցել են Ընդհանուր ուսումնասիրություն կամ համարժեք հաստատում 2005թ. սեպտեմբերի վերջի դրությամբ: Այս փաթեթը արտացոլում է միայն ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ներկա վիճակը և չի հավակնում ներկայացնել այն բոլոր ծրագրերի համախմբությունը, որոնք կարող են ձեռնարկվել Բանկի կողմից առաջիկա երկու տարիների ընթացքում:

Հավելված 2. Քաղաքական գնահատում

Հոդված 1-ի հետ համապատասխանությունը

Հայաստանը հայտարարել է իր հանձնառությունը բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքների նկատմամբ՝ համաձայն Բանկի հիմնադրման համաձայնագրի 1-րդ հոդվածի պայմանների, չնայած այս սկզբունքների կիրառումը նախորդ ռազմավարական ժամանակաշրջանում այնքան էլ հավասարաչափ չէր: 2003թ. ընտրություններից ի վեր քաղաքականության մեջ գերակշռող դեր է խաղացել հզոր գործադիր ճյուղը և Ազգային ժողովի՝ նախագահին հարող մեծամասնությունը: Որոշ առաջընթաց է գրանցվել ընտրական օրենսգրքի ժողովրդավարացման, զանգվածային տեղեկատվության միջոցների և տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության բարեփոխման և պետական կառավարման հզորացման ուղղությամբ: Համազգային հանրաքվեի միջոցով ընդունվեցին սահմանադրական բարեփոխումները, որոնք հնարավորություն կտան կիրառել քաղաքական համակարգում զսպումների և հակակշիռների սկզբունքը: Սակայն այս հանձնառությունների իրականացման համար անհրաժեշտ քաղաքական կամքի առկայությունը մնում է բաց հարց:

Քաղաքական պատասխանատվություն

Հայաստանում քաղաքական առաջնորդները պատասխանատու են իշխանության բաժանման (տարանջատման) և ընտրությունների անցկացման համար՝ համաձայն Սահմանադրության դրույթների: Սակայն Սահմանադրությունը նախատեսել է չափազանց հզոր գործադիր իշխանություն, և իրականում քաղաքական համակարգում զսպումների ու հակակշիռների մեխանիզմը թույլ է: Ավելին, ընտրությունների անցկացումը չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

Վերջին մի քանի տարիներին ՀՀ նախագահի աշխատակազմը և կառավարությունը փորձել են բարեփոխել Սահմանադրությունը և իշխանության մի մասը տեղափոխել գործադիրից օրենսդիրին՝ համաձայն 2001թ. Եվրախորհրդին միանալու գործընթացում ստանձնած պարտավորությունների: 2003թ. ձախողվեց բարեփոխումների վերաբերյալ հանրաքվեն՝ ընտրողների ցածր ակտիվության պատճառով, և այդ ժամանակից ի վեր նախագահի աշխատակազմը և ԱԺ առաջատար կուսակցությունները քննարկել են նոր բարեփոխումների նախագիծը: Ազգային ժողովի կողմից 2005թ. սեպտեմբերին հաստատվեց սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթը՝ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների ակտիվ առարկումների պայմաններում, որոնք բոյկոտեցին քվեարկությունը: Բարեփոխումները ներառում են Ազգային ժողովի լիազորությունները և դատական իշխանությունների անկախությունը ամրապնդող միջոցներ: Բարեփոխումները հավանության են արժանացել Եվրախորհրդի Վենետիկյան հանձնաժողովի փորձագետների կողմից, որոնք եզրակացրել են, որ փաթեթի հաստատումը հանրաքվեի միջոցով զգալիորեն կնպաստի երկրի

ժողովրդավարացմանը և կիսամապատասխանեցնի այն մարդու իրավունքների պաշտպանության ու օրենքի գերակայության եվրոպական չափանիշներին:

Երկրորդ հանրաքվեն անցկացվեց նոյեմբերի 27-ին: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ)՝ ընտրողների մասնակցությունը կազմում էր մոտավորապես 65 տոկոս (հանրաքվեի կայացած համարելու համար անհրաժեշտ մեկ երրորդից շատ ավելի), և առաջարկների նկատմամբ հավանությունը ավելի քան ակնհայտ էր՝ փաթեթի օգտին քվեարկել էր բնակչության ավելի քան 93 տոկոսը: Քաղաքական ընդդիմությունը, Հայաստանի անկախ ՀԿ-ները և Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի փոքր դիտորդական առաքելությունը սուր քննադատության ենթարկեցին քվեարկության անցկացման կարգը: Դիտորդները ընտրողների մասնակցության ցուցանիշները և բարեփոխումների նկատմամբ հասարակության աջակցության մակարդակը անհավանական համարեցին՝ մասնավորապես հաշվի առնելով ընտրազանգվածի քաղաքական ապատիայի ներա վիճակը: Որոշ դիտորդներ ներկայացրին մեղադրանքներ քվեատուփերի զանգվածային լցուման վերաբերյալ՝ հիմք ընդունելով որոշ ընտրատարածքներում քվեարկողների ցուցակների փոփոխման և այլ խախտումների մասին տեղեկությունները:

Ընտրական օրենսգրքի դրական փոփոխությունները, որոնց անցած մի քանի տարիների ընթացքում սատարել է Եվրախորհուրդը, նույնպես օրենքի ուժ են ստացել 2005թ.: Փոփոխությունները վերաբերում են օրենսդիրների ընտրության համակարգին՝ մեծացնելով խորհրդարանական համամասնական մանդատների թիվը, համապատասխանաբար նվազեցնելով մեծամասնական մանդատների թիվը: Սա հենվում է 2002թ. ընդունված նմանատիպ փոփոխությունների վրա և կարող է ավելացնել քաղաքական կուսակցությունների զարգացման դրական ազդակները: Ընտրական օրենսգրքի փոփոխությունները նաև նպատակ ունեն մեկուսացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) գործադիր մարմնի քաղաքական ազդեցությունից: Նոր օրենսգիրքը նվազեցնում է նախագայի կողմից ուղղակիորեն նշանակվող ԿԸՀ անդամների թիվը երեքից մեկի: Սա համապատասխանում է Կենետիկյան հանձնաժողովի առաջարկներին, որը իշխանությունների հետ միասին սերտորեն ներգրավված է եղել փոփոխությունների մշակման գործընթացում, սակայն դեռևս հարց է մնում, թե արդյոք այն մարմինները, որոնք այսուհետև նշանակելու են ԿԸՀ մյուս երկու անդամներին, այն է՝ նախագահին հարող խորհրդարանական խմբակցությունը և ՎՃՌԲԵԿ դատարանը, կկարողանան նախագահից անկախ գործել:

Կենետիկյան հանձնաժողովի փորձագետները, որոնք ուսումնասիրել են Ընտրական օրենսգիրքը, գովաբանել են իշխանություններին՝ Հայաստանում «ընտրակարգի օբյեկտիվության, չեզոքության ու թափանցիկության նկատմամբ վստահության բացակայության» վերացման ուղղությամբ կատարվող դրական քայլերի համար: Չնայած բարեփոխումներում ակնհայտ լավագույն մտադրություններին՝ հանձնախումբը զգուշացրել է, որ «Օրենսգրքի արդար կիրարկումը մնում է կենսականորեն կարևոր հարց իրապես ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար»: Ժողովրդավարական ընտրությունների անցկացման՝ իշխանությունների քաղաքական կամքի առաջին քննությունը եղավ

2005թ. սեպտեմբերին և հոկտեմբերին՝ տեղական իշխանությունների մարմինների ընտրության ընթացքում: Եվրախորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների համաժողովի դիտորդների բնորոշմամբ՝ դրանք բավականին հաջող անցան: Համաժողովի առաքելության նախագահը եզրակացրեց, որ «տեղական մարմինների ընտրությունները հիմնականում անցան Եվրախորհրդի ընտրական չափանիշներին համապատասխան: Ընտրության գործընթացը ընդհանուր առմամբ բավարար էր»: Հիմնական քննադատությունը ժողովրդավարական կենսունակության բացակայությունն էր. քաղաքական ընդդիմության առաջատար կուսակցությունները շահագրգռվածության ցածր մակարդակ ցուցաբերեցին, իսկ ՋԼՄ-ները անհավասարակշռված ձևով լուսաբանեցին ընտրությունները:

Քաղաքացիական հասարակությունն աճում է՝ մասշտաբով և մասնագիտական մակարդակով, և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով քննարկվող հիմնախնդիրների շրջանակը ընդլայնվում է: Քաղաքացիական հասարակությունը ներայացնող խմբերի կողմից քաղաքական ակտիվությունը կայուն աճ է արձանագրում անցած երկու տարիների ընթացքում՝ շնորհիվ 2003թ. սեպտեմբերին Տեղեկատվության ազատության մասին օրենքի ընդունման: Չնայած օրենքի կիրառումը անհավասարաչափ է, այն ավելացրել է հասարակության համար կառավարական մարմինների և հանրային ծառայություններ մատուցողների գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը: Քաղաքացիական հասարակության խմբերը ավելի ու ավելի են ներգրավվում ժողովրդավարության կառուցման ու տնտեսական զարգացման ծրագրերում: Կարևոր է նշել, որ կառավարության կողմից քաղաքացիական հասարակության խմբերի ներգրավումը ավելացել է: Անկախ ոչ կառավարական հասարակական կազմակերպությունները (ՀԿ) ներգրավված են գործունեության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կառավարության կողմից վերջերս ընդունված հակակոռուպցիոն ծրագրի իրականացման, առողջապահական ու կրթական ոլորտների բարեփոխումների առաջընթացի, իրավական բարեփոխումների ուղղությամբ ներդրվող ջանքերի և մաքսային վարչարարության ասպարեզում իրականացված բարեփոխումների մոնիտորինգը: ՀԿ-ները ավելի սերտորեն են համագործակցում խորհրդարանական մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ՝ շահերի պաշտպանությանն ուղղված և մոնիտորինգային ծրագրերում:

Սակայն որոշ ՀԿ-ների ներկայացուցիչներ բողոքում են, որ կառավարությունը հետաքրքրվում է միայն «ձևը» պահելով, այլ ոչ թե քաղաքացիական հասարակության խմբերի ներգրավվածությունը ապահովելով: Ստեղծվում են խորհրդակցական խմբեր ու հանձնախմբեր, սակայն քաղաքականությունները իրապես չեն փոխվում: Որոշ «զգայուն» հարցեր ընդհանրապես չեն քննարկվում, հատկապես ԱՊՀ երկրներում վերջերս տեղի ունեցող «գունավոր հեղափոխությունների» լույսի ներքո, որոնք լրացուցիչ զգուշություն են ներմուծել իշխանությունների գործելակերպում: 2004թ. գարնան հանրահավաքներին քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունների մասնակցությունը, հանրահավաքներ, որոնք ուժով ցրվեցին ոստիկանության

կողմից, նրանց դարձրել է քաղաքական անկայունության թվացյալ աղբյուր, այլ ոչ թե քաղաքականության մշակման մեջ գործընկերներ:

Օրենքի գերակայությունը

Սահմանադրությունը սահմանում է դատական մարմինների անկախությունը և անմեղության կանխավարկածը, սակայն այս դրույթները ոչ միշտ են իրականացվում: Դատական մարմինները դեռևս երբեմն շարունակում են ենթարկվել քաղաքական միջամտությունների և անբավարար մասնագիտական մակարդակի ազդեցությանը, մինչ ընդդիմության ակտիվիստները շարունակում են կամայական կերպով ազատագրկման մեջ պահվել:

Համաձայն Ամերիկյան իրավաբանական ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիական տարածաշրջանի օրենսդրական նախաձեռնության (ԱԻԸ/ԿԵԵՕՆ) 2004թ. անցկացված հետազոտության՝ դատարանները դատական գնահատման (վերանայման) սահմանափակ լիազորություններ ունեն և նրանց որոշումները քաղաքական մարմինների կողմից պարտադիր կատարման ենթակա չեն: Օրինակ՝ Սահմանադրական դատարանի առաջարկը 2003թ. վիճահարույց նախագահական ընտրություններից մեկ տարի անց վստահության հանրաքվե անցկացնելու վերաբերյալ իշխանության կողմից անտեսվեց, որը բերեց հասարակության կողմից դժգոհության աճի: Գլխավոր դատախազը պարզապես անտեսեց դատարանի կոչը, որը ուղղված էր քվեատուփերի լցումն ու ընտրությունների օրը կայացած այլ չարաշահումների վերաբերյալ մեղադրանքների առնչությամբ քրեական հետաքննություն սկսելուն:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպությունները և արտասահմանյան երկրների դեսպանատները ընդդիմության ակտիվիստների ձեռքակալումը դիտարկեցին որպես քաղաքական ակցիա, իսկ միջազգային դիտորդները մի շարք խախտումներ արձանագրեցին նման դեպքերի համար նախատեսված ընթացակարգերում: Համաձայն ՀՀ-ում Մարդու իրավունքների պաշտպանի տվյալների՝ 2004թ. զարման հանրահավաքի ընթացքում մոտ 35 մարդ է ազատագրվել մինչև 15 օր՝ համաձայն խորհրդային ժամանակների օրենքի, որը թույլ է տալիս վարչական ազատագրկում: Ընդդիմադիր կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպությունների դիտորդները մեղադրանք են ներկայացնել՝ նշելով, որ դատական մարմինները «գրպանի դատարանի» դեր են խաղացել ոստիկանության համար:

ԱԻԸ/ԿԵԵՕՆ 2004թ. հաշվետվությունը դատական բարեփոխումների մասին նշում է լուրջ խնդիրներ, որոնք առկա են Հայաստանի դատավորների մասնագիտական պատրաստվածության ասպարեզում: Չնայած դատավորների աշխատավարձը զգալիորեն բարձրացվել է և հիմնականում այն ժամանակին է ստացվում, այն շարունակում է ցածր մնալ՝ դրանով իսկ դժվարացնելով ազնիվ ու նվիրված կադրերի ներգրավումը և պահպանումը համակարգում: Կաշառքները բավականին հաճախ են հանդիպում, և «հեռախոսային արդարության» երևույթը, որի միջոցով կառավարության ներկայացուցիչները փորձում են ազդել կամ

թելադրել դատարանի որոշումը, շարունակում են տեղ գտնել: 2004թ. Ղատարանների նախագահների խորհուրդը ընդունել է հակակոռուպցոն պլան համակարգի համար, սակայն դեռևս դրա բաղադրիչներից ոչ մեկը չի իրականացվել:

Հայաստանում կոռուպցիան շարունակում է լուրջ խնդիր մնալ: Համաձայն Թրենսփերենսի Ինթերնեշնլ կազմակերպության վերջին զեկույցի՝ Հայաստանի կոռուպցիայի գիտակցման ցուցանիշը 2004թ. 3.1-ից իջել է մինչև 2005թ. 2.9 (1-10 սանդղակում, որտեղ 10 ամենավազ կոռումպացվածն է): Չնայած այժմ Հայաստանը ԱՊՀ երկրներում ամենաբարձր ցուցանիշն ունի (Սոլդովայի հետ հավասար), երկրի այսքան ցածր ցուցանիշը այն դնում է Թրենսփերենսի Ինթերնեշնլ կազմակերպության սահմանած շեմից էլ ցածր, շեմ, որը բնորոշ է լայնորեն տարածված կոռուպցիային: ՎՋԵԲ/ՀԲ Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության ուսումնասիրության (ԳՄՁԳՈՒ) 2005թ. արդյունքները նույնպես ցույց են տալիս կաշառակերության ու կոռուպցիայի այլ վարչական դրսևորումների նվազեցման հետ կապված դժվարություններ: Ընկերությունները միջինում կոռուպցիան ավելի մեծ խոչընդոտ են համարում գործարար ոլորտում և ավելի շատ կաշառք են տալիս պետական պաշտոնյաներին ինչ-որ գործ անելու համար, քան 2002թ.: Պետական պատվերների տեղաբաշխման մրցույթներին մասնակցող ընկերությունները հայտնում են, որ պաշտոնյաներին վճարվող գումարները՝ որպես պայմանագրի արժեքի որոշակի տոկոս, ավելի բարձր են այժմ, քան 2002թ.:

Կառավարության հակակոռուպցիոն ծրագրին, որը ընդունվել է 2003թ. որոշ ժամանակ անհրաժեշտ եղավ գերակայությունների սահմանման ու կազմակերպչական հարցերի կարգավորման համար: 2004թ. հունիսին ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որի նախագահն է Վարչապետը: Հանձնաժողովը ունի կառավարության ռազմավարության իրականացման հսկողության նպատակով ստեղծված համակարգող հանձնախումբ, որտեղ ներկայացված են մի շարք ՀԿ-ներ: Անցած մեկ տարվա ընթացքում առաջընթաց է նկատվել կառավարության հակակոռուպցիոն գերակայությունների հետ կապված օրենսդրության ոլորտում, չնայած հսկողություն իրականացնող կազմակերպությունների շրջանում դեռևս մտահոգության առարկա է կիրարկման հիմնախնդիրը: 2004թ. Հայաստանը միացած Եվրոխորհրդի՝ Կոռուպցիայի դեմ հանդես եկող պետությունների խմբին (ԿԴՊԽ) և 2003թ. ի վեր համագործակցում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՁԿ) հետ՝ Անցումային երկրների համար հակակոռուպցիան գործողությունների ստամբուլյան ծրագրի ընթացակետերում:

Քաղաքացիական և մարդու իրավունքներ

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է հիմնական ժողովրդավարական իրավունքներն ու ազատությունները, սակայն այս երաշխիքների իրականացումը անհետևողական է եղել: Համաձայն մարդու իրավունքների ընթացակարգերի վերաբերյալ ԱՄՆ Պետական դեպարտամենտի հաշվետվության՝ դեռևս առկա են մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված լուրջ խնդիրներ:

Մտահոգությունների կենտրոնում են 2004թ. գարնանը տեղի ունեցած իրադարձությունները, երբ հանրաքվեի հազարավոր մասնակիցներ էին հավաքվել Երևանի փողոցներում՝ բողոքելու կառավարության դեմ, որը չջանկացավ վստահության հանրաքվե անցկացնել 2002թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ: Համաձայն վստահելի աղբյուրների՝ ոստիկանությունը ուժ է գործադրել ապրիլի 12-13 անցկացված հանրահավաքները ցրելու համար և ձերբակալել է ավելի քան 100 մարդու: Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵՄԽՎ) ընդունել է բանաձև՝ կոչ անելով կառավարությանը վերջ տալու ընդդիմության նկատմամբ ուժի կիրառումը և ազատելու բոլոր քաղաքական բանտարկյալներին: Սա չունեցավ այն ազդեցությունը, որի համար նախատեսված էր: Մայիսի 20-ին ոստիկանությունը ձերբակալեց ընդդիմության մոտ 25 ակտիվիստների նախապես պլանավորված հանրահավաքից առաջ՝ ավելի ևս սրելով ոստիկանության կողմից կամայական ձերբակալությունները քաղաքական նպատակներով օգտագործելու հարցը: Վերջին տարիներին ավելացել են նաև հարձակումները մարդու իրավունքների ակտիվ պաշտպանների և ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների վրա:

Վերջերս ընդունված Հանրահավաքների և ցույցերի մասին օրենքը քննադատության ենթարկվեց ԵԱՀԿ կողմից: Օրենքը սահմանափակում է քաղաքացիական խմբերի հնարավորությունները՝ կազմակերպելու ինքնակամ, խաղաղ հանրահավաքներ. այն սահմանափակում է այն վայրերը, որտեղ կարող են հանրահավաքներ կազմակերպվել առանց թույլտվության, ներառյալ բոլոր կառավարական հաստատությունների առջև: Այն ոստիկանությանը իրավունք է տալիս ուժի կիրառմամբ ընդհատելու անօրինական հանրահավաքները և ցույցերը: Օրենքի որոշ կողմերն անհարիր են Մարդու իրավունքների եվրոպական հռչակագրի ոգուն, որը վավերացվել է Հայաստանի կողմից 2002թ.: ԵԱՀԿ փորձագետները շարունակում են աշխատել կառավարության հետ՝ հասնելու օրենքի բարելավման հնարավոր ուղիների վերաբերյալ համաձայնության և այն համապատասխանեցնելու հավաքների ազատության մասին եվրոպական չափորոշիչներին:

Սահմանադրությունը մասնավորապես երաշխավորում է մամուլի ազատությունը, և ՋԼՄ-ների գործունեության օրենսդրական դաշտը հիմնականում համապատասխանում է այս երաշխիքներին: ՋԼՄ-ների մասին օրենքի փոփոխությունները, որոնք ընդունվել են 2003թ. դեկտեմբերին, վերացնում են լրագրողների պարտավորությունը՝ բացահայտելու տեղեկատվության ու ֆինանսավորման աղբյուրները, որը մարդու իրավունքները պաշտպանող տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ բանավեճի առարկա էր: Հայաստանն ունի ՋԼՄ-ների բավականին մեծ ու բազմազան մասնավոր հատված, չնայած հեռահաղորդակցության ասպարեղում ամենաազդեցիկն է հանդիսանում պետական ազգային հեռուստատեսությունը: Մասնավոր ՋԼՄ-ները նույնպես ենթարկվել են քննադատության նեղ գործարար կամ իշխանական շահերի նկատմամբ հակվածության համար: Վերջին երկու տարիների ընթացքում անկախ լրագրողների վրա մի շարք հարձակումներ են եղել, ինչպես նաև ահաբեկության

դեպքեր՝ պարտադրելու մասնավոր ՁԼՄ-ներին ներմուծել իրենց աշխատանքային պրակտիկայում սահմանափակումներ և «գրաքննություն»: Վարկաբեկումը դեռևս քրեական հանցանք է համարվում Հայաստանում, որը կարող է խաթարել լրագրողական հետազոտությունները: Չնայած քրեական օրենսգիրքը բարեփոխվել է 2004թ., վերացնելով վարկաբեկումը մինչև երեք տարվա ազատազրկմամբ պատժելու մասին դրույթը, հայտնի է, որ դատարանները մեծ տույժեր են սահմանում նման դեպքերում, որոնք ֆինանսապես առանց այդ էլ նեղ դրության մեջ գտնվող մասնավոր ՁԼՄ-ները չեն կարող իրենց թույլ տալ վճարել:

Արտաքին հարաբերություններ

Հայաստանը ամրապնդել է իր կապերը արևմուտքի հետ երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրերի միջոցով՝ պահպանելով հանդերձ իր ռազմավարական միությունը Ռուսաստանի հետ: Որպես Եվրոպական Միության Նոր հարևաններ ծրագրի մասնակից՝ երկրի իշխանությունները աշխատում են Բրյուսելի պաշտոնյաների հետ՝ ԵՄ - Հայաստան գործողությունների պլանի շրջանակներում, որը կգարգացնի հետագա քաղաքական ու տնտեսական ինտեգրացումը Եվրոպայի հետ: Միևնույն ժամանակ Հայաստանը սերտ տնտեսական հարաբերությունների մեջ է Ռուսաստանի հետ, մասնավորապես էներգետիկայի ոլորտում, ինչպես նաև համագործակցում է կովկասյան տարածաշրջանում պաշտպանության և անվտանգության ոլորտներում: Ի տարբերություն տարածաշրջանի այլ երկրների՝ Հայաստանը չի ցուցաբերել Հյուսիսատլանտյան դաշինքին միանալու հետաքրքրություն, չնայած ստորագրել է Գործընկերություն հանուն խաղաղության նախաձեռնությունը:

Հարավկովկասյան տարածաշրջանում Հայաստանը մնում է աշխարհաքաղաքական իմաստով մեկուսացված՝ Ադրբեջանի տարածքում հայկական անկլավի՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ չլուծված հակամարտության պատճառով: Անցած տարվա ընթացքում բարձր մակարդակով շփումներից հետո հակամարտության կարգավորման հեռանկարները բարելավվել են, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում անցկացվող միջազգային բանակցությունները, վերսկսվեցին 2004թ.: Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները հանդիպել են մի քանի առիթներով, իսկ երկու նախագահները հանդիպել են ԱՊՀ գագաթաժողովի շրջանակներում 2005թ. օգոստոսին (բարձր մակարդակի հանդիպումների պլաններ կան 2006թ. համար), սակայն երկու երկրներում էլ կարգավորման համար առկա են մնում ներքին խոչընդոտներ:

Հակամարտության լուծումը չի կարելի շուտ ակնկալել, հատկապես, քանի որ Ադրբեջանում խորհրդարանական ընտրություններ են նախատեսված նոյեմբերին: Ղա նշանակում է, որ Հայաստանի ու Թուրքիայի՝ տարածաշրջանում Ադրբեջանի բնական դաշնակցի միջև հարաբերությունները կմնան լարված, և երկու երկրների միջև սահմանը պաշտոնապես փակ կմնա: Այնուամենայնիվ, երկու երկրների միջև առկա է մարդկանց և ապրանքների աճող հոսք (օդով և Վրաստանի տարածքով): Հարաբերությունները Վրաստանի՝ դեպի արտաքին աշխարհ տանող Հայաստանի գլխավոր ճանապարհի միջև բարեկամական են: Երբեմն, սակայն, հարաբերությունները սրվում են Վրաստանի հայազգի բնակչության վրա ազդող

հիմնախնդիրների պատճառով: Տնտեսական համագործակցությունը Իրանի հետ շարունակում է աճել: Հողային ճանապարհով Հայաստանի առևտրի մոտ 20 տոկոսը այժմ անցնում է Իրանի տարածքով, և երկու երկրները համագործակցում են էներգետիկայի ոլորտի մի շարք ծրագրերում, ներառյալ բնական գազի և հիդրոէլեկտրաէներգիայի ոլորտները:

Հավելված 3. Անցումային շրջանի մարտահրավերների գնահատում

ՀԱՅԱՍՏԱՆ	Կառուցվածք	Հաստատություններ	Գործունեություն	Ծանոթություններ
Ագրոբիզնես	<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<i>Միջին</i>	Իրականացվել են հողային օրենսդրության համապարփակ բարեփոխումներ, և զարգանում է անշարժ գույքի գրանցման համակարգը, սակայն դա դեռևս չի բերել հողի՝ որպես գրավի օգտագործման զգալի աճի: Ձգձգումներ վերամշակող և սպասարկող ընկերությունների սեփականաշնորհման գործընթացում: Բացի Հայգյուղփոխբանկից և ՄՖՀ-ներից, փոքր են գյուղատնտեսությանը տրամադրվող վարկավորման ծավալները:
Բանկային համակարգ	<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<i>Մեծ</i>	Կենտրոնական բանկը շարունակում է ամրապնդել բանկային կարգավորումը և քաջալերում է հատվածի համախմբումը, չնայած կիրարկումը շարունակում է թերություններ ունենալ: Բանկի սեփականության թափանցիկության անբավարար մակարդակը և դրա հետ կապված վարկավորման ու գրավի պահանջների իրացման հետ կապված անորոշությունը հետ են պահում հատվածի հետագա ընդլայնումը:
Էներգետիկ արդյունավետություն	<i>Մեծ</i>	<i>Միջին</i>	<i>Մեծ</i>	Էներգետիկայի ոլորտի անկախ կարգավորող մարմին հիմնադրվեց, տարիքները բարձրացվեցին և հավասարակշռվեցին: Ներմուծվեց (սահմանվեց) տարիք վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանելու համար: Այս շուկան դեռևս պետք է զարգանա:
Արդյունաբերություն	<i>Միջին</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Օրենսդրական ու կարգավորման դաշտի բարդություն, օրենքի կիրարկման թուլություն և կոռուպցիա: Չնայած նշվում է, որ այս իմաստով դրությունը Հայաստանում ավելի լավ է, քան այլ ԱՊՀ երկրներում, բարդ վարչարարական գործընթացները շարունակում են մնալ այն հիմնախնդիրները, որոնք դանդաղեցնում են գործարարության զարգացումը: Կորպորատիվ կառավարման և գործարար պրակտիկայի բարելավում է անհրաժեշտ:
Քաղաքային և շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքներ	<i>Միջին</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Քաղաքային հանրային ծառայությունների վերահսկողությունը քաղաքային իշխանությունների գործառույթն է և մասնավոր կոնցեսիոն հիմունքներով գործող մի ընկերություն ունի Երևանի ջրամատակարարման համակարգի շահագործման իրավունք, որի արդյունքում վերջին մի քանի տարիներին որոշակի առաջընթաց է նկատվել կորպորատիվ կառավարման ասպարեզում: Մասնավոր հատվածի մասնակցությունը սովորական երևույթ է հանրային տրանսպորտի ոլորտում: Սակայն ջրի տարիքները և հավաքագրման ցուցանիշները դեռևս ցածր են, և շատ քաղաքային ենթակառուցվածքներ փոքր քաղաքներում նշանակալի բարեփոխումների կարիք ունեն:
ՄՓՄԶ-ներ	<i>Փոքր</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Բիզնես սկսելը համեմատաբար հեշտ է: Չկա վարկային ռեզիստր կամ վարկային մասնավոր բյուրո: Առկա է սնանկացման մասին օրենսդրություն: Շատ փոքր է առևտրային բանկերի կողմից ձեռնարկությունների հատվածի վարկավորումը բացի ԿԶԵԲ-ի վարկային գծից, որը սկսվել է 2002թ.:
Բնական ռեսուրսներ	<i>Փոքր</i>	<i>Փոքր</i>	<i>Փոքր</i>	Հայաստանի բնական ռեսուրսների հատվածը շատ սահմանափակ է և հիմնականում

				կենտրոնանում է պղնձի վրա: ԿՋԵԲ-ը աշխատել է Հայաստանի Պղնձի ծրագրի հետ՝ սատարելու ռեստրուկտուրիզացիան: Չնայած ծրագիրն ունի զգալի առաջընթաց շրջակա միջավայրի պահպանության և կառավարման իմաստով, դեռևս շատ անելիքներ կան:
Ոչ բանկային ֆինանսական հաստատություններ	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Գոյություն ունի արժեթղթերի շուկայի մասին օրենսդրություն և համապատասխան կարգավորման դաշտ, սակայն կարգավորիչի ֆինանսական անկախությունը կարիք ունի հետագա ամրապնդման: Ապահովագրական ծառայությունների ոլորտի օրենսդրությունը և կարգավորումը չի համապատասխանում IAIS (ապահովագրական ծառայությունների ոլորտի կարգավորման միջազգային չափորոշիչներ) չափորոշիչներին: Կապիտալի և ապահովագրական շուկաների ծավալները մնում են շատ փոքր: Չկան որևէ սահմանափակումներ արտերկրից շուկա մուտքի վրա: Լիզինգային ոլորտում, չնայած իրավական դաշտ բավարար է, գործում է ընդամենը մեկ լիզինգային ընկերություն:
Էներգետիկա (էլեկտրաէներգիայի արտադրություն)	<i>Փոքր</i>	<i>Միջին</i>	<i>Միջին</i>	Ոլորտը «բացվել է», և մասնավոր հատվածը ակտիվորեն ներգրավված է ոլորտում: Անկախ կարգավորիչ է հիմնադրվել, սակայն դեռևս առկա են կարգավորման հետ կապված խնդիրներ, մասնավորապես տարիֆների բարձրացումները, որոնք կարտացոլեն բոլոր ծախսերը: Զգալի առաջընթաց է ձեռքբերվել հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ:
Մասնավոր բաժնետիրական հիմնադրամներ	<i>Մեծ</i>	<i>Միջին</i>	<i>Մեծ</i>	Չնայած կորպորատիվ կառավարման, հաշվետվողականության չափորոշիչների և վարկատուների իրավունքների պաշտպանության ոլորտներում որոշ բարելավումների և զարգացումների, երկիրը դեռևս չի ձևավորել մասնավոր բաժնետիրական հիմնադրամների կառավարիչների կամ ներդրողների խավ, որոնք կցանկանային ներդրումներ կատարել երկրում գործող մասնավոր բաժնետիրական հիմնադրամների մեջ:
Անշարժ գույք և զբոսաշրջություն	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Հողի առք ու վաճառքի լրիվ հնարավորություններ՝ բացի արտասահմանցիների համար: Առկա է պետության որոշ միջամտություն ոլորտում: Անշարժ գույքի շուկան գտնվում է զարգացման վաղ փուլում, ներառյալ նոր ծառայությունների և ֆինանսավորման մեթոդների ներմուծման իմաստով: Գործարար շրջանառության և պրակտիկայի ընդունված նորմերը կարիք ունեն զգալի բարելավման:
Հեռահաղորդակցություն	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Այս ոլորտը չունի կարգավորող անկախ մարմին և նախարարություն, որը (որոնք) կծեռնարկեին և կիրականացնեին անհրաժեշտ բարեփոխումներ: Գերիշխող օպերատորը սեփականաշնորհվել է: Ավելի վաղ երկարաժամկետ բացառիկ իրավունք էր տրամադրվել՝ և ֆիքսված ցանցի, և շարժական կապի համար, որը խոչընդոտում էր մրցակցության զարգացումը: Բոլորովին վերջերս միայն տրամադրվեց երկրորդ լիցենզիան շարժական կապի համար: Կորպորատիվ կառավարումը թույլ է, մասնավորապես փոքր բաժնետերերի նկատմամբ հարգանքի պարագայում:
Տրանսպորտ	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	<i>Մեծ</i>	Երկաթուղու ոլորտում շահագործման և քաղաքականության մշակման ու սահմանման գործառույթները առանձնացվել (տարանջատվել) են: Այս ոլորտում հիմնական գործունեությունը մասնակիորեն բացվել է մասնավոր հատվածի մասնակցության համար: Սակայն գործնականում

				ընկերությունը ֆինանսավորվում և վերահսկվում է պետության կողմից: Ճանապարհների ոլորտում վաղ 1990-ականներին ռեստրուկտուրիզացիայի փորձեր են արվել, և այս ոլորտի ֆինանսավորումը նույնպես բարելավվել է:
--	--	--	--	--

Հավելված 4: Շրջակա միջավայրի պաշտպանության հարցեր

Շրջակա միջավայրի իրավիճակը

Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների ազգային ծրագիրը (ՇՄՊԳԱԾ), որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 1998թ., անդրադառնում է երկրի՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող հիմնահարցերին, ներառյալ ջրի, հողի և անտառային պաշարների սակավացումը, բիոլոգիական բազմազանության սպառնալիքներին և շրջակա միջավայրի՝ առողջապահությանն առնչվող հարցերին: Հողի մեծ տարածքներ են ենթարկվել էռոզիայի, հողերի սողանքների և անապատացման: Լայնածավալ անօրինական անտառահատումները բերել են երկրի տարածքի 10 տոկոսից պակաս տարածքներում անտառների պահպանմանը: Գյուղական շրջաններում բարդ տնտեսական պայմանները բերել են բնական ռեսուրսների շահագործմանը (Երկրի նկարագրություն Յոհանեսբուրգի գազաթափողովի համար, 2002թ.): Ինչպես վաղ անցումային շրջանի այլ երկրներում, Հայաստանում շրջակա միջավայրի պաշտպանության և աղքատության հարցերը սերտորեն փոխկապակցված են, քանի որ բնական ռեսուրսների շարունակվող անխնա շահագործումը բերում է գյուղատնտեսական հատվածի արտադրողականության անկմանը, իսկ աղքատ բնակչությունը ավելի խոցելի է դառնում ռեսուրսների այսպիսի նվազման երևույթի նկատմամբ: Սևանա լճում, որը զբաղեցնում է երկրի տարածքի 5-10 տոկոսը (կախված նրանից, թե ինչպես է չափվում), և որը Հայաստանի միակ ազգային պարկը լինելուց բացի հանդիսանում է ձկան ու էլեկտրականության կարևոր աղբյուր, գրանցվում է ջրի մակարդակի անկում՝ ոռոգման ու հիդրոէլեկտրակայանների համար դրա օգտագործման արդյունքում:

Արդյունաբերական ու էներգետիկայի ոլորտներում Հայաստանը նույնպես ունի լուրջ մարտահրավերներ, որոնք կապված են շրջակա միջավայրի պաշտպանության հետ: Չնայած 1990-ականների տնտեսական անկումը հավանաբար իջեցրել է աղտոտվածության մակարդակը արդյունաբերական հատվածում, երկրի արդյունաբերությունը շարունակում է բաց թողնել աղտոտված ջուր առանց որևէ մշակման կամ քաղաքային կոյուղու համակարգ, կամ ուղղակիորեն գետերն ու ջրամբարները: Եվրամիությունը մտահոգություն է արտահայտում Մեծամորի ատոմակայանի անվտանգության վերաբերյալ խորհրդային ժամանակներում նախագծված ռեակտորների թերությունների և տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության պատճառով և ճնշում է գործադրում Հայաստանի վրա այն փակելու համար: Երկու ռեակտորներ ունեցող ատոմակայանը արդեն մեկ անգամ փակվել է 1989թ. մարտին Խորհրդային Միության կողմից անվտանգության հետ կապված մտահոգության արդյունքում՝ Հայաստանը ցնցած 1988թ. ավերիչ երկրաշարժից հետո: Սակայն ահագնացող էներգետիկ ձգնաժամի պատճառով, որի հիմնական շարժառիթներն էին երկրում վառելիքի բացակայությունը և Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից տնտեսական շրջափակումը, 1995թ. նոյեմբերի 5-ին Հայաստանը որոշեց վերագործարկել ատոմակայանի 440 մեգավատտ հզորությամբ երկրորդ բլոկը, որն այժմ մակատակարարում է երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի մոտ 40 տոկոսը: Ատոմային էներգետիկայի հետ կապված ռիսկերը ավելի են խորանում այն փաստից, որ ատոմային թափոնները անհրաժեշտ է պաշարել հենց

ատոմակայանի տարածքում թուրքա-ադրբեջանական շրջափակման պատճառով, իսկ վառելիքը պետք է բերվի Ռուսաստանից Վրաստանի օդային տարածքով: Չնայած ավելի վաղ Եվրամիությունը միլիոնավոր եվրոյի օգնություն էր տրամադրել անվտանգության խնդիրների լուծման համար, եվրոպական պետությունների խումբը սառեցրեց 100 միլիոն եվրո արժողությամբ էներգետիկայի ոլորտի դրամաշնորհը 2004թ. հունիսին՝ հղում կատարելով ատոմակայանը փակելու կառավարության պատրաստակամության բացակայությանը:

Շրջակա միջավայրի խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարությունը ավելացրել է միջավայրի պաշտպանությանը տրամադրվող ՀՆԱ-ի մասնաբաժինը 1998թ. 0.05 տոկոսից մինչև 2003թ. 0.09 տոկոս (դա դեռևս շատ փոքր է Եվրոմիության նոր անդամ երկրների համեմատությամբ. Լեհաստանում՝ 0.8 և Հունգարիայում՝ 0.5 տոկոս 2002թ.): Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների իրավիճակի վերաբերյալ գեկույցը (2002թ.) նշում է, որ չնայած ընդունվել են տնտեսության այս հատվածը կարգավորող մի շարք օրենսդրական ակտեր, դրանցից շատերը հնացել են երկրի իրավական ու տնտեսական իրադրության արագ փոփոխությունների արդյունքում և առաջ են բերում հակասություններ ու թերություններ: Այդ պատճառով գեկույցը նշում է, որ անհրաժեշտ է բարելավել տնտեսության այս հատվածը կարգավորող օրենսդրական դաշտը՝ շեշտադրելով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման չափորոշիչները և կարգավորման մեխանիզմները:

Միջազգային հաստատությունների գործունեությունը

Այլ կազմակերպությունների թվում Համաշխարհային բանկը իրականացրել է ծրագրեր՝ աջակցելով կառավարությանը հողի, ջրի, անտառային տնտեսության, բիոլոգիական բազմազանության և ռեսուրսների կառավարման բարելավման գործընթացներում, որոնք բերում են լեռնային գյուղական շրջաններում աղքատության նվազեցման: Իրականացվել են նաև ծրագրեր քաղաքային աղբահանման և կոյուղու հատվածներում: ՄԱԿ ԶԾ / Շրջակա միջավայրի պաշտպանության համաշխարհային հիմնադրամը իրականացրել է ծրագիր, որի նպատակն էր նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումը քաղաքային ջերմամատակարարման (ջեռուցման) և տաք ջրամատակարարման ոլորտում էներգետիկ արդյունավետության բարձրացման միջոցով: Վայրի տեսակների համաշխարհային հիմնադրամը (ՎՏՀՀ) աշխատել է Կովկասի էկոտարածաշրջանում էկոլոգիական կոնսերվացիայի (պահպանման) ծրագրի վրա, որը կազմված է հետևյալից. (ա) էկոտարածաշրջանի կենսաբանական և սոցիալ-տնտեսական գնահատում, (բ) գերակա տեսակներ, կարևորագույն տեսակներ, էկոտարածաշրջանի բիոլոգիական բազմազանության հեռահար և երկարաժամկետ տեսլականը և նպատակները, և (գ) էկոտարածաշրջանի կոնսերվացիայի (պահպանման) ընդհանուր ծրագիրը:

Հավելված 5. Իրավական համակարգի անցումային գործընթաց

Հայաստանի առևտրային գործունեության դաշտը կարգավորող օրենքներ

ՎՋԵԲ-ը մշակել ու կանոնավորապես թարմացնում է իր գործառնությունների երկրներում օրենսդրական բարեփոխումների գնահատման մասին հաշվետվություններ՝ շեշտադրելով որոշակի ոլորտներ, որոնք կարևոր են ներդրումային գործունեության տեսանկյունից. կապիտալի շուկա, ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենքներ և կորպորատիվ կառավարում, կոնցեսիաներ, անվճարունակություն, գրավով կամ այլ ապահովմամբ գործարքներ և հեռահաղորդակցություն: Գոյություն ունեցող գործիքները գնահատում են ինչպես օրենքների տեքստերի որակը (կոչվում է նաև «էքստենսիվություն»), այնպես էլ դրանց իրականացումը (կոչվում է նաև «արդյունավետություն»): Այդ գնահատումների արդյունքները կարելի է ուսումնասիրել հետևյալ ինտերնետային կայքում. www.ebrd.com/law: Այս հավելվածը ներկայացնում է Հայաստանում անցկացված գնահատման արդյունքները՝ գնահատումները իրականացրած Բանկի իրավական փորձագետների դիտողությունների հետ միասին:

Կապիտալի շուկաներ


Արժեթղթերի շուկան կարգավորող հիմնական օրենսդրությունը Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին օրենքն է (ԱՇԿՕ), որն ուժի մեջ մտավ 2000թ. օգոստոսի 1-ին և վերջերս փոփոխվել է 2004թ. հոկտեմբերին: ԱՇԿՕ-ը կարգավորում է արժեթղթերի թողարկումը, գրանցումը և հրապարակային առքուվաճառքը, հաշվետվողականության, տեղեկատվության բացահայտման և մրցութային առաջարկների ներկայացման ընթացակարգերը, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեությունը կարգավորող կանոնները և ինքնակարգավորվող կազմակերպությունների (ներառյալ Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի բորսաները) և Արժեթղթերի հանձնաժողովի կանոնակարգերը:

Արժեթղթերի շուկան կարգավորող մարմինը ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովն է (ՀՀ ԱՀ), որը հիմնադրվել է 2000թ. օգոստոսին ԱՇԿՕ-ի հիման վրա: Արժեթղթերի հանձնաժողովը պատասխանատու է ներդրողների պաշտպանության և արդար ու թափանցիկ շուկայի ձևավորման համար: Այն ունի կարգավորիչ և կիրարկման լիազորություններ օրենքով նախատեսված կոնկրետ հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովը կազմված է հինգ անդամներից, որոնք նշանակվում են հանրապետության նախագահի կողմից հինգ տարի ժամկետով: 2005թ. ապրիլին ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովը դարձել է ԱՀՄԿ (Արժեթղթերի հանձնաժողովերի միջազգային կազմակերպություն) անդամ:

Հայաստանի արժեթղթերի բորսան (Armex) գրանցվել է ԱՇԿՕ համաձայն ՀՀ ԱՀ կողմից որպես ինքնակարգավորվող կազմակերպություն 2001թ. փետրվարին:

2004թ. Արժեթղթերի շուկայի օրենսդրության իր գնահատման մեջ ՎՋԵԲ-ը համեմատել է հայկական արժեթղթերի շուկայի վերաբերյալ օրենսդրությունը ԱՀՄԿ կողմից հրապարակված Արժեթղթերի կարգավորման նպատակների և սկզբունքների հետ: Արդյունքները ցույց տվեցին, որ ազգային օրենսդրությունը միջին չափով է համապատասխանում («միջին համապատասխանություն») միջազգային չափորոշիչներին: Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից, հիմնական թերությունները նկատվել են «կարգավորիչ», «կոլեկտիվ ներդրումային ծրագրեր», «երկրորդային շուկա» և «ֆինանսական գործիքների առկայություն» բաժիններում: Գնահատման վերջերս թարմացված տարբերակը իրավական դաշտում զգալի փոփոխություններ ցույց չի տալիս և հաստատում է «միջին համապատասխանության» գնահատականը:

Արժեթղթերի շուկայի մասին օրենսդրության որակը – Հայաստան (2004թ.)



Ծանոթագրություն. առանցքների սահմանները ներկայացնում են համապատասխան իդեալական գնահատականները, այսինքն համապատասխանող ԱՀՄԿ «Արժեթղթերի կարգավորման նպատակների և սկզբունքների» կողմից սահմանված չափորոշիչներին: Ինչքան «լիքն է» այս «սարդոստայնը», այնքան տվյալ երկրի արժեթղթերի շուկաների մասին օրենսդրությունը մոտ է վերոհիշյալ սկզբունքներին:

Աղբյուր. Արժեթղթերի շուկաների վերաբերյալ օրենսդրության ՎՋԵԲ գնահատում, 2004թ.

«Կարգավորիչի» անկախության, խնդիրներին և պարտականություններին վերաբերող օրենսդրության դիտարկման ժամանակ գնատատումը ցույց տվեց, որ ՀՀ ԱՀ-ը ֆինանսավորվում է միայն պետական բյուջեից և այդ իսկ պատճառով չի կարող համարվել լրիվ անկախ: Կենտրոնական բանկի և ՀՀ ԱՀ-ի միջև խնդիրների և պարտականությունների բաշխումը հստակորեն չի սահմանվում օրենքով, և չկան գրավոր համաձայնագրեր երկու մարմինների միջև տեղեկատվության փոխանակման մասին: Վերջապես, օրենքը չի նախատեսում ՀՀ ԱՀ-ի լիազորությունը տեղեկատվություն փոխանակել արտերկրյա կարգավորող մարմինների հետ: Անցնելով «Կոլեկտիվ ներդրումային ծրագրեր» բաժնին՝ Հայաստանը դեռևս չունի օրենք, որն օրենսդրորեն կնախատեսի կոլեկտիվ ներդրումային մեխանիզմների հիմնում, և չունի նման գործող մեխանիզմներ: Չնայած Ներդրումային հիմնադրամների մասին կառավարության որոշմանը՝ ոչ մի գործունեություն չի ծավալվել այս դաշտում վերջին տասնամյակի ընթացքում: Ներկայումս Ներդրումային ընկերությունների մասին օրենքի նոր տարբերակ է մշակվում: «Երկրորդային շուկա» բաժնի դիտարկման ժամանակ գնահատումը ցույց է տվել, որ չկա ֆինանսական բարեխղճության, կարողության կամ գործունեության ոչ մի չափանիշ, որոնց պետք է բավարարեն այն անձինք, որոնք ուղղակի մուտք ունեն բորսա և ՀՀ ԱՀ-ը չունի ոչ մի ընթացակարգ՝ գնահատելու բորսայի համապատասխանությունը առաջադրված

սկզբնական պահանջներին: Վերջապես, «Ֆինանսական գործիքների առկայություն» բաժնում չկան սահմանված կանոնակարգեր ֆինանսական գործիքների մասնավոր տեղաբաշխման վերաբերյալ:


Եզրակացնելով նշենք, որ դեռևս շատ անելիքներ կան ընդհանուր իրավական և քաղաքականության դաշտը վերջնական տեսքի բերելու, կապիտալի շուկաների աճի համար անհրաժեշտ սատարող հաստատությունների զարգացման և հզորացման և շուկայում ակտիվ գործունեության խրախուսման համար բարենպաստ միջավայրի ապահովման համար:

Ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենքներ և կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարմանն առնչվող հիմնական օրենքը Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքն է (ԲԸՕ), որն ուժի մեջ է մտել 2001թ. դեկտեմբերին և վերջին անգամ փոփոխվել 2004թ. հունիսին:

Համաձայն ԲԸՕ՝ բաժնետիրական ընկերությունը (ԲԸ) կարող է լինել բաց և փակ: ԲԸ համարվում է բաց, եթե բաժնետերը իրավունք ունի փոխանցել իր բաժնետոմսերը առանց այլ բաժնետերերի համաձայնության: Օրենքը բաժնետերերին իրավունք է տալիս քայլեր ձեռնարկել չեզոքացնելու բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը, եթե այդ ժողովը կայացվել է վերջինիս անցկացման կանոնների խախտումներով: Տնօրենների խորհուրդը օրենքով պարտավոր է գործել ի շահ ընկերության ու նրա բաժնետերերի: Տնօրենների խորհրդի և վերահսկիչ խորհրդի անդամները անձնական պատասխանատվություն են կրում օրենքի խախտման համար, եթե պարտականությունների կատարման մեջ են գտնվում: Բաժնետերերն իրավունք ունեն հայցով ներկայանալ դատարան տնօրենների խորհրդի դեմ: Խորհրդի խնդիրները և պարտականությունները ներառում են հիմնական կապիտալ ծախսումների հսկողությունը, կառավարման ապարատի, տնօրենների խորհրդի անդամների և բաժնետերերի միջև հնարավոր շահերի հակասության, ինչպես նաև ընկերության ակտիվների սխալ կամ ոչ նպատակային օգտագործման մոնիտորինգը և կառավարումը: Օրենքը լուծում է ընկերության հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և համապատասխան վերահսկողության համակարգերի կիրառման ապահովման նրա պարտականությունների մասին:

Կորպորատիվ կառավարման վերաբերյալ օրենսդրության որակը – Հայաստան (2004թ.)



Ծանոթագրություն. յուրաքանչյուր առանցքի սահմանը ներկայացնում է իդեալական ցուցանիշը, օրինակ, համապատասխանությունը ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքներին: Ինչքան «լցված» է ցանցը, այնքան ավելի են երկրի կորպորատիվ կառավարման օրենքները համապատասխանում այս սկզբունքներին:

Աղբյուր. Կորպորատիվ կառավարման ոլորտի ՎՋԵԲ գնահատում, 2004թ. գնահատում

2004թ. Կորպորատիվ կառավարման հատվածի գնահատման մեջ ՎՋԵԲ-ը համեմատեց կորպորատիվ կառավարման հայկական օրենսդրությունը (օրինակ՝ «օրենքը՝ գրավոր տեսքով (տեքստը)», ի հակադրություն այն բանի, թե ինչպես է կիրառվում համապատասխան օրենսդրությունը) ՏՀԶԿ կողմից հրապարակված Կորպորատիվ կառավարման սկզբունքների հետ: Արդյունքները ցույց տվեցին, որ ազգային օրենսդրությունը «հիմնականում համապատասխանում է» միջազգային չափորոշիչներին: Այս դրական ցուցանիշը միջազգային տեխնիկական աջակցության արդյունք է, որը տրամադրվել է ՄՖԿ կողմից: Սակայն չնայած «գրավոր (տեքստի իմաստով)» օրենսդրությունը ընդհանուր առմամբ բավականին հիմնավոր և ընդգրկուն է, դրա արդյունավետությունը մեծ խնդիր է:

2005թ. ՎՋԵԲ-ը անցկացրեց մի հետազոտություն, որի նպատակն էր ստուգել կորպորատիվ կառավարման օրենսդրության արդյունավետությունը (ինչպես է օրենքը աշխատում իրականում): Մշակվեց մի դեպքի ուսումնասիրության մոդել՝ կապված կապակցված կողմերի ներգրավմամբ գործարքների հետ: Այսպիսով ուսումնասիրվեց փոքրամասնական բաժնետիրոջ վիճակը, որը փորձում է ստանալ տեղեկատվություն, որպեսզի հասկանա, կատարվել է արդյոք կապակցված կողմի հետ գործարք, և ինչպես կարելի է փոխհատուցում ստանալ, եթե վնաս է հարուցվել: Այնուհետև չափվել է օրենսդրության արդյունավետությունը ըստ չորս հիմնական փոփոխականների՝ ինստիտուցիոնալ միջավայր, կիրարկելիություն, բարդություն և արագություն: Հետազոտությունը ցույց է տվել լուրջ թերացումներ բոլոր փոփոխականների համար: Այն գործողությունները, որոնք կարող են ձեռնարկել փոքրամասնական բաժնետերերը, բարդ են ու ոչ պարզորոշ: Դժվար է գտնել նախադեպային դաշտ, որն իրավական դրույթների ուղեցույց կհանդիսանար: Այն ժամանակը, որ

անհրաժեշտ է վարույթը իրականացնելու ու ավարտելու համար, որպես կանոն, սահմանափակված է մեկ տարով, սակայն պաշտպանյալի համար շատ հեշտ է ընթացակարգերը հետաձգել, իսկ որոշումների կիրարկելիությունը պրոբլեմատիկ է: Կորպորատիվ հաշվետվողականության վստահելիությունը շատ ցածր է, իսկ պարտադիր աուդիտ իրականացնողների անկախությունը՝ հարցականի տակ: Դատարանների ու դատախազների մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները կորպորատիվ գործերի ասպարեզում սահմանափակ են, իսկ կոռուպցիան մեծ խնդիր է ներկայացնում: Դատական գործերի արձանագրությունները որպես կանոն մատչելի են, սակայն կորպորատիվ դեպքերում կիրարկման նախադեպերի բացակայությունը ամբողջ ընթացակարգը անկանխատեսելի է դարձնում:

Այսպիսով, ՀՀ կառավարությունը պետք է այսուհետ գերակայություն համարի դատարանի և համապատասխան կարգավորող մարմինների կողմից կիրարկման լիազորությունների ընդլայնումը:

Կոնցեսիաներ

Հայաստանը չունի ենթակառուցվածքների, քաղաքային ենթակառուցվածքների և հանրային ծառայություններին վերաբերող կոնցեսիայի մասին առանձին օրենք: Ընդհանուր օրենքները չեն անդրադարձնում կամ կարգավորում կոնցեսիաները, բացի Արտասահմանյան ներդրումների մասին օրենքում ընդհանուր հղման, որը սահմանում է, որ կոնցեսիաները արտասահմանյան ներդրումների տեսակներից մեկն է: Ընդհանուր քաղաքականության մակարդակով Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում անուղղակի հղում է կատարվում իրավական դաշտի բարելավմանը և հանրային ու մասնավոր հատվածների միջև գործընկերության խթանմանը:

Կոնկրետ ոլորտներին վերաբերող երկու օրենքներ են կարգավորում համապատասխանաբար հանքարդյունաբերության և ջրամատակարարման հատվածներում կոնցեսիաները: Հանքային ռեսուրսների հետախուզական և հանքահանման նպատակներով ընդերքի կոնցեսիայի մասին օրենքը («Հանքահանման օրենք»), որն ընդունվել է 2003թ. ապրիլին, հանդիսանում է բավականին մանրամասն օրենսդրական ակտ, որը կարգավորում է համապատասխան իրավունքները, ճյուղում լիցենզիաների և պայմանագրերի տրամադրումը, և որը, ըստ ակնկալիքների, պետք է խթանի ներդրումները ոլորտում:


Ելնելով Հանքահանման օրենքից՝ պետք է ստեղծվի կոնցեսիոն մարմին Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կառուցվածքում: Մարմինը պետք է տրամադրի հանքահանման իրավունքներ և իրականացնի դրանց օգտագործման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև ներկայացնի կառավարությունը: Օրենքի պահանջների իրականացմանը զուգընթաց կառավարությունը նաև հաստատել է օրինակելի պայմանագրերի ձևերը:

Ի լրումն հանքահանման հատվածին՝ գոյություն ունի նաև օրենսդրություն, որը կարգավորում է ջրամատակարարման ոլորտի հարաբերությունները և պայմանագրերը, ներառյալ ակտիվների օգտագործումը և դրանց տրամադրումը որպես գրավ լիզինգային և կոնցեսիոն պայմանագրերի համար: Սակայն այս օրենքները չեն պարունակում հստակ սահմանումներ և կարիք ունեն բարելավման ընտրության ընթացակարգերի առումով (չնայած ընդհանուր կանոնը սահմանում է, որ կոնցեսիաները տրամադրվում են մրցութային/աճուրդային կարգով): Ջրամատակարարման ոլորտում օրինակելի պայմանագրերի ձևերի կիրառումը պարտադիր չէ (ըստ հայեցողության):

Պետական աջակցությունը և ֆինանսական ապահովության և շահերի պաշտպանության հարցերը սահմանվում են ընդհանուր օրենսդրությամբ (Քաղաքացիական օրենսգիրք, Բյուջետային համակարգի մասին օրենք): Չկա որևէ հստակ հղում միջազգային արբիտրաժին, չնայած այն թույլատրվել է սեփականաշնորհման համաձայնագրերում:

Այսպիսով, չնայած որոշ դրական տարրերի, հանրային և մասնավոր հատվածների համագործակցության ընդհանուր իրավական դաշտը պետք է էլ ավելի կատարելագործվի:

Կոնցեսիաների մասին օրենսդրության որակը – Հայաստան (2005թ.)



Ծանոթագրություն. Յուրաքանչյուր առանցքի սահմանը ներկայացնում է իդեալական գնահատական՝ համապատասխանող միջազգային չափորոշիչների, ինչպիսին է օրինակ UNCITRAL «Մասնավոր հիմունքներով ֆինանսավորվող ենթակառուցվածքային ծրագրերի համար օրենսդրության ուղեցույց»։ Ինչքան «լցված» է ցանցը, այնքան կոնցեսիաների մասին տվյալ երկրի օրենսդրությունը մոտ է այդ չափորոշիչներին։

Աղբյուր. Կոնցեսիաների հատվածի ՎՋԵԲ գնահատում 2005թ.


Կոնցեսիաների մասին օրենքների ՎՋԵԲ-ի կողմից վերջերս անցկացված գնահատումը, որի նպատակն էր գնահատել ՎՋԵԲ-ի գործունեության 27 երկրներում համապատասխան ռեժիմները (օրենքների տեքստերը, այլ ոչ թե այն, թե ինչպես են դրանք իրականացվում), բացահայտել է, որ հայկական օրենքները «մասնակիորեն են համապատասխանում» կոնցեսիաների մասին օրենսդրության միջազգայնորեն ընդունված օրենսդրական սկզբունքներին։ Այսպիսով, պետք է մշակվի կոնցեսիաների մասին համապարփակ օրենսդրություն։ Ինչպես երևում է վերը բերված գծապատկերից, հատուկ օրենսդրության բացակայությունը ոչ հստակ սահմանումների և կոնցեսիաները կարգավորող կանոնների սահմանափակ ընդգրկմանը հետ միասին բերում է այս հիմնախնդիրների ուղղությամբ բարեփոխումների իրականացման անհրաժեշտության։

Անվճարունակություն

Սնանկացումը և անվճարունակությունը կարգավորվում են Անվճարունակության մասին ՀՀ օրենքով, որը ընդունվել է 2004թ. (փոփոխվել է) («Անվճարունակության մասին օրենք»)։ Այս օրենքը ստացել է «միջին համապատասխանություն» գնահատական ՎՋԵԲ-ի 2003-04թթ. Հատվածի գնահատման ուսումնասիրությունում միջազգային չափորոշիչների հետ կատարված համեմատությամբ։ Ստորև բերված գծապատկերը արտացոլում է այս ծրագրի ընթացքում հավաքագրված տվյալները և պատկերում է միջազգային

չափորոշիչներին Անվճարունակության մասին օրենքի համապատասխանության
աստիճանը հինգ հիմնական ուղղություններով:

ՀՀ Անվճարունակության մասին օրենքի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին
Անվճարունակության մասին օրենսդրության որակը – Հայաստան (2004թ.)



Ծանոթագրություն. Յուրաքանչյուր առանցքի սահմանը ներկայացնում է իդեալական գնահատական՝ համապատասխանող միջազգային չափորոշիչներին, ինչպիսին է Համաշխարհային բանկի «Անվճարունակության արդյունավետ կառավարման և վարկատուների իրավունքների պաշտպանության ու իրացման համակարգերի սկզբունքներ և ուղեցույցը», UNCITRAL «Անվճարունակության վերաբերյալ օրենսդրության ուղեցույց» աշխատանքային խումբը և այլն: Ինչքան «լիքն է» սարդոստայնը, այնքան տվյալ երկրում անվճարունակության մասին օրենսդրությունը մոտ է այս չափորոշիչներին:

Սղբյուր. Անվճարունակության կարգավորման ոլորտի ՎՋԵԲ գնահատման ծրագիր, 2003թ., 4-րդ եռամսյակ

Ինչպես ցույց է տալիս վերևում բերված գծապատկերը, Անվճարունակության մասին օրենքը բարելավման մեծ կարիք ունի: Մասնավորապես, երրորդ կողմի կողմից պարտատիրոջ ակտիվների՝ անվճարունակության կառավարչին հանձնումը նախատեսող դրույթները հստակ չեն: Իրականում չկա սահմանված պատժամիջոց օրենքը խախտող պարտատերերի կամ ընկերությունների պատասխանատուների նկատմամբ և, տարածաշրջանում գործող շատ օրենքների նման, չկան դրույթներ մի քանի պետություններում կապակցված անվճարունակության դեպքերի կարգավորման համար:

Չնայած անվճարունակության մասին օրենքը պարունակում է որոշ դրական տարրեր, կա որոշակի մտավախություն, որ այդ դրական դրույթները կարող են պատշաճ կերպով չկիրարկվել: ՎՋԵԲ-ի 2004թ. Անվճարունակության մասին իրավական ցուցանիշների ուսումնասիրությունը, որն ուսումնասիրել է անվճարունակության՝ և վարկատուի, և դեբիտորի կողմից նախաձեռնված գործընթացների դեպքերում անվճարունակության ռեժիմների «արդյունավետությունը» (կամ ինչպես է օրենքը կիրառվում գործնականում), ցույց է տվել, որ Անվճարունակության մասին օրենքի գործնական կիրառումը դեբիտորի կողմից կարող է բախվել լուրջ խոչընդոտների ու ոչ տեղին ձևականությունների: Հայաստանը որոշակի իմաստով առանձնահատուկ դիրք է գրավում տարածաշրջանում այն իմաստով, որ այն ունի այնպիսի անվճարունակության ռեժիմ, որի դեպքում վարկատուների համար գործընթացը

ավելի դյուրին է, քան դեբիտորների համար: Որոշ չափով սա արտացոլում է այն փաստը, որ այս ռեժիմը անհամեմատ ավելի բարենպաստ է վարկատուի պահանջների բավարարման, քան վերակազմակերպման համար: Գերադասելի կլիներ ունենալ ավելի հավասարակշռված մոտեցում:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ անվճարունակության կարգավորման ներկա դաշտը չի խրախուսում ըստ էության կենսունակ ընկերությունների ռեստրուկտուրիզացիան: Անհրաժեշտ է իրականացնել ոլորտի բարեփոխումներ և օրենսդրության մեջ, և այն հաստատություններում, որոնք կիրառում են օրենսդրությունը՝ օգնելու ստեղծել իրավական ռեժիմ, որը կփորձի սահմանափակել անվճարունակության արդյունքում առաջացող խախտումները՝ խթանելով իրապես առողջ ընկերությունների «փրկումը»:

Գրավով կամ այլ ապահովմամբ ապահովված գործարքներ

Քաղաքացիական օրենսգիրքը, որն ուժի մեջ մտավ 1999թ., կարգավորում է շարժական և անշարժ գույքի գրավով (երաշխիքով) ապահովված գործարքները: 226-272 հոդվածները նախատեսում են գրավի իրավունք շարժական գույքի նկատմամբ առանց վարկատուին գրավի փոխանցման պահանջի: Այս իրավունքները կարող են գրանցվել կողմերի ցանկության դեպքում (գործնականում խորհուրդ է տրվում):

Որպես գրավ տրամադրվող ակտիվների շրջանակը սահմանափակ է, քանի որ Քաղաքացիական օրենսգիրքը չի թույլատրում գրավի ընդհանուր նկարագրում կամ ակտիվների փոփոխվող համախմբության գրավադրում բացի այն դեպքերից, երբ խոսքը գնում է շրջանառության մեջ ապրանքների գրավադրման մասին (օրինակ՝ ապրանքներ, հումք, նյութեր, կիսապատրաստուքներ և այլն): Այնուամենայնիվ, այս ապրանքների ընդհանուր արժեքը պետք է հաստատուն մնա, և պարտապանը պետք է պահի ակտիվների կազմի կամ բնական ձևի բոլոր փոփոխությունների մասին գրառումներ, ներառյալ դրանց վերամշակման մասին: Եթե պարտապանը (վարկառուն) դա չանի, պարտատերը (վարկատուն) իրավունք կունենա կնքել այդ ապրանքները՝ դրանց հետագա օգտագործումը կանխելու համար: Հետևաբար, պաշարները կամ գույքի այլ տեսակները, որոնք նույնպես ենթակա են մշտական փոփոխությունների (օրինակ՝ սարքավորումների որոշ տեսակներ), գործնականում չեն կարող օգտագործվել որպես պարտքի ապահովման միջոց: Ավելին, այնպիսի ակտիվներ, ինչպիսիք են դեբիտորական պարտքը, նույնպես բացառվում են:


Հիմնական խնդիրը, որին կրեդիտորները բախվում են պարտքի ապահովման ստացման ժամանակ, հրապարակայնության պակասն է: Քանի որ միայն ակտիվների որոշ տեսակների գրավադրումը պետք է գրանցվի (հատկապես տրանսպորտային միջոցների և բաժնետոմսերի), և կողմերը ազատ են որոշելու գրանցել, թե չգրանցել տվյալ գրավադրումը, պարտատերերը (վարկատուները) չեն կարող վստահ լինել, թե տվյալ գույքը նախկինում գրավադրված եղել է, թե ոչ

պարտապանի կողմից: Սա լուրջ մտահոգության առարկա է, քանի որ առաջնահերթությունը կախված չէ գրանցումից, այլ կախված է գրավադրման պայմանագրի ամսաթվից: Գրանցման սահմանափակ գործընթաց է նախատեսված ավտոմեքենաների (Պետավտոտեսչությունում, սակայն պարտադիր չէ, և արդյունավետությունը կասկած է հարուցում) և բաժնետոմսերի (ընկերության Բաժնետերերի ռեեստրում) գրավադրման համար:


Գրավադրման կիրարկումը (գրավի իրացումը) նույնպես ռիսկային է. 2003թ. ՎՁԵԲ-ը անցկացրեց իր գործունեության բոլոր երկրներում ուսումնասիրություն՝ գնահատելով գրավի իրավունքի իրացման (գրավի առարկայի իրացման) արդյունավետությունը: Հայաստանի համար արդյունքները տարածաշրջանի ամենավատ արդյունքներից էին. կրեդիտորները հաճախ հանդիպում են անորոշ և երկար գործընթացի՝ լի դժվարություններով: Չնայած կողմերը տեսականորեն կարող են համաձայնության գալ գրավի իրացման ձևի վերաբերյալ, ինչպիսին է գրավի ուղղակի վաճառքը, փորձը ցույց է տալիս, որ սա շատ հազվադեպ է պատահում: Արդարադատության նախարարության հետ քննարկումները ցույց են տվել, որ դժբախտաբար ներկայումս չկան որևէ պլաններ այս բացթողումները վերացնելու վերաբերյալ:

Գրավի իրավունքի իրացման գործընթացի խոչընդոտներ – Հայաստան (2003թ.)

Շրջանակը (ընդգրկումը)



Գործընթացը



Ծանոթագրություն. Ինքն «լիքն է» ցանցը, այնքան սուր են համապատասխան հատվածում առկա հիմնախնդիրները: «Գործընթաց» մասի գործոնները չափում են կիրարկման դեպքերում տվյալ բացասական պրակտիկայի կիրառման հաճախականությունը: «Շրջանակը (ընդգրկումը)» մասի գործոնները վերաբերում են համակարգի՝ կոնկրետ իրավիճակների կամ դեպքերի կարգավորման կարողությունը:

Աղբյուր. Իրավական դաշտի ցուցանիշների ՎՁԵԲ ուսումնասիրություն, 2003թ.

Անշարժ գույքի գրավի (հիպոթեքի) հետ կապված իրավիճակը ավելի դրական է: 2005թ. հուլիսին «Հայաստանում հիպոթեքային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» համար հիմնավորվածության ուսումնասիրությունը, որն անցկացվել է KfW գերմանական զարգացման բանկի պատվերով, եզրակացրել է, որ առաջնային հիպոթեքային շուկայի համար իրավական դաշտը բավականին ուժեղ է (մասնավորապես համեմատած տարածաշրջանի անցումային շրջանում գտնվող այլ երկրների հետ) առողջ առաջնային շուկայի զարգացման խթանման

համար: Ներկայացվել են հանձնարարականներ, որոնց նպատակն է ամրապնդել կիրարկումը:

Հեռահաղորդակցություն

Հեռահաղորդակցության հատվածը ներկայումս կարգավորվում է Տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարարության կողմից և համապատասխան Հեռահաղորդակցության մասին օրենքի, որն ընդունվել է 1998թ.: Օրենքը հեռահաղորդակցության ծառայությունների ընդհանուր կարգավորումը դնում է նախարարության վրա: Վերջերս ՀՀ Ազգային ժողովը ընդունել է Էլեկտրոնային հաղորդակցության մասին նոր օրենք 2005թ. օգոստոսի նստաշրջանի ընթացքում: Այս նոր օրենքը (որն ուժի մեջ չի մտնելու մինչև 2006թ. հունվարը) փոխարինելու է 1998թ. օրենքը՝ նախատեսելով տարիքների կարգավորման, փոխհարաբերությունների և սուղ ռեսուրսների կառավարման ընթացակարգեր: Չնայած, ինչպես 1998թ. օրենքը, նոր օրենքը նույնպես սահմանում է տվյալ հատվածի համար հատուկ կարգավորող մարմին, ներկայումս նախարարությունը մնում է և որպես քաղաքականություն մշակող, և որպես կարգավորող մարմին:

Արմենթելը՝ երկրում հեղահաղորդակցության ծառայություններ տրամադրողը, ներկայումս մեծ մասով պատկանում է հունական OTE ընկերությանը: Որպես Արմենթելի բաժնետոմսերի ձեռքբերման մի մաս՝ 1998թ. OTE ստացավ հեռահաղորդակցության ոլորտի համարյա բոլոր ծառայությունների մատուցման 15 տարվա մենաշնորհ, ներառյալ ֆիքսված հեռախոսակապի և բջջային հեռախոսակապի ծառայությունները (մինչև 2013թ.): Շատերն այս բացառիկ իրավունքները չափազանց համարեցին, և 1999թ. դրանք ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից հայտարարվեցին սահմանադրական հիմքեր չունեցող՝ նախատեսելով այդ իրավիճակի պահպանումը մինչև 2004թ.: Չնայած Արմենթելի՝ ֆիքսված կապի գծով բացառիկ իրավունքները մնում են անփոփոխ, կառավարությունը միջազգային ճնշման պայմաններում (ներառյալ ՎՋԵԲ-ի կողմից) Արմենթելի՝ բջջային հեռախոսակապի ասպարեզում մենաշնորհի ժամկետը նվազեցրեց մինչև հինգ տարվա՝ լրանալով 2003թ.:

Արմենթելի կողմից բջջային հեռախոսակապի ասպարեզում բացառիկությունը կորցնելուց հետո հայտնվեց նրա մրցակիցը՝ Վիվասել ընկերությունը՝ երկրորդ GSM լիցենզավորված օպերատորը: Վիվասելը շուկա մտավ 2005թ. հուլիսին, և չնայած երկու միցակիցների միջև կարելի էր ակնկալել գնային ակտիվ մրցակցություն, որոշ ժամանակ կպահանջվի, որ շուկայում երկրորդ օպերատորի ազդեցությունը ավելի զգալի դառնա:

Որպես Արմենթելի բաժնետոմսերի ձեռքբերման գործարքով նախատեսված պարտավորություն՝ OTE ընկերությունը որոշակի հանձնառություններ է ստանձնել՝ ցանցի զարգացման ու ընդլայնման մեջ զգալի ներդրումներ անելու ուղղությամբ: Այս հանձնառությունների պատշաճ իրականացման վերաբերյալ տարբեր կարծիքները, ինչպես նաև բջջային կապի ասպարեզում բացառիկ իրավունքների ժամկետի կարճեցումը բերել են երկարաժամկետ վեճերի կառավարության և Արմենթելի/OTE ընկերության միջև՝ զգալի ազդեցություն

ունենալով ոլորտի զարգացման վրա: Ֆիքսված կապի ծածկույթը, որը կազմում է 16.9 տոկոս, և բջջային կապով ծածկույթը, որը կազմում է 5.7 տոկոս (2004թ. վերջի դրությամբ), բերում են այն կարծիքին, որ այդ շարունակվող վեճերը շարունակելու են արգելակել ոլորտի զարգացման և աճի միտումները:

Առաջ նայելով կարելի է նշել, որ չնայած մրցակցությունը հավանաբար ոլորտին կտա երկար սպասված զարգացման նոր տեմպեր, կառավարության և Արմենթել/ՕՏԷ ընկերության միջև վեճերի լուծումը հանդիսանում է կարևորագույն նախադրյալ ոլորտի աճի ու զարգացման համար: Այս շուկայի վաղ ու լիակատար ազատականացումը նման աճի ու զարգացման համար կենսական նշանակություն կունենա: Դժբախտաբար Էլեկտրոնային հաղորդակցության մասին նոր օրենքը չի նախատեսում նման ազատականացում: Կառավարությունը պետք է ոլորտի գետարակայություն համարի ազատականացումը և մշակի ու հրապարակի կոնկրետ ծրագրեր՝ հնարավորինս արագ անցնելու ոլորտի լիակատար ազատականացմանը: Նման մի այլ կարևորագույն խնդիր է ոլորտի կարգավորման ու քաղաքականություն մշակման գործառնությունների տարանջատումը (բաժանումը): Նման մարմնի բացակայությունը մեծ ազդեցություն ունի ոլորտի զարգացման ու ներդրողների վստահության մակարդակի վրա: Նման մարմինը կտար այն ինստիտուցիոնալ գործիքները, որոնք հնարավորություն կտային գործնականում իրականացնել բարեփոխումները: Չնայած 1998թ. օրենքը և դրա նոր տարբերակը՝ ընդունված 2005թ., սահմանում են ոլորտի համար հատուկ կարգավորող մարմին, կառավարությունը պետք է իմաստալից քայլեր անի որպեսզի ոլորտը կարգավորող այդ անկախ մարմինը իրականություն դառնա:

Հավելված 6: Որոշ տնտեսական ցուցանիշներ

	1999	2000	2001	2002	2003	2004	2005
						Գնահատական	Կանխատեսում
Արտադրություն (արդյունք) և ծախսումներ	<i>(Իրական մեծությունների տոկոսային փոփոխություն)</i>						
ՀՆԱ	3.3	5.9	9.6	13.2	13.9	10.1	11.0
Մասնավոր սպառում	1.4	8.3	7.5	9.0	6.9	10.2	
Պետական սպառում	1.3	2.8	4.3	2.2	14.1	16.1	
Համախառն ներդրումներ	0.6	16.2	5.3	33.1	33.7	12.4	
Ապրանքների և ծառայությունների արտահանում	6.5	16.6	20.8	26.3	23.2	3.7	
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-8.1	5.1	1.2	9.0	31.0	3.0	
Արդյունաբերական համախառն արտադրանք	5.2	6.5	3.8	14.4	15.3	2.1	
Գյուղատնտեսական համախառն արտադրանք	1.3	-2.4	11.6	4.5	4.0	14.5	
Զբաղվածություն	<i>(Տոկոսային փոփոխություն)</i>						
Աշխատուժ (տ/վերջի դր.)	-0.9	-1.0	-2.5	-12.2	-0.6	-0.5	
Զբաղվածություն (տ/վերջի դր.)	-2.9	-1.6	-1.0	-12.5	0.5	-0.1	
	<i>(Աշխատուժի տոկոս)</i>						
Գործազրկություն (տարեկան միջին) ¹	11.2	11.7	10.4	10.8	10.1	9.4	
Գներ և աշխատավարձեր	<i>(Տոկոսային փոփոխություն)</i>						
Սպառողական գներ (տարեկան միջին)	0.7	-0.8	3.2	1.2	4.7	6.9	0.7
Սպառողական գներ (տ/վերջի դրույթ.)	2.1	0.4	3.0	2.0	8.6	1.9	0.2
Արտադրողի գներ (տարեկան միջին)	2.3	0.8	-0.4	2.5	5.9	21.7	
Արտադրողի գներ (տ/վերջի դրույթ.)	3.8	0.4	-3.6	0.9	21.1	25.3	
Միջին համախառն ամսեկան եկամուտ (տարեկան միջին)	21.8	15.0	10.7	12.2	21.7	22.8	
Պետական (հարկաբյուջետային) հատված²	<i>(ՀՆԱ-ի տոկոս)</i>						
Ընդհանուր պետբյուջեի հաշվեկշիռ	-7.2	-6.4	-3.8	-0.4	-1.1	-1.7	-2.4
Ընդհանուր պետբյուջեի ծախսեր	30.1	25.9	20.9	19.3	18.9	17.3	
Ընդհանուր պետական պարտք	44.4	44.0	41.5	45.4	40.5	30.6	
Դրամավարկային հատված	<i>(Տոկոսային փոփոխություն)</i>						
Դրամական զանգված (M2, տ/վերջի դր.)	13.6	39.7	4.3	34.0	10.4	22.3	
Ներքին վարկավորում	3.7	12.3	-9.8	-8.1	-9.6	18.6	
	<i>(ՀՆԱ-ի տոկոս)</i>						
Դրամական զանգված (M2, տ/վերջի դր.)	11.0	14.7	13.4	15.6	14.4	15.1	
Տոկոսադրույքներ և փոխարժեքներ	<i>(Տոկոս տարեկան, տ/վերջի դրույթամբ)</i>						
Վերաֆինանսավորման դրույք	43.0	25.0	15.0	13.5	7.0	3.8	
Դրամական շուկայի տոկոսադրույք ³	23.7	18.6	19.4	12.3	7.5	3.1	
Ավանդային տոկոսադրույք ⁴	27.4	18.1	14.9	9.5	6.9	4.4	
Վարկային տոկոսադրույք ⁴	34.5	28.6	27.7	23.4	20.8	18.2	
	<i>(Դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)</i>						

¹ Գրանցված գործազուրկներ: Ոչ պաշտոնական գնահատականները մատնանշում են գործազրկության զգալիորեն ավելի բարձր մակարդակ:

² Միայն պետբյուջե (առանց տեղական համայնքների բյուջեների)

³ Մեկ ամսից մինչև երեք ամիս մարման ժամկետայնությամբ ՊԿՊ-ների միջին

⁴ 15 օրից մինչև 1 տարուց պակաս մարման ժամկետայնությունների դրույքների կշռված միջին

Փոխարժեք (տ/վերջի դրուք.)	523.8	552.2	561.8	584.9	566.0	486.3
Փոխարժեք (տարեկան միջին)	535.1	539.5	555.1	573.4	578.8	533.5

Արտաքին հատված

(Մլն. ԱՄՆ դոլար)

Ընթացիկ հաշիվ	-307	-277	-211	-149	-191	-162	-178
Առևտրային հաշվեկշիռ	-474	-463	-431	-369	-434	-458	-554
Ապրանքների արտահանում	247	310	342	514	696	738	904
Ապրանքների ներմուծում	721	773	773	883	1130	1196	1458
Արտաքին ուղղակի ներդրումներ, զուտ	122	104	70	111	121	217	255
Համախառն պահուստներ, առանց ոսկու (տ/վերջի դրուք.)	305	314	329	430	502	547	
Արտաքին պարտք	870	860	906	1026	1098	1183	
	<i>(Ամիսների ապրանքների և ծառայությունների ներմուծում)</i>						
Համախառն պահուստներ, առանց ոսկու (տ/վերջի դրուք.)	4.0	3.9	4.0	4.7	4.3	4.3	
	<i>(Ապրանքների և ծառայությունների արտահանման տոկոս)</i>						
Պարտքի սպասարկում	14.3	10.7	9.7	10.1	11.4	7.2	

Հիմնական ցուցանիշներ

(Ըստ նշված միավորների)

Բնակչություն (տ/վերջի դր., միլիոն)	3.1	3.3	3.2	3.2	3.2	3.2	
ՀՆԱ (մլրդ. դրամ)	987	1031	1176	1362	1623	1893	2168
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	590	582	659	740	873	1104	
Արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում (տոկոս)	21.2	21.9	20.5	18.9	19.9	19.7	
Գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում (տոկոս)	30.8	27.0	24.9	23.4	21.3	22.5	
Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ (տոկոս)	-16.6	-14.5	-10.0	-6.3	-6.8	-4.6	-3.7
Արտաքին պարտք – պահուստներ (մլն. ԱՄՆ դոլար)	565	546	577	596	596	636	
Արտաքին պարտք / ՀՆԱ (տոկոս)	47.1	45.0	42.8	43.2	39.1	33.3	
Արտաքին պարտք / ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոս)	227.1	192.4	171.3	147.0	121.6	120.1	

Հավելված 7. Տեխնիկական համագործակցության ծրագրեր

Ծրագրի համարը	TC (Տեխ. համագործ.) OPID (Գործ. համար)	Ծրագրի անվանումը	Կոր.	Նախատեսվող գումար, եվրո	Հատկացված գումար, եվրո	Հաստատման ամսաթիվ	Ներկա փուլը	Գործառնության ղեկավար	Հատված	Թիմ	Խումբ	Կապված ներդրման հետ
ՀԱՅԱՍՏԱՆ												
AUS-1997-05-02	3675	Պուշկինի լեռնանցքի վերանորոգում	AUS	46,230	46,230	15/05/97	Փակված	Օ'Գրեյի Լ.	Շինարարություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր /Տրանսպորտ	Ենթակառուցվածքներ	Այո
CA3F-2002-09-08	29733	Հայկական պղնձի ծրագիր – շրջակա միջավայրի պաշտպանության աուդիտ	CA3F	24,425	24,425	19/09/02	Փակված	Սյունեթ Հ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / ՀԱԵԿ կենտրոնական գրասենյակ	ՀԱԵԿ	Այո
EC-1993-08-32	1560	Հրազդանի ՊՇԵԿ V բլոկ – ֆինանսական համակարգեր և պլանավորում	ECT	198,723	198,723	20/08/93	Փակված	Հերբելոտ Օ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր /Էներգետիկա	Էներգետիկա	Այո
EC-1993-08-33	1560	Հրազդանի ՊՇԵԿ V բլոկ – արտադրական տեղամասի պլանավորում	ECT	444,319	444,319	20/08/93	Փակված	Հերբելոտ Օ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր /Էներգետիկա	Էներգետիկա	Այո
EC-1993-08-34	1560	Հրազդանի ՊՇԵԿ V բլոկ - էներգակիրների մատակարարման պայմանագրերի կնքում	ECT	45,185	45,185	20/08/93	Փակված	Հերբելոտ Օ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր /Էներգետիկա	Էներգետիկա	Այո
ECAR-2002-08-01F	29368	ԿԽԾ ծրագիրը Հայաստանում	ECAR	411,035	411,035	30/08/02	Փակված	ՄըքՖի Ջ.	Արտադրություն	PE/ESE/TurnAround Management խումբ	ՀԱԵԿ	Ոչ
ECAR-2002-10-03F	29367	ԳԽԾ ծրագիրը Հայաստանում	ECAR	925,459	925,459	07/10/02	Փակված	ՄըքՖի Ջ.	Արտադրություն	PE/ESE/TurnAround Management խումբ	ՀԱԵԿ	Ոչ
ECT99-99-09-10	6123	Հեռահաղորդակցության կարգավորման և զարգացման ծրագիր	ECT	131,744	131,744	02/09/99	Փակված	Մոֆատ Փ.	Հեռահաղորդակցություն	Ընդհանուր խորհրդատվություն/Իրավական անցումային գործընթաց	Ոչ բանկային	Այո
EIPF02-2005-05-01	34755	Հայէկոնոմբանկ – Ինստիտուցիոնալ ամրապնդում և հզորացում	EIPF	495,650	34,999	06/05/05	Հատկացվում է	Բաբայան Ա.	Ֆինանսներ, Բիզնես	Ն/Երևան (Հայաստան)	ՀԱԵԿ	Այո
ETCF-2005-08-25	35484	Հայաստանի միկրովարկավորման ծրագիր	ETCF	300,626	0	28/08/05	Հաստատված	Թեյլլըր Մ.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր /Փոքր ձեռնարկությունների հետ աշխատանքի խումբ	Փոխնախագահի տեղակալ	Այո

FIN-1996-06-04	3450	Ճանապարհների (նայրուղիների) պահպանման և վերանորոգման (վերականգնման) ծրագրի պատրաստում	FIN	49,955	49,955	06/06/96	Փակված	Օ'Գրեյի I.	Շինարարություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Տրանսպորտ	Ենթակառուցվածքներ	Այո
FRB-1994-07-04	1593	Մասնավոր ներդրումային ֆինանսական կորպորացիա	FRB	149,348	149,348	20/07/94	Փակված	Կելստրոմ Ս.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ֆինանսական հաստատություններ	Ֆինանսական հաստատություններ	Այո
FRB-1995-09-07	2736	Հայաստանի Մասնավոր ներդրումային ֆինանսական ընկերություն – հովանավորող (ֆինանսավորող) կողմ(եր)ի բացահայտում	FRB	10,983	10,983	22/08/95	Փակված	Կելստրոմ Ս.	Համայնքային / սոցիալական ծառայություններ	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի գրասենյակ	Ռուսաստան և Կենտրոնական Ասիա	Այո
GER-1996-11-07	3967	Հրազդանի ՊՇԵԿ 5-րդ բլոկի տեխնիկական գնահատում	GER	102,033	102,033	19/11/96	Փակված	Քուլլի Բ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Բուլղարիա/Ալբանիա/Մակեդոնիա/Սլովենիա/Հայաստան/Վրաստան	ՀԱԵԿ	Այո
GER-1997-04-06	4220	Հրազդանի ՊՇԵԿ 5-րդ բլոկի մրցույթին աջակցություն	GER	177,761	177,761	01/04/97	Փակված	Քուլլի Բ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Էներգետիկա	Էներգետիկա	Այո
HOL-1993-11-19	1393	Երևանի Զվարթնոց օդանավակայանի բեռնային համալիրի գնահատում	HOL	18,995	18,995	01/11/93	Փակված	Ղամասկոս Ա.	Տրանսպորտ, Պահեստավորում	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Տրանսպորտ	Ենթակառուցվածքներ	Այո
HOL-1994-07-13	1727	Էլեկտրաէներգիայի ածուրդային վաճառք	HOL	13,712	13,712	15/07/94	Փակված	Հերբելոտ Օ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Էներգետիկա	Էներգետիկա	Այո
HOL-1996-03-05	3029	Մեծածախ շուկայի ծրագրի կառավարման գրասենյակ – կարճաժամկետ աջակցություն	HOL	25,811	25,811	18/03/96	Փակված	Մեթեթալ Գ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Այո
HOL-2005-06-05	4526	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ծրագրային պայմանագիր – Թամարա Ֆրուտ	HOL	27,599	0	13/06/05	Հաստատված	Լափինսկաս Դ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Ոչ
IRL-2004-03-01	32288	Հայաստան. Առևտրի ֆինանսավորման խորհրդատվական ծառայություններ	IRL	70,500	45,295	31/03/04	Հատկացվում է	Պոլդասս Ու.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ֆինանսական հաստատություններ	Ֆինանսական հաստատություններ	Այո
JAP-1994-09-31	1456	Սննդամթերքի բաշխում և շուկայավարում (II և III փուլեր)	JAP	181,435	181,435	01/09/94	Փակված	Մեթեթալ Գ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Այո
JAP-1996-08-21	3029	Մեծածախ շուկա - ծրագրի կառավարման գրասենյակ	JAP	331,973	331,973	01/08/96	Փակված	Մեթեթալ Գ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Այո
JAP-1998-08-26	5051	ՓՄՁ վարկային զիծ (ՀՀ Կենտրոնական բանկ)	JAP	735,190	735,190	20/08/98	Փակված	Մըրֆի Ջ.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ֆինանսական հաստատություններ	Ֆինանսական հաստատություններ	Այո

JAP-2001-05-08	19062	Հայաստանի ինստիտուցիոնալ ամրապնդման և զարգացման ծրագիր	JAP	498,260	498,260	01/05/01	Փակված	Թեյլոր Ս.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ֆինանսական հաստատություններ	Ֆինանսական հաստատություններ	Այո
NLT-2003-09-03	5397	ՈՒՆԾ – Մարաիկ ընկերության՝ իրավական դաշտի պահանջներին համապատասխանության (իրավական) ուսումնասիրություն	NLT	7,560	7,560	30/09/03	Փակված	Մյունեթ Հ.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Մասնավոր բաժնեմասնակցային ֆինանսավորում	Ֆինանսական հաստատություններ	Այո
SWE-1993-11-12	957	Երևանի Ջվարթնոց օդանավակայանի բեռնային համալիրի գնահատում	SWE	19,958	19,958	01/11/93	Փակված	Ղանասկոս Ա.	Տրանսպորտ, Պահեստավորում	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Տրանսպորտ	Ենթակառուցվածքներ	Այո
SWEF-2002-07-04	4526	Հայաստանի փայտի արտադրության և վերամշակման ճյուղի գնահատում	SWE2	16,224	15,086	31/07/02	Հատկացվում է	Գուրդին Բ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Ոչ
SWI-1997-03-02	4219	Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ բլոկի կոնսերվացիայի միջոցառումների իրականացման աջակցություն	SWI	83,412	83,412	05/03/97	Փակված	Քոպլի Բ.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Բուլղարիա/Ալբանիա/Մակեդոնիա/Սլովենիա/Հայաստան/Վրաստան	ՀԱԵԿ	Այո
SWI-1998-07-02	5424	Հրազդանի ՊՇԷԿ 5-րդ բլոկի սեփականաշնորհման ծրագիր	SWI	115,895	115,895	07/07/98	Փակված	Փիթեր Ե.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Էներգետիկա	Էներգետիկա	Այո
SWI-2003-11-13	5397	Շեն կոնցեռնի տեխնիկական ուսումնասիրություն – մաս Բ	SWI	15,466	15,466	12/11/03	Փակված	Բարխուդարյան Ա.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Մասնավոր բաժնետիրական ֆինանսավորում	Ֆինանսական հաստատություններ	Այո
SWI-2004-08-11	5397	Շեն կոնցեռնի իրավական ուսումնասիրություն	SWI	13,000	13,000	12/08/04	Փակված	Մուրիսեպ Ու.	Ֆինանսներ, Բիզնես	Ն/Երևան (Հայաստան)	ՀԱԵԿ	Այո
SWI-2004-08-12	5397	Շեն կոնցեռնի տեխնիկական ուսումնասիրության շարունակություն	SWI	3,750	3,750	12/08/04	Փակված	Մուրիսեպ Ու.	Ֆինանսներ, Բիզնես	Ն/Երևան (Հայաստան)	ՀԱԵԿ	Այո
SWI-2004-08-13	5397	Շեն կոնցեռնի՝ շրջակա միջավայրի պաշտպանության պահանջներին բավարարման և համապատասխանության ուսումնասիրություն	SWI	6,000	6,000	26/08/04	Փակված	Մուրիսեպ Ու.	Ֆինանսներ, Բիզնես	Ն/Երևան (Հայաստան)	ՀԱԵԿ	Այո
TAI-1994-05-02	1456	Սննդամթերքի բաշխում և շուկայավարում (I փուլ)	TAI	11,352	11,352	01/05/94	Փակված	Էլլինգ Ս.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Այո
TCS-2002-07-02	4526	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ծրագրային համաձայնագիր	TCS	5,599	5,599	30/07/02	Փակված	Գուրդին Բ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Ոչ
TCS-2003-11-07	5397	Շեն կոնցեռնի տեխնիկական ուսումնասիրություն – մաս Ա	TCS	13,745	13,745	10/11/03	Փակված	Բարխուդարյան Ա.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Մասնավոր բաժնետիրական	Ֆինանսական հաստատություններ	Այո

										Ֆինանսավորում		
UKB-1997-01-05	4169	Մեծածախ շուկայի ծրագիր	UKB	28,873	28,873	01/01/97	Փակված	Մեթթալ Գ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ագրոբիզնես	Արդյունաբերության կոնկրետ ճյուղեր	Այո
UKB-1997-02-08	4142	Հայաստան, ՓՄՁ վարկային գիծ	UKB	51,687	51,687	12/02/97	Փակված	Օկոլիե-Բուրբակ Թ.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Ֆինանսական հաստատություններ	Ֆինանսական հաստատություններ	Այո
UKD-1999-10-21F	8411	Հայաստանի էլեկտրական բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման իրավական ուսումնասիրություն	UKD	146,737	146,737	13/09/99	Փակված	Փարշաղ Ն.	Էներգետիկա	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / Էներգետիկա	Էներգետիկա	Այո
UKD-2003-03-02	5397	Մարալիկ ընկերության ֆինանսական ուսումնասիրություն	UKD	3,900	3,900	17/03/03	Փակված	Սյունթ Հ.	Ֆինանսներ, Բիզնես	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / ՀԱԵԿ կենտրոնական գրասենյակ	ՀԱԵԿ	Այո
UKD-2005-08-06	35620	Հայաստանի Գեղարքունիք և Տավուշ մարզերում գործարար զարգացման ծառայություններ մատուցողների կարողությունների զարգացման վերաբերյալ հետազոտություն	UKD	30,000	11,882	31/08/05	Հատկացվում է	ՄըքՖի Զ.	Արտադրություն	Ճյուղ. խումբ / Գործառն. թիմեր / ԿԽԾ/ԳԽԾ ծրագիր	ՀԱԵԿ	Ոչ
Ընդամենը՝ երկրի համար: Գումարը եվրոյով.				5,990,108	5,156,771							
Ընդամենը զեկուցված: Գումար եվրոյով.				5,990,108	5,156,771							
Ծրագրերի թիվը.						41						

Հավելված 8: Հայաստանի քարտեզը

